

Հ. Ռ. ԻՍՐԱԵԼՅԱՆ

ՊԱՇՏԱՄՈՒՔՆ
ՈՒ ՀԱՎԱՏԱԼԻՔԸ
ՈՒԾ ԲԲՈՆՉԵԴԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ





АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

А. Р. ИСРАЕЛЯН

КУЛЬТ И ВЕРОВАНИЯ В АРМЕНИИ
В ЭПОХУ ПОЗДНЕЙ БРОНЗЫ

(ПО АРХЕОЛОГИЧЕСКИМ МАТЕРИАЛАМ)



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1973


ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԽԵՍԻՏԱԿ

Հ. Ռ. Ի Ս Ր Ա Յ Ե Լ Յ Ա Ն

ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆ ՈՒ ՀԱՎԱՏԱԼԻՔԸ
ՈՒՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Ըստ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ)

A 51164



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԿՐԵՊԱՆ 1973

ՄԵԿՆԱՐԵԱՆՎԱՃ են Հայկական լեռնաշխարհի XIII—VI դդ.
(մթա.) պատկանող կիրառական արվեստի հուշարձանները,
որոնք լույս են սփռում տեղաբնիկների հոգևոր կյանքի տար-
րեր գրանուրումների վրա՝ տոհմատիրական կարգերի քայլայ-
ման և պետականության ստեղծման ժամանակաշրջանում։

Աշխատության մեջ ուսումնասիրվող նյութական մշակույթի
հուշարձանների հիման վրա բացահայտված են Հայկական լեռ-
նաշխարհի բնակիչների կուլտուրական փոխադարձ կապերը
առաջավոր ասիական երկրների հետ։

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կիրառական արվեստի, հավատալիքների ու պաշտամունքների ուշ բրոնզեղարյան ժամանակաշրջանի զարգացման ընդհանուր ուսումնասիրությանը նվիրված ներկա աշխատության հիմքում ընկած են Հայաստանի պատմության պետական թանգարանի, գավառագիտական թանգարանների ֆոնդերում պահպանված բրոնզե գոտիները, զանազան արձանիկները, քարից ու կավից պատրաստված պաշտամունքային մի շարք առարկաներ, խեցեղենի զարդանախշեր բազմաթիվ նմուշներ, որոնք կրոնա-պաշտամունքային իմաստունեն:

Լալվարի դամրարանագաշտերում հայտնարերված կիրառական արվեստի նյութերը, որոնք ժամանակին տեղափոխվել են Հունարի թանգարան, լուսարաննել ենք, և լինելով Ժ. դր-Մորդանի հրատարակությունից¹: Օգտագործել ենք նաև նախասովետական Հայաստանի հնագիտական հուշարձաններից հայտնարերից հայտնարերված և այժմ Սովորական Միության տարրեր թանգարաններում գտնվող (Վրաստանի պատմության պետական թանգարան, Աղբքաշանի պատմության պետական թանգարան, Պետական էրմիտաժ) մեր աշխատանքյանը վերաբերող արժեքավոր նյութերը:

Սրանց մի զգալի մասը հրատարակված է նախախորհրդային և մեր օրերի մասնագիտական պարբերական գրականության և ուսումնասիրությունների էջերում, հաճախ առանց մանրակրկիտ ուսումնասիրության և վերլուծության: Այդպիսի հրատարակություններից է ֆրանսիացի աշխարհահռչակ արևելագետ ժակ դր-Մորդանի վերը նշված աշխատությունը, որտեղ զետեղված են ոչ միայն Ախթալայից և Մուսիկերիից գտնված որսորդությանն ու արևի պաշ-

¹ J. de Morgan, Mission scientifique au Caucase, I, Paris, 1889.

տամունքին վերաբերող սյուժեներ կրող բրոնզե գոտիները, այլև ծարիդից և ուրիշ մետաղներից պատրաստված կախիկները, կավակերտ, խիստ մողելավորված և կենդանակերպ պաշտամունքային խեցեղենը, որոնք գրեթե առաջիններն էին հայ հնագիտության մեջ։ Պաշտամունքային հետաքրքիր առարկաներ է մեկնարանել նաև ոռուսական հնագիտական ընկերության նշանավոր գործիչ Ա. Ա. Խվանովսկիի²։ Նախասովիտական շրջանին են վերաբերում նաև Սևանա լճի ավաղանում Երվանդ Լալայանի կատարած հետաքրքրից պեղումները, որոնց ընթացքում հայտնաբերվել են ուշ բրոնզեղարյան արվեստին ու պաշտամունքին վերաբերող բազմազան հարուստ նյութեր³։ Նրա աշխատության մեջ, սակայն, բացակայում են ոչ միայն մեկնարանություններն ու մասնագիտական խոր ուսումնասիրությունը, այլև պեղումների ընթացքին վերաբերող շատ կարևոր և անհրաժեշտ տեղեկություններ։ Այսուամենայնիվ, Ե. Լալայանի այս գրքույկը ամփոփում է արժեքավոր նյութեր, որոնք մենք օգտագործել ենք։

Սովորական շրջանի կարևորագույն հրատարակություններից է Բ. Ա. Կովֆտինի հանրածանոթ աշխատությունը⁴, որը շնայած զիտական խոր ու բազմակողմանի ուսումնասիրություն է, սակայն յեզ հետաքրքրող նյութերը հրատարակված են առանց մեկնարանությունների։

Այս նյութերի նախնական ուսումնասիրությունից հնագետը երրեմն թերի կամ շարդարացվող եղրակացությունների է հանգել, մանավանդ Անդրկովկասի առանձին մարզերի արվեստի հուշարձանների տարրեր ակունքներից ծագելու մասին, տեսակետ, որի քննադատությանը ժամանակին անդրադարձել է Հ. Մարտիրոսյանը⁵։

Հետեւելով Ռ. Վիրխովի այն տեսակետին, որ Գետարեկի, Ղարաբաղի և Ժամանակակից Արևմտյան Աղքարեջանի բրոնզե գոտիները շեն կազմվում Հայաստանի նյութերի հետ, Բ. Ա. Կովֆտինը, ըստ էության, ձգտում էր ժխտել Հայկական լեռնաշխարհի բրոնզեղար-

2 А. А. Ивановский, По Закавказью. Материалы по археологии Кавказа, вып. VI, 1896.

3 Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1930։

4 Б. А. Күфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941.

5 А. А. Мартirosyan, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, стр. 136, 137, 159.

յան լոկալ օջախների միջև գոյություն ունեցող հազարամյա-
տրադիցիոն կապերը:

Հայկական լեռնաշխարհի արվեստին և պաշտամունքին վե-
րաբերող բազմաթիվ նյութեր լուսաբանվել են Բ. Բ. Պիոտրովսկու⁵
և Հ. Մարտիրոսյանի⁶, Ս. Եսայանի, ինչպես նաև այլ հեղինակնե-
րի աշխատություններում ու հոդվածներում, որոնք տպագրվել են
ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտություն-
ների «Տեղեկագրի», «Պատմա-բանասիրական հանդեսի», «Со-
ветская археология»-ի, «Краткие сообщения Института ма-
териальной культуры» և գիտա-հանրամատչելի մամուլի էջերում:

Հետաքրքրի նյութեր է հրատարակել Հ. Մնացականյանը Սեա-
նի, Բասարգելարի, Զանգեզուրի և այլ շրջաններից⁷:

Առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հյու-
սիսային Կովկասում Բ. Տեխովի՝ Կազբեկի լեռնանցքի մոտ Տիֆ գյու-
ղում հայտնաբերած անդրկովկասյան և ուրարտական տիպի բրոն-
զե գոտիները⁸: Այս նյութերում առկա են գառնում Հայկական լեռ-
նաշխարհի մշակութային կապերը հյուսիսային շրջանների հետ-
վերը թվարկված ուշ բրոնզեդարյան արվեստի ու պաշտամունքի
հուշարձաններին են նվիրված մի քանի ուշագրավ ուսումնասիրու-
թյուններ: Ժամանակագրական առումով սրանցից առաջինը
Բ. Վիրիսովի գերմաններին աշխատությունն է, որը 1895 թ. հրատա-
րակվել է նաև հայերեն թարգմանությամբ⁹:

Այս հոդվածում Վիրիսովը հրատարակել է Բելքի կողմից Քա-
լարենտում հայտնաբերված շափականց հետաքրքիր պատկերա-
գարդ գոտիները: Մորդանի նյութի հիման վրա նաև աշխատել է ժա-
մանակագրական դասակարգման ենթարկել Քալարենտի հնագի-

⁵ Б. Б. Пиотровский, Археология Закавказья. История и культура Урарту.

⁷ А. А. Мартirosyan, Город Тейшебанин. Армения в эпоху бронзы и раннего железа.

⁸ А. А. Мнацаканян, Находки предметов бронзового века в селении Толорс (в Зантизуре), Краткие сообщения Ин-та материальной культуры, 1954; «Раскопки курганов на побережье оз. Севан» в 1956, СА, № 2, 1957; «Археологические находки в селении Басаргечар», Краткие сообщения Ин-та истории материальной культуры, 1955; «Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан», СА, № 2, 1960; «Лчашенские курганы», Краткие сообщения, 1961, вып. 85.

⁹ Б. Техов, Раскопки Тлийского могильника, «Сов. археология», 1966, № 1.

¹⁰ Բ. Վիրիսով, Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, «Ազգա-
գրական հանդես», № 1, 1895:

տական նյութը, կենդանաբանական հատուկ անալիզով ցույց է տվել Հայկական լեռնաշխարհի հետ կապված կենդանիների տարբեր տեսակները, ինչպես և ֆանտաստիկ էակների պատկերների առկայությունը: Նա նյութի համեմատական ուսումնասիրությունից ենելով այն կարծիքն է հայտնում, որ Լալվարում հայտնարերոված գոտիներն իրենց կատարելությամբ զիջում են Քալաքենտի և Խոչալիի գոտիներին, այսինքն՝ գրանք նշում են տարբեր ցեղերի արվեստների տարբերությունը: Մակայն, ինչպես նկատել է Հ. Մարտիրոսյանը, Վիրխովի այս տեսակետը բննադատության չի զիմանում, որովհետև ողջ Հայկական լեռնաշխարհում զիտվում է նյութական և հոգևոր մշակույթի զարգացման հզոր միասնություն: Խոյեմրերյանի, Զանգեզուրի, Խաչըրուլազի (Լեռնային Ղարաբաղ), Սևանի ավազանի, Լալվարի (Ախմալա Մուսիերի) գոտիների և արվեստի այլ հուշարձանների ուսումնասիրությունից պարզ երևում է, որ վերոհիշյալները մեծ ընդհանրություններ ունեն և կատարված են նույն ոճով, նույն բովանդակությամբ:

Վիրխովից հետո Քալաքենտի գոտիներին անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ, սակայն նրանց մեկնաբանություններում էական փոփոխություններ չկան, եթե հաշվի առնենք նույնիսկ վերշերս աղբբեջաններեն հրատարակված աշխատությունը¹¹:

Անդրկովկասայան բրոնզե գոտիների, արվեստի ու պաշտամունքի բազմաթիվ առարկաների մեկնաբանության և բրոնզեդարյան կրոնի ընդհանուր ուսումնասիրության ուղղությամբ աշքի է ընկնում Բ. Բ. Պիոտրովսկու կոնսպեկտիվ աշխատությունը, որի մեջ հատուկ գլուխ է նվիրված բրոնզե դարի պաշտամունքներին ու կրոնին¹²:

Գրքում զամբարանային խեցեղենի զարդանախշերի ու ոճավորված կենդանիների ուսումնասիրության հիման վրա բացահայտված են ժամանակի կրոնա-պաշտամունքային պատկերացումներն ու ըմբռնումները, նրանց իմաստը:

Քննարկելով որսի տեսարանները, նա այն ճիշտ հետևությունն է անում, որ որսորդությունը կապված է եղել աստրալ պատկերացումների հետ: Երկինքը և երկնային լուսատուները կախարդական ազդեցություն էին զործում որսի հաջողության վրա: Սկզբնական

11 Дж. А. Халилов, Бронзовы: пояса обнаруженные в Азербайджане, «Материальная культура Азербайджана», вып. IV, 1962.

12 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949.

շրջանում որսը նախնաղարյան տեսեսության հիմնական միջոցներից մեկն էր, իսկ հողագործության զարգացման շրջանում դառնում է երկրորդական, և որսորդական շատ աստվածներ վեր են ածվում երկրագործականի՝ զաշտերի աստվածների, ինչպես այդ դիտվում է նդիպտական պանթեոնում: Բ. Գիոտրովսկին պնդում է, որ բրոնզի զարի տարրեր փուլերում արևի կերպավորումը նույնպես իր զարգացումն է ապրել, սկսած գիշատիշ կենդանիներից և թշուններից, այնուհետև տնային կենդանիների պատկերներից աստիճանական անտրապոմորֆիզացիայով մինչև նրա լիակատար անտրապորիդ կերպարը:

Երկնքի և արեի պաշտամունքի արտահայտությունը գիտվում է: Անդրկովկասում մթա III—I հաղարամյակի հուշարձանների վրա, որը համբնելում է եվրոպայի բրոնզեզարյան ժամանակներին:

Հեղինակը մեկնարանում է նաև երեք հորիզոնների՝ վերին-երկնային, միջին-երկրային և ներքին-զրային պաշտամունքը, որը նույնպես գալիս է հնագույն ժամանակներից:

Այսուհետեւ Բ. Գիոտրովսկին անցնում է գոտիների մեկնարանությանը, առաջ քաշելով այն տեսակետը, որ գոտիներն ինքնին ունեն կուլտային նշանակություն և նրանց վրա պատկերված սյուժեները կրում են կրոնա-պաշտամունքային խոր իմաստ: Այս ուսումնասիրության ընթացքում Բ. Գիոտրովսկին հենվել է Ա. Միլերի, Գեշելետի աշխատությունների վրա և արել լրացուցիչ մեկնարանություններ:

Ի դեպ, մեր թեմայի համար առանձնակի նշանակություն է ստանում Միլերի¹³ աշխատությունը, որի մեջ կովկասյան հնագիտական, աղղաղրական նյութերի, հին արեկելյան և եվրոպական զուղահեռների, ինչպես և Մասի կովկասագիտական-հարեթական լեզվարանական ուսումնասիրությունների հիման վրա բնորոշում է երկնային մարմինների և երեսությների՝ արևի, աստղերի, կայծակի, որոտի, ինչպես նաև երկնքի, երկրի ու անդրշերիմյան աշխարհի մասին գոյություն ունեցող հնագույն կովկասյան պատկերացումները, որոնք գերազանցապես առնչված են արվեստի առարկաների զարդամոտիվների հետ:

Իր մի այլ աշխատության մեջ¹⁴ Բ. Գիոտրովսկին ուրարտական արվեստի հուշարձանների շարքում անդրադառել է նաև Կար-

13 А. Миллер, Элементы неба на вещественных памятниках, «Из истории докапиталистических формаций», стр. 125 и сл. (Известия ГАИМК, 100).

14 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1948.

սի շրջանի Զակիմ գյուղի, Անի-պեմդայի, Կարմիր բլուրի և այլ վայրերում հայտնաբերված գոտիներին։ Նա կանգ շառնելով նրանց մեկնաբանության վրա, այդպիսիները համեմատության մեջ է դրել հրուսակային կովկասյան և մերձդղնեպրյան սկզբական արվեստի առարկաների հետ և փայլուն կերպով ապացուցել ուրարտական մշակույթի ազդեցությունը հարավ-ուրուսատանյան տափաստանների կյանքում, կենցաղում, մշակույթում։

Որսի շրեղ տեսարաններով դրվագված ուրարտական գոտիների մեկնաբանմանն են անդրադարձել Հ. Մարտիրոսյանը և Հ. Մնացականյանն իրենց աշխատության մեջ¹⁵։ Հիմք ունենալով ուրարտական էրերումի քաղաքի դամբարանադաշտից հայտնաբերված բրոնզե գոտիները, հեղինակները այդպիսիները համեմատել են ասորեստանյան արվեստի հուշարձանների հետ, ցույց տվել ուրարտական հուշարձանների տիպիկ առանձնահատկությունները, սահմանել նրանց հնարավորին շափ ճշգրիտ թվագրությունը, հետաքրքրական դիտողություններ արել ուրարտական քանակի կառուցվածքի, զինվորական հանդերձանքի, թագավորական որսի կազմակերպման, իշխող դասերի կենցաղի վերաբերյալ։

Բրոնզեղարյան պաշտամունքի հարցին է անդրադարձել Հ. Մարտիրոսյանն իր մի շարք այլ աշխատություններում¹⁶։

Մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկելով Կարմիր բլուրում գտնված քարե կուրքերը, հեղինակն իր տեսակետները համոզիչ դարձնելու համար բերում է հնագիտական և ազգագրական համեմատական հարուստ նյութ և համոզիչ մեկնաբանություն տալիս կանացի մայր-աստվածության ու պտղաբերության պաշտամունքի հետ կապված որոշ հարցերին։ Նա հանդում է այն ճիշտ եղբակացության, որ քարե այս կուրքերն իրենցից կանացի անտրոպոմորֆ արձանիկներ են ներկայացնում, որոնք պտղաբերության մայր աստվածուհու գաղափարակիրն են հանդիսացել, իսկ նրանց դար-

15 Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Հ. Մնացականյան, Նոր-Արեշի ուրարտական կուրքերին, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 10, 1958.

16 Ա. Ա. Մարտirosyan, Идолы из раскопок Кармир-блура. «Պատմա-բանական հանդես», № 2, 1958, «Город Тейшебани», Ереван, 1961. «Первобытные иероглифы Армении и их урарто-армянские двойники». «Էրարեր», 1971, № 9: Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, «Պատմա-բանական հանդես», 1969, № 3, «Ժայռապատկերների դարպանքման մի քանի նախնական տվյալներ», «Էրարեր», 1970, № 9: «Քարի դարից նորարտու», Երևան, 1971։

դարսող բուսական զարգանախշերը կենաց ծառի խորհրդանիշն են եղել: Հեղինակը դրանցից այն հետևությունն է անում, որ կենաց ծառը և կինը՝ մայր աստվածուհին, կարող էին փոխարինել իրարուներն նույն՝ պաղաքերողի իմաստը և մեկը մյուսին հավասարապր էին: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հ. Մարտիրոսյանի կատարած ուսումնասիրությունները Հայաստանում հայտնաբերված ժայռապատկերների վերաբերյալ: Նա գիտական բարձր մակարդակով է վերլուծել ու մեկնարանել ժայռափոր կոմպոզիցիաների բնույթը, բացահայտել նրանց կրոնա-պաշտամունքային էությունը, միևնույն ժամանակ տալով դրանց գասակարգումն ու թվազրումը: Առանձնակի նշանակություն ունի նրա կատարած վերջին ուսումնասիրությունը ժայռապատկերների մեջ նախահայկական գաղափարագրերի հայտնագործման ասպարեզում:

Պատմագիտական առանձին հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի լեռներում գտնված վիշապ-քարակոթողներին նվիրված ուսումնասիրությունները:

Սրանցից առաջինը Ն. Յա. Մառի և Յա. Ի. Միթրոնովի գիրքն է¹⁷, որի մեջ հեղինակները հրատարակել են Վիշապալձի (Թոխմախան գյոլի), Վանստանի (Իմիրզեկի), Սախոնրակի (Գյոլ-Խուրտի) մի քանի քարակոթողներ, տվել են «վիշապ» բառի ստույգ մեկնաբանությունը և հայոց առասպելաբանության մեջ նրանց հետ կապված հետաքրքրական տեղեկություններ, կապելով նրանց ջրի պաշտամունքի հետ և առաջադրելով ճիշտ թվազրություն՝ Հայաստանում սեպտեմբեմբի տարածումից առաջ ընկած ժամանակաշրջանում:

Աշխատության մեջ հետաքրքիր ու արժեքավոր դիտողությունների հետ կան անհամոզիչ ենթազրություններ՝ կապված տոհմական տոտեմներ լինելու հետ: Վիշապ-քարակոթողների լայն տարածումը Հայկական լեռնաշխարհի հյուսիսային գավառներում և Կովկասում ցույց է տալիս, որ այդպիսիները կապված չեն եղել որևէ տոհմի նույնիսկ ցեղի տոտեմական անվան հետ:

Վիշապների հարցի քննարկմանը ավելի ուշ անդրադաել է Մ. Արեգյանը, որն այդ կոթողները նույնպես կապել է ջրի պաշտամունքի հետ, նշել ներկայիս Հայաստանի շրջաններից գուրս գովող մի շարք այլ քարակոթողներ: Նա գտել է ձկնակերպ այդ արձանների կապը տարերքի աստվածության՝ եղների, ցուկերի, կովե-

17. Հ. Յ. Մառ, Յ. Ի. Սմիռնօս, Վանական, Մ., 1931.

րի, այժերի պատկերների հետ, որոնք համախ հանդես էին գալիս որպես բնական երևութներ՝ քամի, փոթորիկ, կայծակ, որոտ, պտտահողմ: Այս բոլորը Արեգյանը կատարել է Եղնիկի բնագրի և Ալիշանի «Հայ ժողովրդական հավատքը» աշխատության ստույգ մեկնաբանման հիման վրա: Սակայն Արեգյանն էլ հարցը չի սպառել, թեև անխնա քննադատել է Բ. Պիտորովսկու, Ն. Մառի աշխատությունները, ավելին, վիշտալ կոչված քարակոթողները դիտել է իրեն Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ: Նա, հենվելով Գ. Սըրվանձտյանցի կողմից գրի առնված և հրատարակված Հայկական մի ավանդության վրա, վիշտակներին միանգամայն անընդունելի և սխալ թվագրություն է տալիս: Վիշտակների մեկնաբանման հարցերին առնչվող աշխատություններից է Գ. Ղափանցյանի ուսումնասիրությունը¹⁸, որտեղ նա այն հետևությանն է հանգում, որ հանձինս այս կոթողների մենք ունենք կանաչի, բույսի, գարնան աստվածության արտահայտությունը, ավելի ճիշտ, բնության կանաչազարդման կուլտի, առատության, պտղաբերության ու հողագործության արտահայտությունը, գուցե և կապված ուղղման հետ:

Հեղինակը առանձին-առանձին վերլուծության է ենթարկել արագիլի, ցուլի, կենաց ծառի պատկերները և հանդել այն եզրակացության, որ սրանը, յուրաքանչյուրն իր հերթին, գարնան, բազմացման, առատության, պտղաբերության խորհրդանիշն են: Նա բերում է ազգագրական տվյալներ, ժողովրդի մեջ արմատացած սովորություններ՝ կապված այս կենդանիների պաշտամունքի հետ, որպես հողագործության, պտղաբերության մարմնավորողի:

Այդ տեսակետից եղան (եղո) պաշտամունքը նա կապում է Արա աստծո պաշտամունքի հետ, որի գահը Արագածն էր, որտեղ և գտնվել են քարակոթողներից մի քանիսը՝ եղան պատկերով: Արան գարնան, մեռնող ու հարություն առնող աստվածություն էր:

Կենաց ծառի խորհրդանիշ նա համարում է Աժդանականում (Աժդահա-Յուրտում) գտնված քարակոթողի վրայի պատկերը, որն ըստ նրա արմատի երեք ճյուղ ունի ներքեւում, իսկ վերևում՝ երկու ճյուղ (ձախ կողմում), որը հորիզոնական դիրքից ներքեւ է թերվում: Այս ծառի վերևում կարծես թե գունդ է երևում, իսկ արմատների մոտ՝ ցուլի գլխի պատկերը՝ ականջներով, աշքերով, պողերով և ներքեւ ձգվող զնշով: Այս կենաց ծառը համեմատում է ուրարտական գտտիների վրա (Անի-պեմզա) պատկերված կենաց ծառի հետ:

18. Г. Капанцян, О каменных стелах на горах Армении, Ереван, 1953.

Բերում է Համեմատական և Հայկական ազգագրական բաղմաթիվ տվյալներ՝ կապված կենաց ծառի պաշտամունքի հետ։ Այս բարակոթողները նա թվագրում է երկաթի ժամանակաշրջանով (մթա 1200—1100 տ. առաջ):

Անկասկած է, որ մեր բարակոթողների բովանդակության մեջ արտահայտվել է այն առասպելաստեղծ կերպարը, որը ստեղծվել է ինչպես բնության (գարուն, նոր բուսականություն, վերածնունդ, առատություն), այնպես էլ արտադրողական հիմքի վրա (երկրագործություն, սոռոգում): Դա հողագործական համայնքի մարդկանց և մասսամբ էլ ամռանը տավարը լեռները քշող անասնապահների առասպելաբանությունն է: «Մեր բարակոթողները հանդիսանում են հենց անհամբերությամբ բնության գարնանային վերածնողին սպասող հողագործի իղձերի մարմնավորումը», — գրում է Ղափանցյանը:

Վիշապների ուսումնասիրության հետ է կապված Թ. Առաքելյանի ուշագրավ աշխատությունը «Դիտողություններ Վահագնի մասին» խորագրով («Տեղեկագիր» Հաս. դիտ., № 2, Երևան, 1951, էջ 75—80):

Այս հոդվածում հեղինակը Ալիշանի նման «վիշապաբազ» բառը (ինչպես կոչում էին Վահագն աստծուն), ի հակագրություն միշտոք ուսումնասիրողների (Մալխասյանց, Հայկապյան բառգիրը, Արեգյան և այլն) մեկնարանում է ոչ թե որպես ածական, այլ որպես վիշապ և քաղ բառերի միացություն և հնագիտական ու մատենագրական նյութի հիման վրա պատճերացվում էր այս երկու կենդանիների միասնական կերպարով, որը առաջացել է նրա պաշտամունքի շատ ավելի վաղ փուլում, երբ «ամպրոսի, փոթորկի և ամպի աստվածությունը մի էր և երեան էր զալիս արու այժ ու թևավոր վիշապի միասնական պատճերով»:

Հեղինակը առացուցում է, որ Վահագնի պաշտամունքը այլ աստվածների նման, իր նախնական աստիճանում՝ առաջացած տուտեմներից բարդանում, զարգանում և կապվում է երկնքի հետ՝ ստանալով աստեղային, կոսմիկական բնույթ:

Վիշապների հրատարակությամբ հանդես է եկել նաև Լ. Ա. Բարսեղյանը¹⁹,

19 Լ. Ա. Բարսեղյան, Գեղամա լեռների վիշապները, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4:

Որսորդության և պտղաբերության պաշտամունքն է դիտում
Շ. Ամիրանաշվիլին իր աշխատության «Էնեոլիթ և բրոնզի էպո-
խա» (էջ 23—48) և «Երկաթի դար» (էջ 48—66) գլուխներում²⁰: Նա
անդրադառնում է Թրիալեթիից, Սամիթավրոյից գտնված գոտիների,
կորանյան կացինների վրա պատկերված սյուժեների, Ստեփանծ-
մինդայում և Ախալգորիում գտնված գանձերի մեջ եղած զանազան
արձանիկների, կենդանիների և մարդկային արձանիկների ուսում-
նասիրությանը և հաստատում, որ հիշված կոմպլեքսների ֆալլիկ
արձանները և եղշերավոր անասունների պատկերները կապվում են
որսորդության և պտղաբերության պաշտամունքի հետ:

Ամիրանաշվիլին նույնպես համեմատական մեծ նյութ է բերում
պատմական Հայաստանից, Փոքր Ասիայից և հին մշակույթի այլ
օշախներից:

Ստեփանծմինդայի գանձի արձանիկներին անդրադառնում է
նաև Մ. Զիքովանին իր արժեքավոր աշխատության մեջ²¹, որտեղ
հեղինակը փորձում է Ստեփանծմինդայի արձանիկների կոմպլեքսը
ներկայացնել իրեւ Ամիրանի հայտնի ավանդության գեղարվեստա-
կան արտացոլում: Այս նույն աշխատության առաջին բաժնում դիտ-
վում են Թրեղբի արձաթե դրվագված դուլլիկն ու գավաթը և Սամ-
թավրոյի բրոնզե գոտին իրեւ Ամիրանի ժողովրդական էպոսի մեջ
պահպանված առասպելների արտահայտություն: Որոշ շափով փորձ
է արվում նաև քննարկելու ներկայիս Վրացական ՍՍՀ տերիտորիա-
յում՝ գերազանցապես Մցխեթա-Զավախիրում հայտնաբերված վի-
շապաքարերի հարցը: Հնագիտական այս նյութերի համեմատական
ուսումնասիրության մեթոդը միանդամայն արդարացվում է: Յավոք,
հեղինակն այսուղ քիչ է օգտագործում, երբեմն էլ բոլորովին շի-
օգտագործում հայտատանյան համեմատական հարուստ նյութը և
Մցխեթա-Զավախիրի, Թրեղբի հին կուլտուրայի երևույթները դիտում
իրեւ զուտ վրացական, այն դեպքում, երբ վրաց ժողովրդը մթա II
հաղարամյակի սկզբներին և կեսերին դեռևս ձևավորված չէր, այն
դեպքում, երբ Թրեղբի, Մցխեթա-Զավախիրի, Հայկական լեռնաշ-
խարհի և Փոքր Ասիայի որոշ հատվածների նյութական և հոգևոր
մշակույթի շատ երևույթներ կրում էին ընդհանուր բնույթ՝ ժամա-
նակակից հարեւն ժողովրդների նախնիներին բնորոշ և ոչ թե
յուրահատուկ նրանցից որևէ մեկի համար: Որոշ կասկած է հարու-

20 Յ. Ամիրանաշվիլի, История грузинского искусства, М., 1959.

21 Մ. Յ. Չիկовани, Народный грузинский эпос о прикованном Амира-
не, М., 1966.

ցում նաև այն հանգամանքը, որ Հեղինակի մոտ միջին և հին բրոնզեդարյան արվեստի առարկաների վրա փորագրված սյուժեները լրիվ ու լիովին, կետ առ կետ համապատասխանում են Ամիրանի էպոսի մանրամաներին, որը սակայն անցել է հազարամյակների դարգացման ու փոփոխությունների ոլորտով և XX դարում շրջապահնվել այնպիսի անաղարտ վիճակում, որպեսզի լիովին համապատասխաներ հին ժամանակների արվեստի առարկաների սյուժեներին։ Այսպիսի անփոփոխ, կոստանդ, քարացած ավանդություններ չեն հանդիպում և XX դարում պահպանված էպոսի ու մթա XX դ. միջական սյուժեների հիման վրա կատարված արվեստի գործերի համադրության դեպքում, պետք է, որ անպայման բացայտվեն որոշ շեղումներ ու տարբերություններ։

Իր բովանդակությամբ վերը հիշատակված հրատարակությունների հետ է կապվում նաև Հ. Մնացականյանի գրքույզը²², որի մեջ Հեղինակը այդ պաշտամունքը կապում է պողաբերության հետ՝ օգտագործելով մատենագրական ու աղբագրական հարուստ նյութեր։

Պողաբերության պաշտամունքին է վերաբերում նաև Ս. Եսայանի հոդվածներից մեկը²³, որի ուսումնասիրությունը հեղինակը կատարել է Շամշադինում գտնված բրոնզե գոտու հիման վրա և հանգել միանգամայն ճիշտ եզրակացությունների։ Եսայանը միշտը այլ հոդվածներում ևս անդրադարձել է կրոնապաշտամունքացին բնույթ ունեցող, հատկապես զրհաբերության, լուսատուների պաշտամունքի հետ կապված հնագիտական նյութերի ուսումնասիրությանը և հանգել հետաքրքիր հետևողական հյուսությունների²⁴։

Պատմագիտական, մանավանդ արևելագիտական գրականությունը վերնաշենքային հարցերի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններով այժմ արդեն դրեթե անընդգրկելի է, և մենք նպատակ չենք դրել ուսումնասիրել այն ամրողությամբ, այլ օգտը վել ենք հայրենական և օտարազգի ուսումնասիրողների կարևորագույն այն աշխատություններից, որոնք ժամանակադրական, սյուժետային կամ տրամաբանական անմիջական կապի մեջ են մեր կողմից ուսումնասիրվող նյութի հետ։ Այդպիսիներից անհրաժեշտ

22 Հ. Մնացականյան, Արևելագիտամունքի հետքերը բրոնզեդարյան Հայաստանում, «Աշխատություններ Հայաստանի պատմության պետական թանգարանից», գիրը 2։

23 С. А. Есаян. Погребение № 14 Астхаблурского могильника, «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1967։

24 С. А. Есаян, Каменная статуэтка идола из Шамшадина, «Советская археология», 1969, № 1; «Предметы солярного культа древней Армении», СА, № 2, 1968. «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1967։

է նշել Դեշելեամի²⁵ աշխատությունը, որը կարևորագույն աղբյուր է բրոնզեդարյան Եվրոպայի հավատալիքներն ու պաշտամունքը ուսումնասիրելու բնագավառում։ Հեղինակը Եվրոպայի հնագիտական, պատմա-ազգագրական նյութի խոր ուսումնասիրության հիման վրա առաջադրել է լուսատուների՝ արևի, կոսմիկական պատկերացումների, առանձնապես երեք հորիզոնների առաջին համոզիչ մեկնարանությունները։

Այդ կարգի աշխատանքներից են ամերիկյան դիտնական Ե. Օ. Զեյմսի ուսումնասիրությունները²⁶, որոնց մասին անհրաժեշտ ենք համարում մի քանի խոռոք ասել։ Սրանց մեջ գրեթե համակռողմանի քննարկված է հին աշխարհի պաշտամունքն ու կրոնը, սկսած պալեոլիթյան ժամանակներից, գերազանցապես Մերձավոր Արևելքի ընդգրկմամբ։ Այսաեղ կանացի արձանիկների, ֆալիկ էմբլեմների, պտղաբերության, որսորդական արվեստի ու ծեսերի, երկրագործական հավատալիքների ու սովորությների, մահվան, ծննդյան, հոգու, նախնիների ոգիների պաշտամունքների, սիմվոլների բնույթի, երկնային սիմվոլիկայի, զողիակալ—սոլյար երևույթների հետ կապված շատ խնդիրներ քննարկված են պատմա-փիլիսոփայական առումով։ Մեզ համար առանձնապես կարևոր է այն, որ հեղինակը առանձին քննարկման առարկա է գարձրել Առաջավոր և Փոքր Ասիայի, Հայաստանին անմիջապես սահմանակից և հիմն շրջանում նրա հետ կուլտուրական կապերով մերված Թել-Արտիաշիայի, Թեփե-Գավրայի, Թել-Հասունայի, Օրեիդի, Ուրի, Շաշի (Սուլի), Անաուի և մի շարք այլ նշանավոր օբյեկտների կրոնին ու պաշտամունքին վերաբերող առաջնակարգ նյութեր։

Բրոնզեդարյան Հայաստանում լուսատուների, զողիակալ կոսմիկական պատկերացումները և պաշտամունքային այլ հարցերը ուսումնասիրելու տեսակետից առանձնահատուել նշանակություն ունեն նաև Կ. Ֆլամարշ, Ա. Օլյուտ, Վ. Օլկուտի²⁷, Ա. Երեմիասի²⁸, Շահ-

²⁵ J. Déchelette, Archéologie celtique ou protohistorique, t. II, Paris, 1924.

²⁶ B. O. James, Prehistoric religion, New York, 1957, Myth and ritual in the ancient Near East, London, 1958.

²⁷ К. Фламарш, История неба, СПб., 1875.

²⁸ В. Олькотт, Легенды звездного неба, СПб., 1914.

²⁹ A. Jeremias, Handbuch der altorientalischen geisteskultur, Berlin und Leipzig, 1929.

սեպի դե-լա-Սոսեց³⁰ աշխատությունները, որոնք նվիրված են Հին աստղաբաշխության, զոդիակի և Հին արևելյան ժողովուրդների կրոնների ուսումնասիրությանը:

Զողիակի պաշտամունքին նվիրված հետաքրքիր բաժին ունի
Անոռմանի ուսումնասիրությունը³¹:

Անհրաժեշտ է նշել նաև Հ. Ֆրանկոբրյու³², Պ. Ամինի³³ ուսումնասիրությունները, որոնց մեջ քննարկված են նին արևելյան արվեստի բազմահազար հուշարձաններ՝ կապված արևելյան ժողովուրդների կրօնական բմբանումների, գաղափարական պատկերառումների հետ:

Պ. Ամինի ուսումնասիրությունը նվիրված է Միջազգեարքուն պեղված բազմաթիվ կնիքների նկարագրմանը և սյուժենային ուսումնասիրությանը, որոնց առանձին կենդանական պատկերները հմեկնարանությունները իրեւ զուգահեռ նյութեր օգնում են բրոնզեկարգային Հայաստանի նույն բովանդակությունն ունեցող պատկերների ուսումնասիրությանը:

Սեր թեմայի համար առավել քան կարեսը նն Հ. Բոսերտի³⁴,
Ե. Փոթինի³⁵ և է. Ակուրգալի³⁶ աշխատությունները, որոնք իրենց
բազմահարուստ նյութով սերտ աղերսի մեջ են բրոնզեգարյան Հա-
յաստանի արվեստի ու մշակույթի հետ:

Հին արևելյան և արխառովյան կրոնների ընդհանուր ուսումնա-
սիրություններից են նաև Բ. Ա. Ռիբակովի³⁷, Ն. Դ. Ֆլիտների³⁸
փոքրածավալ աշխատոթյունները; Ն. Ֆլիտները հիշատակված աշ-
խատության մեջ միջադարյան սեպագիր տեքստերի և Ուրի թագա-
վորական դամբարանադաշտի պեղսւմների կրոնա-պաշտամունքա-
յին նյութերի քննարկման հիման վրա վեր է հանում մի շարք աստ-
վածությունների հետ կապված հարցեր (Մարդուկ, Խանուա-իշտար,

²⁰ Шантен-де-ла-Соссей. История религии, I, М., 1899.

²⁰ *Histoire des idées politiques de l'Antiquité*, t. 1, p. 106.

²⁰ H. Frankfort, Kingship and the gods, Chicago, 1948.

²³ P. Amiet, La glyptique Mesopotamienne archaïque, Paris, 1961.

H. H. Th. Rossert. Altanatolien. Berlin, 1942.

E. Böttger, *L'art Hindou*, Paris, 1926.

³⁵ E. Pottier, *L'art hitite*, Paris, 1923.
³⁶ F. Haussig, *Die Kunst der Hethiter*, München, 1961.

³⁶ E. Akurgal, Die Kunst der Neolithics, München, 1961.
³⁷ Б. А. Рыбаков, Космогония и мифология земледельцев энеолита. «Советская археология», 1965, № 1, 2.

³⁸ Н. Д. Флиттнер, Земледельческие культуры древней Месопотамии в свете новых раскопок (Труды отдела истории культуры и искусства Востока, т. I, Гос. Эрмитаж, Л., 1939).



Նինդիրսու և այլն), որոնք կապվում էին մեռնող և հարություն առնող աստվածությունների հետ, կրում էին պահարերության գաղափարը և իրենց բնույթի ու պաշտամունքի շատ կողմերով կապվել են հայկական առասպեկտարանության, ժողովրդական էպոսի, հնագիտական կրոնա-պաշտամունքային նյութերի հետ։ Հետաքրքիր է, որ հիշատակված աստվածուհիները երբեմն հանդիս են գալիս երկնային կոմի կերպարով, որն իր մեջ կրում է պատղաբերության սկզբունքը և սրանց հետ կապված շատ տռնախմբություններ ու արարողություններ պարզապես նոր տարվա տոներ էին, որոնք շատ գուշակեռներ են գտնում հայ աղղաղրության մեջ։

Բ. Ռիբակովը տրիպոլիսն էնելլիթյան հնագիտական նյութի հիման վրա արձարժում է նախնադարյան տրիպոլիսն բնակչերի կոսմոգոնիական պատկերացումները՝ կապված չըի, պատղաբերության, լուսատումների պաշտամունքի հետ։

Մեզ հետաքրքրող պրոբլեմի քննարկման տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն նաև հին արևելյան առասպեկտների կրոնական տեքստերի հրատարակություններն ու ուսումնասիրությունները։ Այդ առումով անհրաժեշտ է նշել ամերիկյան խոշոր շումերագետ Ս. Կրամերի ֆունդամենտալ աշխատությունը³⁹, ինչպես և ուսուելին թարգմանությամբ հրատարակված հանրահայտ գրքույկը⁴⁰, որի մեջ ընդհանրացված են շումերական առասպեկտների և կրոնական տեքստերի մասին եղած տվյալները։

Պակաս կարեոր չէ խոշորագույն խեթագետ, գերմանացի գիտնական Օ. Շեյնբիխի աշխատությունը⁴¹։

Խեթական պաշտամունքների ու կրոնի առումով զգալի աշխատանք է կատարել նաև Հ. Գյուտերրոկը⁴²։

Ջերշին ժամանակներս մեծ նշանակություն են ստանում Ռաս-Շամրա-Ռւգարիտից հայտնաբերված առասպեկտական և կուտային տեքստերի հրատարակությունները։

Քննարկվող թեմայի կապակցությամբ զգալի հետաքրքրություն են ներկայացնում Բաալի և Անաթի առասպեկտը, որին նվիրված են Յ. Ալայայտների⁴³ և է. Օ. Զեյմսի⁴⁴ աշխատությունները։

³⁹ S. Kramer, Sumerian mythology, Philadelphia, 1944.

⁴⁰ C. Крамер. История начинается в Шумере, М., 1965.

⁴¹ Otten Heinrich, Hethitische totentritual, Berlin, 1958.

⁴² H. Guterbock, The hittite version of the Hurrian Kumarbi myth American journal of archaeology, vol. LII, 1948, № 1.

⁴³ J. Eistleitner, Die mythologische und kultischen texte aus Ras Shamra, Budapest, 1959.

⁴⁴ E. James, The cult of the Mother goddess, London, 1959.

Հին Միջագետքի մի քանի հետաքրքիր առասպելներ հրատա-
րակված են Դ. Գ. Ռեզերի կողմից⁴⁵:

Արևելագիտական նշված և շնչված դրականությունից քաղվա-
ծաբար օգտագործել ենք համեմատական ու զուգահեռ նյութերը,
նկատի առնելով համադրությունների ժամանակագրական, էլեմի-
կական, գաղափարական, սյուժետային տարրերությունները: Օգ-
տագործված դրականությունը օգնել է մեզ պարզ պատկերացում
ունենալու հին աշխարհի բրոնզեդարյան ցեղերի բնապաշտական
հասկացությունների գաղափարաբանության ու պաշտամունքի մա-
սին:

Հայաստանյան հնագիտական նյութերին զուգընթաց մեր ու-
սումնասիրության հիմքում են դրվել հայկական վաղ միջնադար-
յան գրականության անհրաժեշտ նմուշների, հերոսական էպոսի,
քանահյուսական և ազգագրական նյութերի ուսումնասիրությունը:
Նկատի ունենք Ազաթանգեղոսի, Եղնիկ Կողբացու, Մովսես Խորե-
նացու, Անանիա Շիրակացու, Հովհաննես Վանականի հանրահայտ
աշխատությունները, որոնք հարուստ նյութեր են ամփոփում հեթա-
նոսական կրոնի ու գաղափարաբանության վերաբերյալ, ինչպես
նաև Մ. Էմինի, Ղ. Ալիշանի, Մ. Արեգյանի, Գ. Մատիկյանի, Գ. Ղա-
փանցյանի, Թ. Ավդալբեգյանի, Կ. Մելիք-Օհանջանյանի հատուկ
ուսումնասիրությունները, որոնք կատարված են թե վաղ միջնա-
դարյան հեղինակների բնագրերի, թե ազգագրական-քանահյուսա-
կան հարուստ նյութի մանրազնին ուսումնասիրության հիման վրա:

Կանգ շառնելով «Ազգագրական հանդես»-ում, «Էմինյան ազ-
գագրական ժողովածուառ-ում, «Առածանիք»-ում, «Հայ ժողովրդական
հանելույններ»-ում, «Հայ ժողովրդական հերիաթներ»-ում՝ զետեղ-
ված և մեր կողմից քաղմից օգտագործված հավաքածո քաղմա-
հարուստ նյութերի վրա, մենք կուղենայինք համառոտակի անդրա-
գառնալ առանձին հեղինակների ուսումնասիրություններին:

Դրանցից առաջինը Գ. Սրվանձայանցն է, որի ժողովածուառները⁴⁶
թե ուսումնասիրության բնույթ չեն կրում, այնուամենայնիվ, ըստ
էության, կարեոր դեր են խաղացել հայ գիտական բանահյուսու-
թյան մեջ:

45 Դ. Գ. Բեդեր, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965.

46 Գ. Մրգանձայեց, «Համոզ հատով», Թիֆիս, 1904, «Մահեայ», Կ. Պո-
լիս, 1876, «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մէրի զուո», Կ. Պոլիս, 1874:

Հին գաղափարաբանության և պաշտամունքի անփոխարինելի գործարներ են Սրբանձույանցի կողմից հավաքած «Արևեմանուկ» և օձամանուկ», «Ծովու աղջիկ», Վանա ծովի խաչու և Նազիկ լճակների վերաբերյալ պահպանված ավանդությունները, իրիցինկա ավանդությունը, վիշտապների, հավերժանարսների, արևի մասին ավանդությունները:

Հազիվ թե հնարավոր լինի գերազնահատել մեծավաստակ հայագետ Մանուկ Արեղյանի վաղ շրջանի գերմաներեն կարեռագույն աշխատությունը⁴⁷, որի մեջ բանահյուսական հսկայածավալ նյութի հիման վրա քննության են առնված ոգիների, շարքերի, գեղերի, տեսիլքների, մեռածների, նախնիների պաշտամունքի, երկրների, երկրի, գրախտի, գժոխսի, լուս և խավարի, սատանաների, ժողովրդական հավատալիքների հետ կապված բազմաթիվ հարցեր:

Թեև այս աշխատությունը հրատարակված է 1889 թ., այնուամենայնիվ մինչև այժմ մնում է անփոխարինելի: Պակաս կարեռը շեն Արեղյանի դանազան փոքր ուսումնասիրությունները՝ կապված հայ ժողովրդական հավատալիքների, «Սասնա ծոերի», հեթանոսական պանթեոնի ուսումնասիրության հետ: Վահագնի առասպելին նվիրված հատվածում Արեղյանն իր տիտանական ուժով բացահայտել է հայ ժողովրդի բնապաշտական գաղափարաբանության հիմնական կողմերը, որոնք գալիք են, անշուշտ, բրոնզեդարյան շրջանից ել ավելի վաղ ժամանակներից:

Ավելի վաղ շրջանի հեղինակներից առանձնապես կարևոր է նշել Մ. Էմինի հայ հեթանոսական պանթեոնին նվիրված խորիմաստ ու բազմակողմանի ուսումնասիրությունը⁴⁸, որտեղ հեղինակը ի հակադրություն եվրոպական շատ ուսումնասիրողների և նրանց ազդեցության տակ գտնվող հայ գիտնականների, մատենագիտական, պատմագիտական, բանահյուսական նյութերի ստույդ ուսումնասիրության հիման վրա բացահայտեց հայկական պանթեոնի բնույթը, նրա խորունկ արմատները և բնապաշտության երկրագործական հավատալիքների տարերքի հետ կապված բազմաթիվ երևոյթներ իրենց աստվածություններով, որոնց ձևավորումը մեզ թվում է, պետք է որոնել ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթեդարյան Հայաստանի խորիտալեզու ցեղերի շրջանակներում:

47. M. Abeghian, Der Armenische Volksglaube, Leipzig, 1889.

48. М. Эмин, Исследования и статьи по армянской мифологии, археологии, истории литературы (за 1858—81 г.), М., 1896.

Մխիթարյան միաբանության կարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Պ. Ալիշանը, նույնպես անդրադարձավ հին հավատքի և պաշտամունքի հարցերին իր «Հին հավատք կամ հեթանոսական կրօնք հայոց» (Վենետիկ, Ս. Ղազար, 1910) աշխատության մեջ, որտեղ ի մի բերեց լեռների ու քարերի, կրակի, արևի, կենդանիների, բույսերի, հանդերձյալ կյանքի և այլ պաշտամունքների վերաբերյալ շատ հարուստ և բազմազան նյութ:

Առանձին պրոբլեմների ուսումնասիրության գծով անհրաժեշտ է հիշատակել մեծավատակ հայագետներ Գ. Ղափանցյանի⁴⁹ և Գ. Մատիկյանի⁵⁰ աշխատությունները՝ Արա-Շամիրամի պաշտամունքին, Հայ-խեթական, Հայ-իրանական աստվածություններին նվիրված ուսումնասիրությունները:

Նշված աշխատություններից շատերում հիշատակվող աստվածությունները և պաշտամունքները դժվար է անմիջական կապի մեջ դնել բրոնզեդարյան հետագիտական նյութի հետ, առկայն անընդհատ խորացվող ուսումնասիրությունների միջոցով վերջի-վերջո հնարավոր կդառնա այդպիսի կապերի բացահայտումը:

Այդպիսի փորձ է արել Հայտնի հայագետ Խ. Սամվելյանը իր «Հին Հայաստանի կուլտուրան» եռահատոր աշխատության մեջ (Երևան, 1931): Խ. Սամվելյանի աշխատության առանձնահատկությունը նրանում է, որ նա ձգում է ազգագրական, բանահյուսական, մատենագիտական նյութերի օգնությամբ վերականգնել նախնադարյան շրջանի ոչ միայն հավատքը, պաշտամունքը, գաղափարաբանությունը, այլև հեռավոր անցյալում գոյություն ունեցած հասարակական-տնտեսական ինստիտուտները: Այլ հարց է, թե որքանով է հաջողվել հեղինակին առաջադրված խնդիրների հավասարաշահի, համոզիչ լուծումը:

Ի վերջո, անհրաժեշտ ենք Համարում համառոտակի կանգ առնել մի շաբաթ աշխատությունների վրա, որոնք կապված են Հայաստանում տարածված պաշտամունքներից մեկի՝ արևապաշտության-միհրապաշտության հետ և սեբտորեն առնվազում են բրոնզեդարյան բնապաշտական բմբանումներին ու հավատքին:

Այս ուսումնասիրությունները կապված են Հայկական ժողովրդական էպոսի՝ Սասնա ծռերի վերլուծության հետ: Նշենք զրանից միայն կարեռագույնները: Մ. Արեղյանի, Հ. Օրբելու, Կ. Մե-

49 Գ. Ղափանցյան, Արա Գնդեցիկի պաշտամունքը, Երևան, 1945:

50 Գ. Մատիկյան, Արա Գնդեցիկ, Վենետիկ, 1930:

Միք-Օհանջանյանի, Կ. Վ. Տրեերի, Թ. Ավդալբեգյանի ուսումնակիրությունները։ Մրանց մեջ գիտնականները բացահայտել են հայժողովրդական մտածողության հնագույն ձևերը։ Անդրադառնալով Հայաստանի հնագույն բնիկների կոսմիկական պատկերացումներին և Սասնա ծուերի հերոսների բնորոշմանը, իրրեւ աստվածություններ և երկնային մարմիններ, Հ. Օրբելին իր նշանավոր առաջարանում⁵¹ արդարացիորեն նշում էր, թե հայկական հերոսավեպում պահպանված հավատալիքներից ու պաշտամունքներից շատերը ավելի հին են, քան հունական համանման հասկացությունները։ Կարծես շարունակելով այս միտը, Կ. Տրեերը ցույց է տալիս, որ Հայկական լեռնաշխարհի տերիտորիայում միհրապաշտությունը պետք է որ տարածված լիներ միթա I դարում։

Դրանից շատ առաջ կոստանյանցին⁵² և Թ. Ավդալբեգյանին⁵³ հաջողվել էր ցույց տալ միհրապաշտության ու միհրականության դերն ու նշանակությունը Հայաստանում, ինչպես և այդ պաշտամունքի տարածման հիմնական շրջանները։

Այս հարցերին նվիրված վերջին աշխատությունն է Կ. Մելիք-Օհանջանյանի ուսումնասիրությունը⁵⁴, որտեղ պատմաբանասիրական խոր վերլուծության միջոցով բացահայտված են Միհրի արքանյակներն ու զործակալները՝ իրրեւ տարերի գանազան ուժեր (Հող, ջուր, բուսականություն և այլն), որոնք մեզ թվում են վերին աստիճանի ուշագրավ և համոզիլ։

Ինչպես պարզ երևում է վերը շարադրածից, Հայաստանի բրոնզեդարյան և վաղ երկաթի ժամանակաշրջանի կրոնապաշտամունքային ըմբռնումները բացահայտելու համար մենք չենք ստչմանափակվել միայն նշված ժամանակաշրջանին վերաբերող նյութերի բննարկմամբ և լայնորեն օգտագործել ենք հայ հեթանոսական կրոնին ու հավատալիքներին վերաբերող շատ ու շատ նյութեր, այն պարզ պատճառով, որ մենք չենք դիտում բացահայտանշրպետում հայ հեթանոսական գաղափարաբանության և նրան նախորդող ժամանակաշրջանի իդեոլոգիական պատկերացումների, հայվատքի ու պաշտամունքի միջև։ Ուշ բրոնզեդարյան Հայաստա-

51 «Սասումնցի Դավիթ», Երևան, 1939։

52 Կ. Կոստանյանց, Հայոց հեթանոսական կրոնը, 1879, ի վաղարշապատ։

53 Թ. Ավդալբեգյան, Հանդես ամսօրեալ, 1927, Խ 8, 1928, Խ 1։

54 Կ. Մելիք-Օհանջանյան, Միհրա-Միհրը Սասնա ծուերի մեջ, առանձնատիպ, «Գրական-բանասիրական հետախուզումներ» ժողովածուի առաջին զրքից, Երևան, 1948։

Նում հիմնականում ձևավորվել էին հեթանոսական գաղափարաւրանության շատ ու շատ երեսութիներ, առանձնահատկություններ, կողմեր: Այս հանդամանքը մեզ հնարավորություն է տալիս հայկական բանահյուսական, ազգագրական, մատենագիտական նյութի միջոցով մոտենալու բրոնզեգրադյան Հայաստանի վերնաշենքային որոշ երեսութիների կոնկրետ մեկնարաննմանը: Բարդությունը, սակայն, նրանումն է, որ նույն երկրի վերնաշենքային կյանքում տարբեր ժամանակահատվածներում դիտվող՝ հաճախ նույնական թվացող երեսութիները, ինչպես և նույն ժամանակաշրջանում տարբեր երկրներում միանման կարծեցվող երեսութիները միշտ չեն, որ նույնն են, համարժեք և հաճախ տարբերվում են իրարից, նույնիսկ էական գծերով: Այս հանդամանքները, ինչպես նաև ուրարտական շրջանի և ավելի վաղ ժամանակների հայաստանյան՝ մեր նյութին վերաբերող բնագրերի բացակայությունը խոշընդուտում է բրոնզեգրայան Հայաստանի կրոնի ու պաշտամունքի բազմաթիվ, հաճախ կարեւոր հարցերի մեկնարաննմանը:

Նման իրավիճակում առանձնակի նշանակություն է ստանում հնագիտական պեղածո նյութի ուսումնասիրությունը պատմա-ազգագրական, համեմատական մեթոդով: Հրապարակի վրա այսպիսի աշխատություններ քիչ կան: Ուսումնասիրողները հաճախ սահմանափակվել են հարցի այս կամ այն կողմով միայն, զանց առնելով, մանավանդ, հնագիտական հարուստ նյութը:

Մեր անդրամիկ աշխատության մեջ փորձել ենք հնագիտական նյութերը մեկնարանել Արևելքի պատմա-բանասիրական գիտությունների տվյալների օգնությամբ՝ որոշ, հնարավորին շափումունքի գաղափար կազմելու ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի Հայաստանի բնակչության կրոնա-գաղափարական պատկերացումների, պաշտամունքների մասին:

ԿՈՍՄԻԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՈՒՇ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բրոնզեդարյան մարդու պատկերացումների և մտածողության
մեջ մեծ տեղ էին բռնում տիեզերքի մասին ըմբռնումները:

Տիեզերքի վերաբերյալ մեր նախնիների պատկերացումների
մասին կարելի է առաջ և առաջ գամբարանների ու բնակա-
վայրերի պեղումներով հայտնաբերված կիրառական արվեստի հու-
շարձանների և խեցեղենի զարդամուտիվների ուսումնասիրության
հիման վրա: Նյութական մշակույթի հիշյալ առարկաներից վազա-
դույնները ծագում են Շրեշտլուրի ու Քյուշ-թափայի վաղ բրոնզե-
դարյան (III հազարամյակի) բնակատեղիներից: Մրանք ու գույ-
շեցրած կավանոթներ են, մեծ մասամբ բուսական և երկրաշափա-
կան իմաստավորված զարդամուտիվներվ, որոնք զուգակցված են
արևը խորհրդանշող պարույրներով, շրջանակներով, զրի ու երկրի
իմաստն արտահայտող զանազան երկրաշափական ու բուսական
զարդամուտիվներով¹:


Մթա II հազարամյակի առաջին կեսի՝ միջին բրոնզեդարյան
գումազարդ կերամիկայի² զարդամուտիվները, որոնք անքակտելիո-
րեն կազմված են այսպես կոչված շենգավիթյան խեցեղենի հետ,
նույնպես դրսելուրում են մեր նախնիների կոսմիկական պատկերա-
ցումները հորիզոնական օրիամենտալ գոտիների ձևով:

Այսպիս, Գառնիի գամբարանադաշտում 1951 թ. հայտնաբեր-
ված կարմրափայլ անոթներից մեկի վրա (պետ. ինվ. 1965/229)

1 Է. Վ. Խանզադյան, Շրեշտլուրյան խեցեղեններ ու նրա արվեստը, «Պատմա-
րանափական հանդես», № 3, 1964:

2 Այս ախողի խեցեղենը ուսումնասիրված և թվագրված է Հ. Ա. Մարտիրոս-
յանի կողմից («Армения в эпоху бронзы и раннего железа», Ереван,
1964, էջ 64—73, տախու, I—III):

խորհրդանշված է երկինքը՝ Հորիզոնական և ուղղահայաց ալիքավոր գծերի կոմպոզիցիոն լայն գոտիրվ, որը, կարծես, ներկայացնում է երկնային օվկիանն ու անձրեւ։ Անոթի երկրորդ գոտին կազմված է եռանկյունագիծ ու ալիքավոր երեք ժապավեններից, որոնք հիշեցնում են լեռնային շղթաներ և, վերջապես, երրորդ գոտում ներկայացված են լողացող թոշուններ՝ ստորին ծովի խորհրդանիշները (նկ. 1):




Նկ. 1. Գունագարդ ամաններ Յ հորիզոնների արտահայտության պատկերներով (Հ-ըդ հաղ. մթա)

Այսպիսով, իրար հետ անքակտելիորնեն կապված երեք զարդանախչ գոտիներում արտաբերված են տիեզերքի երեք գլխավոր ուժերը, երեք տարերքները՝ երկինքը, երկիրը և օվկիանը։

Հետարրիդ է, որ միջին բրոնզեդարյան շրջանի նույնատիպ ու ժամանակակից սափորների վրա ներկայացված են օրինամենտալ մոտիվների մի շարք այլ էլեմենտներ, որոնք լրացնում են Գառնիի անոթի կոմպոզիցիան և համոզիչ դարձնում մեր կողմից առաջազրովով նրա մեկնարանումը։ Այսպես, Կիրովականի (1948 թ. պեղված) հարուստ դամբարանի կարմրափայլ սափորներից մեկի պարանոցը գունագարդված է երկնային օվկիանն ու անձրեւ արտահայտող ուղղահայաց ալիքավոր գծերի փնջիկներով և Հորիզոնական ալիքով, որոնց արանքներում պատկերված են երկնային լուսատուները խորհրդանշող փոքրիկ շրջանակները (ՀՊԲ, ինվ. 1861/22, նկ. 2):

Կիլիկիայի V—IV հազարամյակների ուշ նեոլիթյան և էնեոլիթյան անոթների պարանոցների վրա նույնպես զետեղված են

կարմրափայլ ներկով կատարված վերևից ներքև սլացող զիգզագ գծերի փնջիկների և նրանց երկու կողմերից փոքրիկ շրջանակների շարքեր, որոնք մեկնաբանվում են Գարստանդի կողմից իրեն կայծակի (զիգզագներ) ու անձրևի խորհրդանիշներ²:



Նկ. 2. Գաւնագարդ անոր
Կիրովականից
(Հ-րդ հազ. մ.թ.ա.)

պարանոցի հիմքի վրա տեղադրված հորիզոնական ալիքավոր գծերով, որոնցից ներքև գրված են արևի սկավառակն ու զույգերով պատկերված թուշուները, որոնք հաճախ խորհրդանշում են արեր: Կարմիրի անոթի երկրային սիմվոլիկայով հաղեցված բատորին երկու գոտիներն իրենց զիգզագներով ու թուշուներով գրեթե չեն տարբերվում Գառնիի մոտիվներից:

Այս սափորների սիմվոլիկ օրնամենտացիայով ներկայացված հիմնական գաղափարն արտահայտված է միջին բրոնզեդարյան ամանեղենի զարդանախշերում՝ բազմաթիվ տարբերակներով, որոնք, սակայն, էական փոփոխություններ չեն մտցնում նրանց բովանդակության մեջ:

Այսպես, Կիրովականի մի քանի սափորների վրա (ՊՊԲ, ինվ. 1861) արևի սկավառակները ներկայացված են լեռների ետևում, Շամշագինի անոթների վրա արևի սիմվոլները պատկերված են տարբեր տեղերում՝ կամ նրանց պարզապես փոխարինում են թուշուները (Նկ. 3):


² J. Garstang, Prehistoric Mersin, Oxford, 1953, էջ 40.

Սե և գունագարդ խեցեղնենի նման մստիվներ կամ նրանց տարբերակները հանդիպում են ամենուրեք և առանձին ուսումնասիրության առարկա են, սակայն վազ և միջին բրոնզեդարյան (մթա III—II հազարամյակներ) վերը բերված նմուշներն եւ անհերքելիորեն ապացուցում են, որ գեղուս հնագույն ժամանակներից Հայկական բարձրավանդակներում բնակվող ցեղերը տիեզերքը պատկերացնում էին երեք հզոր տարրերի ձևով, որոնք սերտ միասնության մեջ էին և հների պատկերացմամբ գրեթե չէին տարրերվում իրարից: Ն. Մասի գիտուկ արտահայտությամբ «Յուրաքանչյուր առարկա նախկինում ընկալվում էր կոսմիկաբար, սկզբ կոլեկտիվի, ողջ աշխարհի մի մասնիկ, իսկ հետագայում՝ մարդկային պատկերացումների մեջ դիմերենցված երեք աշխարհներից մեկը՝ վերին (երկինք), ստորին (երկիր) և անդրերկրային (ծով):

Ակազեմիկոս Ն. Մասի այդ փայլուն միտքը կարելի է հիմնավորել հայ ազգագրության և հնագիտության շափազանց հետաքրքրիր նյութերով: Կոսմիկական միասնական ընկալման վառ պացուցներ են ժողովրդական հավատալիքները, որոնց համաձայն սթէ նազիկն և թէ հաշլու լճակներն ունեին իրենց մեջ հրեղն աղջիկ, ունեին հրեղէն ձիեր, հրեղէն զոմէշներ, որոնցմէ կը յըղանան երբեմն գեղերու: Ժատակներն, և կը ծնանին ճեփ-ճերմակ ու անդաւատ»⁴:

Բուլանընթառում պատմում էին, որ մատակը մտավ Վանա ծովը և հրեղն գումեշից հզիացած ձագ ունեցավ: Նույնը պատմում էին Սևանա լճի ափերին՝ նորատուսի զյուղացիները⁵:

Մյուս կողմից, ջրային տարերը ներկայացնող վերը հիշատակված և բազմաթիվ այլ կենդանիներ պատկերված են բրոնզեդարյան կիրառական արվեստի հուշարձանների վրա որպիս երկնային էակներ՝ լուսատուների և արևների ուղեկցությամբ: Բնական է,



Նկ. 3. Գունագարդ անոթությամբ շամշադինից

⁴ H. Я. Marr, О числительных. Сборник «Языковедные проблемы по числительным», стр. 52.

⁵ Կ. Ա. Մրուանձանի, Համով-Հոռով, Թիֆլիս, 1904, էջ 86:

⁶ «Հայ ժողովրդի պատմություն», Հատ. 1, 1972, էջ 267—276:

որ տեղաբնիկների կոսմիկական պատկերացումները ժամանակի ընթացքում պետք է տեղաբաշխվեին, դասդասվեին, ընկալման մեջ ավելի պարզ ու որոշակի ձևեր ընդունեին: Մի երկույթ, որը հստակորեն դիտվում է ուշ բրոնզի (XIII—X դդ. մթա) և վաղ երկաթի ժամանակաշրջանի պաշտամունքային հուշարձանների ուսումնասիրության ընթացքում:

Պատկերացվող բնական ուժերի առանձին կողմերի ճանաչումը ժամանակի ընթացքում առաջանում էր ֆունկցիոնալ բաժանում, որի հետևանքով տարաբաշխվում էին և գաղափարական ընթանումները:

Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ա. Խվանովսկու կողմից Շամքորի շրջանում հայտնաբերված ծարիրե ճարմանդի սյուժեն, որի պատկերավոր նկարագրությունը և նիշտ մեկնաբանումը գտնում ենք Ա. Միլլերի մոտ⁷ (նկ. 4):




Նկ. 4. Շամքանդ Շամքորից

⁷ А. А. Миллер, Элементы «неба» на вещественных памятниках, Изв. ГАИМК, 100; Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949, стр. 93.

Ճարմանդի կենտրոնում տևանում ենք սվաստիկայի նշանը, որը հեղինակի կարծիքով խորհրդանշում է արևը և անկյուններում ամպերն արտահայտող շերտոններ, որոնք, կարծես, լրացնում են ճարմանդի կենտրոնում պատկերված երկնքի բոլոր էլեմենտները: Հաջորդ գոտում մենք գտնում ենք սերկիրը», այսինքն՝ լեռները և նրանց միջև եղչերունների ու այժերի պատկերները: Վերջապես, արտարին գոտին ունի թոշունների մի շարք, ըստ երևույթին զրային էակների:

Ըստ էության համաձայնելով Ա. Միլլերի միանգամայն ընդունելի դիտողություններին, պետք է նշենք, որ լեռների միջև պատկերված եղչերուններն ու այժերը կապվում են ինչպես երկրի, այնպես էլ երկնքի պատկերացումների հետ, բանի որ հնագույն ժամանակներում լուսատունները պատկերացվում էին կենդանիների, տվյալ դեպքում՝ այժերի ու եղչերունների տեսքով:




Նկ. 5. Երեսույթին, ճարմանդի դանդառ ուժանի պատկերը

Ըստ երեսույթին, ճարմանդի սիմվոլիկան եղակի չէ Հայկական լեռնաշխարհի համար: Այն հանդես է գալիս նաև ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի խեցեղենի վրա:

Մեկ ուրիշ հետաքրքրական անոթ ծագում է Խանլարի դամբարանագաղտից⁸, ունի ուշ փայլուն մակերես և սպիտակ ինկրուսացիայով կատարված զարդանախշեր, որոնք բաղկացած են կենդանիների պատկերներից, եղանակունիներից, մեանդրներից, անկյու-

⁸ Я. И. Гуммель, Археологические очерки, Баку, 1940, рис. 261-6.

Նիկոներից (նկ. 6): Բ. Պիոտրովսկու կարծիքով, այս անոթի կենդանական պատկերների մեջ ներկայացված են շունը, այծը և քարայծը, իսկ անկյունավոր, եռանկյունաձև և մեանդրավոր զարդամոտիվները նրանց համապատասխանող ոճավորված երկրաշափական օրնամենտներ են⁹:



Նկ. 6. Երեք հորիզոնների արտահայտությունը եանլարից զանգած ամանի վրա

Զառարկելով Բ. Բ. Պիոտրովսկու մեկնաբանությանը, մենք ննթադրում ենք, որ նկարագրված անոթի վրա պատկերված են միայն այծեր՝ իբրև երկինքը խորհրդանշող էակներ: Դրան համապատասխան, եռանկյունաձև զարդանախշերը ներկայացնում են երկրային սիմվոլիկան, իսկ անոթի զարդանախշը երկու կողմերից բոլորդ շրջադժերը՝ ջուրը: Մեանդրի զարդամոտիվը, որ Բ. Բ. Պիոտրովսկու կարծիքով, մետաղի վրա վեր է ածվում վազող ալիքի, տվյալ գեղղբում, խեցեղենի վրա էլ կարող է խորհրդանշել ջուրը:


Այսպիսով, կարելի է ննթադրել, որ այս անոթի զարդանախշերն էլ ներկայացնում են երեք հորիզոնները, տարերի երեք զրկուավոր ուժերը:

Տիեզերքի երեք տարերները այլ արտահայտություն են զըտնում Հայաստանի տարեր վայրերից հայտնի վիշապարերի

⁹ Բ. Բ. Պիոտրովսկий, Խշ. աշխ., էջ 90.

վլաւ: Վերջիններս բազալտե 3—4 և ավելի մետր երկարություն ունեցող մշակված քարեր են, հաճախ վիշապ ձկան տեսքով, քանդակային կենդանակերպ ռելիեֆ պատկերներով, որոնք մարմնավրում են երկինքը, երկիրն ու ջուրը:

Գեղամա լեռներում վիշապալիճ (Թոխմախան գյու) կոչված լճակի մոտ գտնված վիշապաքարերից մեկը¹⁰ իր լայն մասում պատկերում է ցուլի գլուխ, ունի երկու կողմում տեղադրված մեկական օձ, իսկ կենտրոնում՝ արագիլներ հիշեցնող երկու թռչուն՝ հորիզոնական ձողիկի վլաւ (նկ. 7):



Նկ. 7. Վիշապաքար Թոխմախան գյուից

Նկ. 8. Վիշապաքար Այգահան Ցուրտից

Դժվար չէ կունել, որ ցուլի, օձերի ու արագիլների պատկերները կապված են երկնի, երկրի ու ջրի պաշտամունքի հետ:

¹⁰ Н. Я. Марр и Я. И. Смирнов, Вишапы, Труды ГАИМК, 1931, стр. 89.

Աժդանականում (Աժդանա Յուրտում) գտնվող վիշապի¹¹ (նկ. 8) ուսումնասիրությունը կարծես հաստատում է մեր այս գիտողությունը։ Այն իրենից ներկայացնում է ձկան հոկա քանդակ, որը պոչի վերջին մասում կրում է ոճավորված թռչուններ ու նրանց միջև գտնվող ցուլի զլխի ռելիեֆ պատկերներ։ Ցուլի բերանից երկու շիթով ջուր է թափվում։ Ձկան փորի մասում դարձյալ ցուլի կամ եղան զլուխն է՝ կապած նեղ ու երկար իրանին, որից ձգվում են երկու վերջավորությունները։ Մրա երկարությամբ ձկան մեջքի մասով զիգզագաձև գալարվող օձ է պատկերված։



Նկ. 9. Առկե ձուկ Ֆեռնաֆերիցից

Կարելի է ենթադրել, որ Աժդանականի վիշապաբարի թռչուններն ու նրանց միջև գտնվող ցուլի զլուխը իմաստավորում-մարմնավորում են երկնային ուժերը։ Ցուլի բերանից հոսող ջուրը՝ երկնային ջրի խորհրդանիշ է, իսկ ցուլի զլուխն ինքը՝ ամարուպի ու սրոտի մարմնավորումը։ Երկնային տարերքի հետ են կապված նաև թռչունների պատկերները։ Զոհաբերված երկրորդ ցուլը կամ եղը երկրային էակ է և այդպիսով իմաստավորում է երեք զլխավոր տարերքներից մեկը։

Զրային աշխարհը արտահայտված է գալարվող օձի ձևով։ Ինչպես ցույց է տալիս Աժդանականի քարակոթողը, տիեզերքի երեք տարերն այստեղ պատկերված են ձկան մարմնի, այսինքն՝ համաշխարհային օվկիանոս մարմնավորող էակի վրա, որն ունի առանձնահատուկ նշանակություն։ Այս տեսակետից մեր վիշապը կարելի է համեմատել Ֆեռնաֆերիցում գտնված ուկե ձկնիկի հետ, որի վրա տեղադրված են երեք հորիզոնները կամ տարերքները խորհրդանշող գիշատիչների՝ երկիր, թեատրած թռչունի՝ երկիր,

11 Նույն տեղում, էջ 62։

ձկնիկների և ձկնամարմին՝ կնոջ ջուր ունինք պատկերները¹² (նկ. 9):

Ստացվում է այնպիսի տպավորություն, որ ջրային տարերքը խորհրդանշող էակը մի ուրույն հիմք կամ ակունք է մնացած բոլոր սիմվոլիկ պատկերների համար, որոնք մարմնավորում են երկրային ու երկնային տարերքները: Այսինքն՝ ջուրը, օվկիանը ամեն ինչի նախաստեղծ հիմքն է:

Այսպիսով, Հայկական բարձրավանդակի նախաթնիկների, ինչպես նաև շատ ուրիշ ժողովուրդների մոտ ջուրը եղել է այն սկզբնական ուժը, որից առաջացել են երկիրն ու երկինքը:

Այս տեսակետը հաստատվում է միջագետքյան ու հայկական բանահյուսական նյութերով:

Շումերական առասպելներից մեկի համաձայն սկզբնապես գոյություն ուներ միայն նախաստեղծ օվկիանոսը, որից էլ հետագայում անջատվում են երկինքն ու երկիրը: Սեպագրերում այն հանդես է զալիս նամու աստվածուհու կերպարով, որի պատկերական անունը նշանակում է սնախաստեղծ օվկիանոս»: Նա անվանվում է նաև մայր, որը երկնել է երկինքն ու երկիրը:

Քննարկելով այս առասպելը, ամերիկյան նշանավոր շումերագետ Կրամերը գալիս է այն եղբակացության¹³, որ շումերների պատկերացմամբ հողն ու երկինքը ստեղծվել էին նախաստեղծ օվկիանոսից:

Հայկական բանահյուսությունն իր հերթին հարուստ նյութ է ընձեռում այս հարցի վերաբերյալ, իհարկե, իր առանձնահատկություններով և ուրույն երանգներով: «Սամնա ծոերը հերոսավեպը պահպանել է Հայաստանի նախնադարյան տեղարնիկների կոսմիկական պատկերացումների ընդուժված հետքեր, բնության դիմավոր ուժերի կամ երեք տարրերի պաշտամունքը մարմնավորող աստվածությունների էական հատկանիշներ կրող հերոսների կերպարներ և այլն: Շումերական առասպելի նման «Սամնա ծոերում» էլ երկնային օվկիանոր՝ ջուրը դիտվում է իրու համբառենական նախասկզբնավորություն, իբրև ամենաստեղծ, ամենակարող աստվածություն, մայր աստվածություն:

¹² R. Elster, Sumerische göttersymbole auf dem goldfisch von Vetschiesfeld, Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts, Band XXXX, Berlin und Leipzig, 1926; Б. Б. Пиотровский, Археология Закавказья, стр. 93.

¹³ С. Н. Крамер, История начинается в Шумере, М., 1965, стр. 105, 106.

Այն հանդես է գալիս Սովինար (որը միաժամանակ կայծակի կին աստվածության հատկանիշներ է կրում իր մեջ) նախամոր կերպարով, որը զրից հղիացավ ու ծնեց իր երկվորյակ առասպելական տիտաններին՝ Սանասարին ու Ազրամելեքին։ Սրանք էլ իրենց հերթին զրածիններ լինելով հանդերձ հրեղեն են, կրում են ամպրոսի ու կայծակի երկնային աստվածությունների բոլոր հատկանիշները։ Երկնային այդ նույն օվկիանի ծնունդ է Սանասարի հրեղեն ձին՝ Քուկիկ-Զալալիին, որը իսկապես միենույն երևույթի (ամպրոս-Հուր-կայծակի) տարրեր անձնավորումն է։ Նա «թոշում է ամպերն, արեգակ, քամի է ու քամու պես սլանում է իրրե փոթորիկ, շնչով կոտորում և այլն»¹⁴։

Որպես երկնային աստվածություն, արե-Հուր, նա իրար է կապում նախասկզբնական երեք տարրերները՝ ջուրը, երկիրը, երկինքը։

Զրից էին հղորանում Դավիթն ու Մհերը՝ արևի աստված Միհրի նախատիպը, իր արրանյակներով, որոնք սերտորեն կատված էին նախաստեղծ օվկիանի, երկնային ու անդրերկրային աշխարհների հետ։

Անկասկած, հայ դյուցազնավեպի առասպելարանությունն իր արմատներով հասնում է պղնձեքարեղարյան կամ բրոնզեղարյան ժամանակներին և իր ակունքներով խորապես տեղային է։

Պրոֆ. Բ. Բ. Փիոտրովսկին, հենվելով Խորենացու տեղեկության և ասուրական աղբյուրների վրա, մատնանշում է այն հանգամանքը, որ Ասորեստանի Սինաքերիր թագավորին սպանում են նրա որդիները՝ Ազրամելեքը և Սանասարը, որոնք հայոց թագավոր Պարույր Հսկայորդու ժամանակ փախչում են Սանա սարերը և Հիմնավորվում այստեղ։ Այս դեպքերը հիշատակվում են միա 681 թ. տակ մի շաբթ այլ պատմական աղբյուրներում¹⁵։

Հայ առասպելարանության ակունքները մատնանշող՝ միա VII դարին վերաբերող պատմական դրականության տվյալները տարակուսանք չեն առաջացնում այն պարզ պատճառով, որ «Սանա ծոերում» պահպանված տարրեր կրոնական պրիզմաներով անցած, կոսմիկական մտայնությունն ու համկացությունները վաղուց արդեն ձևավորված էին Հայկական բարձրավանդակի խուրիտական բնակչության միջավայրում՝ հին արևելյան առասպելարա-

14. Արեդյան, Հայ ժողովրդական վեպը, «Աղքադրական հանդես», 1908, № 1.

15. Բ. Բ. Պիոտրովսկի, Օ происхождении армянского народа, Ереван, 1946, стр. 20, 21.

նության ընդհանուր ֆոնի վրա և կարող էին, անկասկած, անդրադարձմներ ունենալ պատմական գրականության մեջ հայ ժողովրդի կազմավորման շրջանում և նրանից էլ ավելի վաղ:

Իրոք, խուրրի-շումերական միջավայրում մենք գտնում ենք Սանասարի ու Մհերի ամենամերժավոր նախակերպարներն, որոնց մենք կանդրադառնանք այլ առիթներով: Այստեղ բավարարվենք միայն մի համագործությամբ, որը հետաքրքիր է հայ միջագետքյան կապերի, ինչպես նաև բնության տարրեր տարերքները հաճախ նույն էակի մեջ անձնավորելու տեսակետից:

Շումերա-բարելական հայտնի էպոսներից մեկում առասպելական կիսաստված Գիլգամեշը, որ հանդես է գալիս միաժամանակ որպես արևի աստված, մեր Մհեր-Միհրի նման սպանում է երկնային կատաղի ցուլին, որը յոթ ումպով ցամաքեցրել էր Եփրատի ջրերը և սպանում էր կործանել Ռուռուկը՝ սովից: Երկնային այդ ցուլի մահը իր մեջ պարունակում է նոր կյանքի սաղմեր: Դա հենց արգելափակված ջրի ստացած ազատությունն էր և կյանքի վերածնունդը, որը մեր էպոսում արտահայտված է Մհերի ու առյուծի կոսի միջոցով: «Սասնա ծոերում» էլ առյուծը փակել էր բոլոր բարիքների ճամփան, սպանում էր Սասնա գոյությանը, այդ պատճառով էլ Մհեր-Միհրը սպանում է նրան: Կամ, որ նույնն է, բայց միջագետքյան էպոսին ավելի համապատասխան՝ երբ Սանասարը սպանում է ջրի ճամփան փակող վիշապին, որը էպոսի այլ պատճմներում ներկայացվում է իրրեն արևը խափանող՝ կուլ տվող էակ: Միկնույն ժամանակ Գիլգամեշը մեր Մհերի նման անդրշիրմյան աստվածություն է և արդարադատ դատավոր, այն տարրերությամբ, որ հայկական էպոսում, ինչպես նկատում է Հ. Օրբելին, Մհերի կերպարը երկատված է Մեծ ու Փոքր Մհերների միջև¹⁶, իսկ Միջագետքում այն միասնական է:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Գիլգամեշ-Մհերի պատճությունն էլ իր հերթին հաստատում է Ն. Մարի այն միտքը, թե Հների մոտ ամեն ինչ պատկերացվում էր կոսմիկարար, միասնության մեջ, կոլեկտիվ ձևով: Գիլգամեշի և Մհեր-Միհրի դյուցազնական կերպարներում միահյուսված են երկնի, ծովի (ջրի) և անդրշիրմյան աշխարհի գաղափարները, այսինքն երեք հորիզոնների նախակղբնական գաղափարը:

16 «Սասունցի Դամիթ», Առաջաբանը Հ. Օրբելու, Երևան, 1939, էջ XXVII.

Աւառամնասիրվող ժամանակաշրջանի արվեստի գաղափարական պատկերացումների համար հետաքրքիր է նաև մի այլ հանդամանք: Այդ բանահյուսական, առասպելաբանական նյութերի սյուժեատային ներքին կտակն է հնագիտական պեղումներով ի հայտ բերված կիրառական արվեստի պաշտամունքային: առարկաների, նրանց պատկերազարդման ու զարդանախշերի միջև:

Պատահական չէ, որ միթա V—III հազարամյակներում խորը բիտական, շումերական, էլամական, փոքրասիտական, ինչպես և հայաստանյան վաղ երկրագործական մշակույթների ոլորտներում հանդեմ են գալիս պաշտամունքային խեցեղների ու բազմաթիվ այլ առարկաների հարյուրավոր նմուշներ՝ երկնային մարդակերպ էակների ու կենդանիների պատկերներով, երկրաշափական ու բուսական հարուստ կոմպոզիցիայով, որոնք, անկասկած, կապ ունեն վերը արծարծված կրոնա-գաղափարական պատկերացումների, ժողովրդական էալուսի ու բանահյուսության հետ:


Ուշ բրոնզեդարյան (XIII—X դդ. մթա) դրոշմազարդ փորագիր գոտիների վրա արևի ու տարերքի աստվածությունները պատկերվում են մերթ մարդկային հսկա ֆիգուրներով, մարտակառքի ու ռհրեղենների ձիերի ուղեկցությամբ, մերթ արևանիշ առյուծների ֆիգուրներով, մերթ պարզ երկրաշափական մարմինների ձևով:

Մի շարք առարկաների վրա հաճախ պատկերվում է երկնային հրեշտավոր առյուծի կամ ցուլի գոտիմարտը մարդկային աստվածության դեմ, որ նույնպես հիշեցնում է Գիլգամիշի, Սանասարի Մհերի, Թեշուրի պայքարը շար ուժերի դեմ:

Այդպիսի մի սյուժե է կրում Լեռնային Դարարադի Խոչալիի¹⁷ մթա X դարի հարուստ կուրգաններից մեկում զանված բրոնզն զոտին¹⁷, որից երկու բեկոր է պահպանվել (նկ. 10): Առաջին բեկորի վրա ներկայացված են երեք հորիզոնները խորհրդանշող տարրեր՝ թոշոն, օձ, ցուլեր: Վերջիններին զգոր եղջյուրները ուղեկցվում են լուսատուններ խորհրդանշող շրջանակներով, շնչառելով նրանց երկնային բնույթը: Մյուս բեկորի վրա պատկերված լրիվ զգեստավորված որսորդը կրում է սաղափարտ և լայն զոտի, իսկ ոտքերին՝ խեթերին ու Անդրկովկասի տեղաբնիկներին բնորոշ ցից ծայրերով կոշիկներ: Հերոսի, կիսաստծո կամ աստծո բողով ներկայացված որսորդը ձեռքով բռնել է իր վրա հարձակվող կենդանու ոտքը, որի

17 Б. В. Формаковский, Арханический период на юге России, МАР, СПб., 1914, стр. 37—50.

գլուխը չի պահպանվել, բայց մարմնի հարձակողական կեցվածքը հիշեցնում է կատաղի ցուլի կամ առյուծի: Մի բան պարզ է, որ դորժողությունը կատարվում է երկնքում, ճիշտ այնպես, ինչպես պատահեց Գիլդամեշի հետ: Գոտու օյուժնն հավասարապես մոտ է թե Գիլդամեշի, թե Մհերի պայքարի պատմությանը:




Նկ. 10. Բրոնզե դռափ Խոշալիից

Մեծ Հետարքքություն են ներկայացնում նաև նախառարտական և ուրարտական արվեստի հուշարձաններում եռկենցաղ ֆանտաստիկ կենդանիների պատկերները, որոնք կրում են ջրածին, ջրեղբն և երկրային էակների հատկանիշներ, ինչպես Քուռկիկ Զալալին և, վերջապես, պաշտամունքային արվեստի մի շարք այլ հուշարձաններ, որոնց վրա արևն ու երկնային լուսատունները ներկայացված են իրենց թռչում-արքանյակներով, ինչպես Մհերը պառավ թոշունի միջոցով: Այս նյութերին կանդրադառնանք ստորև:

Մենք հեռու ենք բրոնզեգարբյան և հին արևելյան մի շարք առասպելների նույնանման մեկնարանության գաղափարից, սակայն համոզված ենք նրանց ակունքների և այուժների ընդհանրության, նրանց ժադումնաբանական սերտ աղերսների առկայության մեջ:

Վերը հիշատակված պաշտամունքային առարկաների հետ սերտորեն կապվում են Դիցինի նախառարարտական շերտից հանված կա-

վե մեծ տախտակը և զոհասեղանը փրենց ռելիեֆ պատկերներով¹⁸, Այն հանգամանքը, որ զոհասեղանը գտնվել է մօխրի հաստ շերտի հարեանությամբ, ենթադրել է տալիս, որ այն ունեցել է պաշտամունքային նշանակություն, ուզեկցված զոհարերություններով ու ծիսակատարություններով: Այդ եղբակացությանն է բերում նաև «զոհասեղանի» կոմպոզիցիայի մանրամասն ուսումնասիրությունը (նկ. 11):



Նկ. 11. Կավե տախտակ Դվինի մեջանից

Նրա վերին մասում տեղավորված են մարդկային, կամ ավելի ճիշտ, մարդակերպ բարելիեֆ գլուխեների երկու շարք (վերևում՝ 5

18 Զոհասեղանը հրատարակված է Կ. Ղաֆարյանի կողմից՝ «Դվին քաղաքի հիմնադրման ժամանակի և միջնարեզրի հեթանոսական մեջանի մասին» հոդվածում («Պատմա-բանասիրական հանդես», № 2, 1966, նկ. 6):

պլում, ներքեսում՝ 2), որոնք կարելի է ենթադրել, իրենցից ներկայացնում են երկնային լուսատունների մի համաստեղություն՝ տղամարդու և կանանց դեմքերով։ Վերջինների դիմուց ցած են իշխում երկար վարսեր և խոշոր ալիքներ կազմելով միանում իրար։



Երկնային ջուրը մարմնավորված է հորիզոնական գալարվող օձի ռելիքֆ պատկերով, որից ներքին նույնպես ռելիքֆ խտացված եռանկյունների միջոցով արտաքերված են լեռների կամ երկրի գաղափարը։ Կավե այս գոհասեղանը մեծ արժեք է ներկայացնում ոչ միայն նախահայերի աշխարհայացքի պարզաբանման տեսակետից, այլև վաղագույն քանդակագործության մի հոյակապ նմուշ է։

Դիմինի նախառարտական «գոհասեղանի» պատկերը լրացվում է նույնքան հետաքրքիր ու նշանակալից վերադիր ու օրնամենտներով զարդարված սև, պաշտամունքային խեցեղենի այլուժեներով։ Սրանք էլ կրում են տիեզերքը ներկայացնող երեք խոշոր տարրերի պաշտամունքի հոյակապ պատկերներ։ Այս խմբի կարապատիպ հոկա անոնթներից մեկն իր վերին մասում ունի աստղագարդ երկնի պատկերը՝ կլոր շրջանակներով արտահայտված, միջին ժամում՝ վայրի ու զիշատիշ կենդանիների, որսի աստվածության միջոցով ներկայացված է երկիրը, և վերջապես, երրորդ գոտինը բոլորում է գալարվող մի օձ՝ չըի խորհրդանիշը։

Բնության երեք հզոր տարրերի արտահայտության հետաքրքիր պատկեր է ներկայացված Ղարաբաղում գտնված մի գոտու վրա, որն այժմ պահպանվում է Պետական Էրմիտաժի կովկասագիտության բաժնում։ Այն կազմված է երկու բեկորներից, որոնց զարդանախշերը արտահայտում են նույն Դիմինի խեցեղենի գաղափարը, սակայն բրոնզեդարյան նկարիշ-քանդակագործն այստեղ գտել է արտահայտչական այլ միջոցներ (նկ. 12)։

Ղարաբաղի գոտու արտաքին մակերեսը բաժանված է երեք քառանկյունի շրջանակների, որոնք զարդարված են երկրաշափական և կենդանական մոտիվներով։ Ենթարունական շրջանակը լցված է վաղող պարույրների շարքերով, որոնք իրար են միանում կետազարդ շերոնների միջոցով։ Եղրային արտաքին շրջանակը լցված է հակադիր եռանկյունների ու ալիքավոր գծերի պատկերներով։ Հավանական է, որ այս երկու շրջանակներում խորհրդանշված են լուսատունները (պարույրներ), լեռներն (եռանկյուններ) ու ջուրը (ալիքավոր գծեր), ինչպես Դիմինի գոհասեղանի վրա։ Երկրորդ (միջին) և ամենահետաքրքիր շրջանակը կազմված է երկրաշափական և կան և կենդանական մոտիվներից, արտահայտչական իր ձևերով։

24. 12. ရွှေပန်လက်ချေမှုများ (Lacquerware)



բովանդակությամբ անխզելիորեն կապված է ներքին ու արտաքինչ շրջանակների հետ։ Նրա լուրաքանչուր կեսում պատկերված է ֆանտաստիկ կենդանիների հակադիր ուղղություններով շարժվող մեկական քառյակ՝ կազմված թոշունների, գիշատիչների, ցուկերի, խոյագլուխ սողունների ու վիշապաքաղերի պատկերներից։ Ինչպես երևում է նկարներից, սրանք բոլորն էլ երկնային օվկիանի ներկայացուցիչներն են, ունեն լողացող կենդանիների վերջավորություններ կամ պարզապես լողակներ, բայց նաև երկրային էակների հատկանիշներ։

Սրանք էլ վիշապ-վիշապաքաղերի տարրեր դրսեորումներն են, որոնց մենք կանդրադառնանք հաջորդ՝ ամպրոպի ու տարերքի պաշտամունքին նվիրված զվարում։

Երեք տարերքների պաշտամունքը հարատեսմ է հայերի մեջ երկար ժամանակ և ունի իր իրեղին ապացուցները վազ հայկական աքեմենյան ժամանակաշրջանի հնագիտական նյութերում։

Արմավիրի միա VI—V դդ. ոսկյա մանյակի նկարագրությունը կարող է համոզել, որ բնապաշտ հայերի տիեզերական պատկերացումները էական որոշակի փոփոխությունների շէին ենթարկվել և հայոց կազմավորման շրջանում։

Մանյակը պատրաստված է ոսկյա բարակ թիթեղից, ագուցված երկնագույն և աև քարերով։ Այն ներկայացնում է բնության երեք տարերքներին վերաբերող մի կոմպոզիցիա։

Սրա երկու ծայրերը վերջանում են թոշունի գլուխներով։ Թոշունների մարմիններն ու պոշը շափազանց նման են ձկան, նույնիսկ դժվար է հստակորեն տարբերել թոշունի մարմին է դա, թե ձկան։ Նրանց միջև եղած տարածությունը զրաղեցնում են երեք կենաց ծառ։ Թոշունը, ձուկը և կենաց ծառերը տիեզերքի երեք հորիզոնների՝ ջրի, երկրի և երկնքի խորհրդանիշներն են։ Մանյակի երկայնքույթ անցնում են բուսական զարդամոտիվ ունեցող կախիկներ (նկ. 13)։

Հայ բանահյուսության մեջ երեք հորիզոնների գաղափարը արտահայտված է Վահագնի առասպելում։ Մ. Արեգյանը մատնանշում է, որ Վահագնի՝ ամպրոպի աստծու ծննդյան ժամանակ հավասարապես երկնում են երկինքը, ծիրանի ծովը և երկիրը։ Այդ երեւյթը նկատվում է շատ ժողովուրդների մոտ և, ինչպես գրում է Մ. Արեգյանը, Մաքս Մյուլլերի՝ համեմատական առասպելաբանության հիմնադրի կարծիքով, ամպրոպային աստվածության ծնունդը երկնքից և երկրից շատ բնական երեւյթ է, քանի որ փո-

թորիկը առաջանում է երկնքից, ուստի և նա ամպրոպային աստծու հայրն է; Սակայն «փոթորիկն առաջանում է և հեռու հորիզոնում երկրի վրա, ուր երկիրը թվում է թե գրկախառնվում է երկրների հետ», ուստի և երկիրն ամպրոպային աստծու մայրն է¹⁹:



Նկ. 13. Ասկե մանյակ Ալբագիրից

Հայ միջնադարում էլ տարերքի այս երեք ուժերի պաշտամունքը, ըստ երևույթին բավական հաստատուն արմատներ ուներ ժողովրդի լայն խավերում:

Այդ երեսում է Փաշտահղում պատահականորեն գտնված կալե մի տախտակից²⁰, որի վրա պատկերված կենդանական ու բուսական պատկերները հենց այդ են ապացուցում²¹: Այդ կենդանիներն ու բույսերն են՝ ձուկը (ջուր), կենաց ծառը, երկու կողմերում մի եղջերու և եղնիկի նմանվող մի կենդանի է պատկերված: Վերջինս իր ձագուկի հետ է: Մրանց հաջորդուած են երկու գիշատիչ և նստած մի եղնիկ կամ նման մի կենդանի: Անկասկած, սրանք բոլորը երկրային էակներ են և խորհրդանշում են մայր հողը, մայր

19 Ա. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, «Աղքաղրական հանդես», XXVII, 1908, N 1, Թիֆլիս, էջ 133—136:

20 «Отчеты Императорской археологической комиссии за 1892 год», СПб., 1894, стр. 86, рис. 49.

21 Ա. Ա. Քալանքարցյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, աղ. XXXVIII, 1:

աստվածությունը: Նկարագրվող տախտակի ստորին մասում բուռական զարդանախշ է պատկերված և նրա կողքին կանգնած մի թոշուն, որը ներկայացնում է երկնացին՝ վերին հորիզոնը:

Հեթանոս հայերի կողմից բնության այս տարրերի պաշտամունքը խիստ պատկերավոր է նկարագրված V դ. պատմիչ, նշանավոր փիլիսոփիա Եղնիկ Կողբացու մոտ:

Ինչպես տեսնում ենք, անհիշելի ժամանակներից եկող և գեռես վաղ միջնադարում պահպանված նախնադարյան տիեզերական հասկացությունները տարերքի գլխավոր ուժերի կամքինչպես ընդունված է ասել «Երեք հորիզոնների» մասին, ընկած են նախնադարյան Հայաստանի ցեղերի ու ժողովուրդների գաղափարաբանության հիմքում, իբրև բնապաշտական մտածողության ամենահիմնական, էական հավատալիք-պաշտամունքներից մեկը: Սրանով են պայմանավորվում ու սրա հետ առնչվում բնապաշտական շատ երկույթներ, որսորդական, անասնապահական ու երկրագործական հավատալիքներ, պաշտամունքներ, ծեսեր ու արարողություններ:

ԱՐԵՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ

Արևի պաշտամունքը Հայաստանում ծայր է առել հնուց և հազարամյակներ հարատեսել տեղաբնիկ ցեղերի ու նրանցից կազմավորված Հայ ժողովրդի հավատալիքների ու գաղափարական պատկերացումների մեջ:


Նախնադարյան ժամանակներից մեզ հասած նյութական մշակույթի մնացորդները, ինչպես նաև Հայ ժողովրդական բանահյուսության ու ազգագրության հարուստ տվյալները հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմելու արևի պաշտամունքի մասին Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների մոտ՝ կապված ամենատարեր պատկերացումների և հավատալիքների հետ:

Այս ինդրի լուծմանը էապես օգնում են նաև Հին Արևելքի, Միջագետքի ու Եգիպտոսի առասպելները, որոնց միջոցով հնարավոր է դառնում հնագիտական առարկաների վրա պատկերված կոմպոզիցիոն սյուժեների ավելի խոր մեկնարանումը:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ բրոնզեդարյան Հայաստանի բնիկները արևին վերադրել են արարչական զորություն, պաշտել են նրան որպես զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերրնական ուժի: Այդ պատճառով էլ բազմաթիվ առարկաների վրա նրանք պատկերել են արև՝ երկրաշափական մարմինների, ինչպես և զանազան կենդանիների տեսքով:

Ինչպես Հին Արևելքի, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի համար բնորոշ է արևի անմիջական կապը անիվի, ավելի ճիշտ՝ ճառագայթավոր անիվի հետ, որը պարզապես նրա սիմվոլիկ արտահայտությունն է: Այդ պատճառով էլ Հայաստանի բրոնզեդարյան արվեստի հուշարձաններում հաճախ են հանդիպում անիվածել սկավառակներ (ինվ. 740, 20/237, 20/84, 2088): բազմաթիվ ճառագայթներով և զարդանկար բարդ մոտիվներով, առանձին կամ կրկնակի սկավառակներ, որոնց վրա ամրացված են թուղթների


փոքրիկ ֆիգուրներ կամ շղթաներով կախված բրոնզե ծակոտկեն
թոշնակներ (նկ. 14 և 2, 3):



Լճաշենի, Շամշադինի, Ախ-
թալայի, Ծեղկին լազերի և այլ
դամբարաններում¹ հանդիպում
են նաև բրոնզե և ծարիրե խա-
չեր, սվաստիկաներ կամ խաշա-
զարդ սկավառակներ: Դրանց մի
մասի վրա էլ նույն պատկերները
արված են ոելիհետ զարդերի կամ
փորագրության տեխնիկայով
Հնկ. 15):


Սակայն արևը ավելի ոեա-
լիստորեն է պատկերված Գեղա-
մա լեռների ժայռապատկերնե-
րում (նկ. 16): Բացի սրանցից
այսուղ հանդիպում են նաև ա-
րևի սիմվոլիկ նշաններ՝ սվա-
ստիկաներ, խաչեր (նկ. 17, 2):

Կան բազմաթիվ կոմպոզի-
ցիոն սյուժեներ, որոնք արևը




¹ С. А. Есаян, Амулеты, связанные с культом солнца из Армении, «Советская археология», № 2, 1968, рис. 2 - 3; Թէշպեն Նաև Վետական Եր-
միուած, թնդ. 1799,

նկ. 14ա, 14բ. Արևը խորհրդանշաց
բրոնզե կախիկներ




Նկ. 15. Արեւ խորհրդանշով բրանգե և ծարիրե իրեր




Նկ. 16. Արեւ պատկեր Գեղամա
լեռներում

պատկերված է չորս կողմը տարածած ճառագայթներով, շրջապատված իրական և կիսաֆանտաստիկ կենդանիներով (նկ. 18:). Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ժայռափոր կոմպոզիցիաներում արևի մարդակերպ աստվածությունները, որոնք շատ հաճախ ուղեկցվում են զանազան կենդանիների և իրիսկ՝ արևի երկրաշափական պատկերներով (նկ. 19₁, 2, 3): Ալրաստվածությունները ներկայացնում են ձեռքերի, հաճախ էլ ոտքերի մատները շուծ (ճառագայթների նմանվող) մարդկային ֆիգուրներ (նկ. 20_{1, 2}): Հաճախ այս էակները ճառագայթներ են արձակում ոչ միայն ձեռքերից ու



Նկ. 17. Արեւը խորհրդանշագործ պատկերներ




Նկ. 18. Արեւը և նրան շրջապատող կենդանիները՝
ժայռապատճեն կումպազիցիա Թեղամա լեռներից

առքերից, այս զլիսից կամ իրանից: Արեւի աստվածության նման
պատկերացումը բնորոշ է նախնադարյան արվեստի համար, ինչ-
պես այդ երեսում է այլ երկրների ժայռապատկերներից²:
Հին հայերի մոտ, դեռևս Եղիսիկ Կողբացու ժամանակներում
(մթ V դ.) և ավելի ուշ, շարունակում էր պահպանվել արեւի

² Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Խոջիկյան, Գնդամա լեռների ժայռապատճենները, Երևան, 1970, հկ. 310, 318, 321:

պաշտամունքը: Բանավիճելով հեթանոսական գաղափարաբանության դեմ և փառարանելով քրիստոնեական դոգմատիկան, Ե. Կողբացին բերում է հեթանոսական պաշտամունքի դիպուկ մնկնաբանման օրինակներ: Նրա կողմից բերված պաշտվող արևի նկարագիրը կարծես ընդօրինակված է մեր հնագիտական նյութերից:



Նկ. 19. Ժայռափոր կոմպոզիցիաներ արևի երկրաշափական և մարդակերպ աստվածություններով (Գեղամա լեռներ)


«Եւ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարծք զնորաբնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան: Եւ ինքն մի է և բազում, և բազում է և մի. որպէս արեգակն մի է և բազում, զի մի անիւ է և բազում ճառագայթք»:

Բազմաթիվ դեպքերում արևը խորհրդանշող երկրաշափական պատկերները կապված են երկնային այլ լուսատուների սիմվոլների հետ: Այսպիս, Կիրովականում հայտնաբերված մթա VIII դարի բրոնզե մի գոտու վրա արևը պատկերված յոթ թևանի աստղի ձևով³, թևերի միջև տեղավորված շրջանակները արևի շուրջը

³ A. A. Martirosyan, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 216, рис. 85.

պտտվող լուսատուներ են: Հետքավոր է, որ այս յոթնյակն ամբողջությամբ արեգակնային մի համաստեղություն է ներկայացնում, որը գտնվում է երկրաշափական այլ տարրերի ու ոճավորված կենդանիների՝ հավանաբար, խեցգետինների շրջապատում (նկ. 21):

Արևի և լուսատուների պաշտամունքի հետ կապված նման մոտիվների մեջ հանդիպում նաև խեցեղեն առարկաների վրա:




Նկ. 20. Արևի մարդակերող առավածություններ՝ հառագայթող մատներով (Գեղամա լեռներ)

Հետաքրքիր է Արթիկի ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարի (XII—VIII դդ. մթա) դամբարաններից մեկում գտնված մի ու կճուճ, որի վրա պատկերված եռանկյունիներն ու նրանց միջև զետեղված սվաստիկաները խորհրդանշում են լեռներն ու արեւ:

⁴ T. C. Խաչատրյան, Материальная культура Артика, Ереван, 1963, стр. 128, табл. 29, 3.

Հայաստանի տարբեր վայրերում գտնված վաղ երկաթի ժամանակաշրջանի սև և մոխրագույն խոշոր անոթների ու սափորների իրանների վրա (Կիրովական, Գոլովինո, Լալվար և այլն)⁵ ներկայացված են ռելիեֆ կենտրոնական գնդիկներ և սև փայլով ձառագայթվող բազմաթիվ շառավիղներ, որոնք զետեղված են կամարաձև կիսաշրջանների մեջ։ Անշուշտ, զրանք էլ երկնակամարում շողացող արևի արտահայտություններ են (նկ. 22, 2):



Նկ. 21. Բրոնզե գուտի Կիրովականից՝ արևի և յուսատունների պատկերներով զարդարված

Հնարավոր է, որ արևի խորհրդանիշներ կրող այս անոթներն ու սափորները հնում օգտագործվում էին նրա պաշտամունքին նվիրված ծիսակատարությունների ու արարողությունների ժամանակ։

Արևի և անիվի նմանությունից բնականորեն կարող էր ծագել նաև արևի և սայլի, կառքի, մարտակառքի իմաստաբանական կապը։ Այս տիպի առասպելական ու զրաֆիկ պատկերներ առանձնապես հաճախ են հանդիպում արևելյան միջերում և արվեստի հուշարձաններում, ինչպես նաև հայոց առասպելներում, հերիաթներում և բրոնզեդարյան գոտիների պատկերագարդ սյուժեներում։

Լաւշենի հարուստ կորդաններում հայտնաբերված սայլերի առանձին մասերի վրա փորված են երկնային մարմիններ խորհրդանշող զարդանախշեր՝ արևներ, խտացրած պարույրներ, համա-

6 A. A. Martirosyan, Խնկ. աշխ., XXII, 1, 2:

կենտրոն շրջանակներ (9 կուրգանում զտնված սայլի առջևի և հետուի մասի տախտակները):⁶

Հստ այդ պատկերների արևը երկնակամարում իր պատույտը կատարում էր հրեղեն ձիերով կամ եզներով լծված սայլի կամ կառքի վրա, երբեմն էլ նավակով շրջագայում էր երկնային օվկիանոսում (իր բրոչ):⁷ լուսնի հետ միասին:



Նկ. 22. Կազե աժանճեր արևի պատկերներով զարդարված՝ կիրովականից


Այդպիսի մի պատկեր է ներկայացնում 1902 թ. Զելանդ կրղում հայտնաբերված բրոնզեգարյան անիվավոր սարքը, որի վրա դրված է արևի օղաձե սկավառակը (նկ. 23), որը մի կողմից ծածկված էր ոսկե թիթեղով, կապված է եղել ձիու հետ⁷:

Համանման մոտիվ է ներկայացված Հայկական լեռնաշխարհում՝ Ախթալայի մթա VIII դարի դամբարաններից մեկում Մորգանի կողմից հայտնաբերված բրոնզե զոտու բեկորի վրա: Այստեղ պատկերված է երկձի մարտակառը կամ երկանիվ՝ սայլ՝ մարդկարար կառավարով, որն իր ձեռքում ունի սկավառակատիպ մի առարկա:⁸ (նկ. 24):

⁶ A. O. Միացական, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан, «Советская археология», 1960, № 2.

⁷ A. A. Миллер, նշվ. աշխ. էջ 125, Alfred Jeremias, Handbuch der altorientalischen geisteskultur, Berlin und Leipzig, 1929, էջ 365, նկ. 195.

⁸ J. de Morgan, Mission scientifique au Caucase, t. I, Paris, 1899, էջ 141, նկ. 145:



Նկ. 23. Ասկե ձիառարք արեի սկավառակով։ Զելանդ կղզուց



Նկ. 24. Արեի սատվածության պատկերը Արբաւայի բրոնզե դոմուց

Կարելի է հնիթագրել, որ սային նստած էակը՝ ինը արևային սատվածությունն է:

Երկնային սյուժե ունի նաև Լճաշենում Հայտնաբերված բրոնզե գոտին, որի միջին մասը, դժբախտաբար, բավականաշատ վնասված է:

Գոտու եզրերը բոլորում են երկշարք վաղող պարույրներ, կենարունական մասում տեղ գտած պատկերները ներկայացնում են

Հասակով մեկ կանգնած երկու հականեր կամ երկաստվածություններ, որոնցից մեկը կառավարում է ձիերով լծված կառը: Մարդու դիմքի մոտ գտնվում է շրջանակ կամ գունդ, որը պետք է որ արևի կամ լուսատուի իմաստ ունենա: Սայլը երկանիվ է: Անիվների շառավիղները փոխարինված են ժաղկածե զարդանախշերով:

Զիերն ունեն նեղ, երկար իրաններ, ոտքերը ոչ թե սմբակավոր են, այլ ավարտվում են մազիլներով: Ցածի ձիու մոտ դարձյալ նույն շրջանակն է պատկերված: Երկու ձիերի առջևում երկու թոշուն են կանգնած: Մրանցից հետո՝ դարձյալ հակայամարմին մարդկային էակը կամ դյուցազնը: Այստեղ գոտին վնասված է... մնում է ենթադրել, որ այս էակն էլ ուղեկցում է սայլին: Գոտու բեկորի վրա պահպանվել են երեք ձի, հավանաբար դրանք շորսն են եղել: Մարդկային ֆիգուրների տարրեր մասերում փորագրված են մի քանի շրջանակներ և երկարավիզ շրային թոշուններ, որոնք կարգված են արևի պաշտամունքի հետ, ինչպես նաև ամպրոպի ու կայծակի գաղափարն արտահայտող սակրածե երկրաշափական մարմիններ:

Հին Միջագետքում, Եգիպտոսում և Հունաստանում արևը նույնպես շրջագայում էր հրեղեն ձիերով լծված սայլակով, կառով կամ մարտակառով:

Շանտեպի դե-լա-Սոսեյը զրում է, որ «Բարեկունյան արձանագրությունների մեջ հանդիպում է նաև արևի աստծո պոետիկ կերպարը, որը իր ծառաներով գնում է արևային կառքի մեջ բազմած, կառավարելով նրան լծված հրեղեն ձիերը, որոնց ծնկները հոգնել շգիտեին»:

Շումերական նաննար աստվածը ռամեն երեկո նստում էր իր նավակը և կամաց սահում երկնակամարով: Հոգնելով, նա իջնուի էր երկնային օվկիանի շրերը՝ հանգստանալու և նրան փոխարինում էր Ուտուն (որդին), որը երեան էր գալիս արևելյան հորիզոնում: Նրա դեմքը փայլում էր շատ ավելի վառ, քան իր հորը և նրա ճառագյթների տակ խամրում էին աստղերն ու մոլորակները: Հսկայական կառով սլանում էր երկնքով և նրա ժպիտը պայծառացնում էր երկիրը⁹: Հայտնի է, որ Ուտուն արևի աստվածն էր:

Իր սյուժենով լճաշենի գոտուն շատ մոտ է կանգնած նաև Լեռնային Դարաբաղի հաշրուկաղ կռչվող դամբարանադաշտի 1962 թ.

⁹ Л. Г. Реддер, Мифы и легенды древнего Двуречья, М., 1965, стр. 29.

պեղումներով Գ. Պ. Քեսամանլու կողմից № 4 քարարկղում (XI—VIII դդ. մթա) հայտնաբերված բրոնզե գոտու բեկորը¹⁰ (նկ. 25): Սրա եղբերը զարդարում են երկու կողմից գծիկներով շրջապատված նույն երկշարք վազող պարույրները: Գոտու վրա պատկերված են մարդկային երկու էակներ: Նրանցից առաջինը մի ձեռքում վահան է բռնել, մյուսում՝ նիզակ: Գլխին կրում է փետրավոր բարձր զիսարքի: Վահանից ցած կա մի փոքրիկ շրջանակ՝ մեջը իրար հատող գծերով:



Նկ. 25. Բրոնզե գոտի Խաչբուլակից


Մարդակերպ մյուս էակը զինված է նետ ու աղեղով: Նետի մոտ պատկերված են սակրածե մարմիններ: Մարդկանց միջև գտնվում է ձիերով լծված երկանիվ կառքը: Զիերն ունեն նեղ, երկար իրաններ և համեմատաբար կարճ վերջավորություններ: Սրանք շատ մոտ են լալայանի կողմից Սևանի ավազանում հայտնաբերված գոտու ձիերին (նկ. 26):

Սայլի անիմների շորսական շառավիղները նման են հառագայթների փնջերի, ըստ երևույթին, դրանով իսկ կամեցել են շեշտել անիմների և սայլի կապը արևի հետ: Այստեղ սայլը ուղեկցում է առջեւում կանգնած հսկայամարմին էակին: Երկրորդ մարդակերպ էակին ուղեկցում են ցուկեր և եղջերուներ: Հնարավոր է, որ մարդակերպ այս պատկերները տարբեր պաշտամունքներ են արտահայտում: Նրանցից մեկը կարող է ներկայացնել արևի աստվածությունը՝ ուտքերի մոտ գտնվող սիմվոլիկ հառագայթավոր շրջանակով:

Մյուսին ուղեկցող ցուկերն ու եղջերուները, ինչպես նաև սակրատիւ մարմինները, բնորոշ են ամպրոպի ու կայծակի աստվածությունն համար:

¹⁰ Г. Кесаманлы, Погребение с бронзовым поясом из Хачбулака, «Советская археология», № 3, 1966, стр. 221, рис. 4.

Ուստի, պետք է ենթադրել, որ այս գեղքում մենք գործ ունենք ամպրոպի (տարերբի) աստվածության հետ։ Հետաքրքիր է, որ արևելյան և հին հայկական առասպելաբանության մեջ էլ արևի և ամպրոպի աստվածություններն ամենուրեք հանդես են գալիս միատեղ, ինչպես այդ դիտվում է Ղարաբաղի նորահայտ և բրոնզեդարյան ու ուրարտական մի շարք այլ գոտինների վրա։



Նկ. 26. Բրոնզե դատու բեկոր Մեանի ավագանից

Հաճախ կառքի փոխարեն արևը հանդես է գալիս նավակով, երկնային օվկիանոսում շրջադաշտին։

Հայկական ժողովրդական բանահյուսության, ինչպես նաև արևելյան դիցաբանության մեջ բանաստեղծական նման կերպարներ շափազանց հաճախ են հանդիպում։

Մի ծով կա, երեսին բիր ու ախագեր ման են գալի գյամով¹¹։

«Ախագերն ու բիրը» մեկնաբանվում են իբրև արևի և լուսնի աստվածություններ։

Նախնազարյան արվեստի հայաստանյան ու անդրկովկասյան հուշարձանները մատնանշում են այս գաղափարի շափազանց հինավորը՝ նեղլիթյան կամ էնեոլիթյան ակունքները։

Նավակներով մարդկանց պատկերներ, շափազանց շատ ու հետարբրական, ներկայացված են Կորիստանի ժայռագիր հուշարձաններում, այնպիսի մի վայրում, որը բոլորովին կապ չունի ծովի

11 Ա. Հառարյանիան. Հայ ժողովրդական հաներուկներ. Երևան, 1965, էջ 7։

կամ չրային երթևեկության ուղիների հետ։ Նույնը մենք տեսնում ենք և Հայաստանում։ Հասկանալի է, որ այս նավակները և նրանցում գտնվող արարածները ոչ մի կազ չունեն իրական ծովի, ոճալ, կենսական երևոյթների հետ և իրենցից ներկայացնում են կրոնագաղափարական կամ առասպելական պատկերների արտացոլում։

Ա. Քալանթարի կողմից Սրադածում հայտնարերված ժայռանկար կոմպոզիցիաներից մեկում ներկայացված է արևի սրաշտամունքն արտահայտող այդպիսի մի սյուժե¹² (նկ. 27):



Նկ. 27. Ժայռապատկեր Արագածից

Կոմպոզիցիան բաղկացած է երկու մասից։ առաջին մասում (ներքեմ շարքում) պատկերված են ձեռքերը վեր բարձրացրած մարդիկ, որոնցից երկուար միահյուսված են մի մարմնի մեջ։ Նրանց ուղիկցում է ինչ-որ շորքուտանի։ Սրանցից աջ ներկայացված է լուսնաձև, միևնույն ժամանակ ձկան նմանվող մի մարմին՝ տեղավորված ոճավորված էակի (կենդանու կամ մարդու) գլխավերիւում։

Արևի աստվածությունը ներկայացված է կոմպոզիցիայի ձախ մասում՝ նավակին կանգնած, թևերը վեր պարզած մարդու կերպարնքով։

12 Ա. Ա. Քարսեղյան, Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստն պատմության վերաբերյալ, «Պատմ-բանահրատկան հանդես», № 3, 1966, նկ. 7.

Սրանից քիչ հեռու գալարվող օձ է պատկերված:

Կոմպոզիցիայի երկրորդ մասը ժայռանկար պատկերաբան-դրակների վերին շարքն է, որտեղ երկու մարդ իրենց ձեռքերի վրա պահում են մի նավակ, մեջը նստած մարդով: Մարդկանցից մեկի գոտկատեղին նիզակ է ամրացված: Սրանց հաջորդում է շրբո-տանու վրա կանգնած մի մարդկային ֆիգուր, նույնպես վեր պար-դած թևերով: Այսուհետեւ փորագրված են դարձյալ մարդիկ՝ տարբեր կենդանիների հետ միասին:

Թվում է, թե այս կոմպոզիցիայի առաջին մասում մենք գործ ունենք դիշերվա իմաստն արտահայտող սլուժեի հետ, որի համար հատկանշական է լուսնաձև մարմինն ու նավակավոր մարդը, որը, ամենայն հավանականությամբ, մայր մտած արևի գաղափարն է արտահայտում, մինչդեռ՝ երկրորդ շարրում նավակը պահված է բարձր՝ ձեռքերի վրա՝ իրեն ծագող արևի խորհրդանիշ, որն իր նա-վակով շրջում է երկնակամարում կամ երկնային ծովում: Ճիշտ նույն ձևով է պատկերվում արևը վերը նշված հանելուկներում:

Հին Եգիպտոսում արևի նուաստվածք երկնակամարում շրջա-գայում էր առագաստանավով: Եգիպտոսի մեռած փարավոններն էլ թաղման ժիստատարությունների ժամանակ ներկայացվում էին նավակով: Այս արարողություններից և պահպանված բնադրերից պարզ երևում է, որ Եգիպտական թագավորը, Հների պատկերաց-մամբ համազոր էր նուաստծուն:


Արևի պաշտամունքի հետ կապված մարդակերպ աստվածու-թյունը նախնադարյան արվեստի հուշարձաններում էր պատկերվում է առանց կառքի, սայլակի կամ նավակի:

Ունակի (Ակներ) դամբարաններից մեկում (մթա VII—VI դդ.) թաղայշվիլու կողմից հայտնաբերված բրոնզե զաշունա-պատյանի վրա (էրմիտաժ, ինվ. 1673) ներկայացված է շափազանց հետարրիդ մի կոմպոզիցիա՝ արտահայտված դրվագման տեխնի-կայով ստացված գնդիկների միջոցով¹³ (նկ. 28):

Այսուղեղ արևը միաժամանակ պատկերված է և երկրաշտիա-կան տարրերի ձևով և մարդկային կերպարանքով:


Ամբողջ պատկերը պատյանի վրա բաժանված է երեք մասի. վերին մասում զետեղված է մեծ շրջանակ, որի կենտրոնից տարած-վում են բազմաթիվ շառավիղներ: Շրջանակի կենտրոնական շառա-

13 A. A. Martirosyan, Раскопки в Головине, Ереван, 1954, табл. XVII, 8.



Նկ. 28. Բըռնղեղ զուռու
ովասյան (Ըրդիստած)

58



Նկ. 29. Բըռնղեղ զաշույշ
Զարիսկչից

վիզներից մեկը ուղղահայաց իշնում է մինչև նռաշարք կորերը, որոնց ժայթերը հարում են շրջանակին:

Երկրորդ մասի վերևում և ներքեւում պատկերված են եռաշարք անկյուն կազմող թերեր, և կորեր, որոնց միջև եղած տարածությունը զբաղեցնում է մարդակերպ էակը՝ վեր պարզած թերով և տարածած ոտքերով: Նրա երկու կողմերում սվաստիկաներ կան, իսկ զլիավերեւում և ոտքերի մոտ՝ փոքր շրջանակներ:

Երրորդ մասում՝ պատյանի ծայրում, նույն սև եռաշարք թերերն ու կորերն ան և նրանց միջև տեղավորված շրջանակը՝ մեջը խաչվող զնդիկավոր գծերով:

Պետք է նեթաղրել, որ պատյանի երեք մասերում արտահայտված է արևը՝ տարբեր ձևերով: Վերին և ներքին մասերում այն ունի երկրաշափական արտահայտություն, որը շատ մոտ է արևի ճառագայթավոր անիվի պատկերին, իսկ մեջտեղի մասում նա ունի մարդկային կերպարանք: Մարդու երկու կողմերում պատկերված սվաստիկաները ընդգծում են նրա արեային բնույթը: Շատ հնարավոր է, որ մարդը՝ ինքը արև-աստվածն է:

Հայաստանի Կույրիշի (Ջարխսէ) դյուզում 1957 թ. Հայտնարերված մի դաշտունի վրա պատկերված են արևը խորհրդանշող սվաստիկաներ¹⁴ (նկ. 29):

Ինչպես վերը նշեցինք, լճաշենի և մի շարք այլ գոտիների ու իրերի վրա արևը ներկայացվում է նաև իրրե թռչուն:

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ էլ արևը համախ է ընդունում թոշունի կերպարանք: Այդ միտքը արտահայտված է.

Մել (մեկ) խավք մը կա իւանի
Բանձրակտուց սիլանի
Կուտ կուտէ երկրի,
Կերթա թառի թերկրի¹⁵;
կամ՝
Խավք ըմ ընցալ էրկնուց
Ուկի լական կեր կտուց¹⁶:

Վերջին հանելուկը կարող էր նկարագարդվել Գեղամա լեռների ժայռափոր կոմպոզիցիաներից մեկով (նկ. 30):

¹⁴ C. A. Ecazni, նշվ. Հոդվածը, նկ. 2, 2:

¹⁵ Ա. Հարուրյանին, Հայ ժողովրդական հաելուկներ, Երևան, 1960, է, 97:

¹⁶ Նույն սեղում:

Հնարավոր է, որ ժայռաքանդակ թռչումը (նկ. 31) նույնպես
խորհրդանշում է արևը:

Նման օրինակներ շատ կարելի է բնըրել: Պատահական չէ, որ
Հայենի հարուստ դամբարաններում, ինչպես նաև Հայաստանի
այլ վայրերում (Արթիկ, ինվ. 2173/622, 2173/177, Բայազետ (ինվ.
20/99, 20/119) և այլն) գտնվել են թռչունների բրոնզե արձանիկ-
ներ կամ շղթաներից կախված բաղիկներ: Շղթաների վերին՝ ժայ-
րերը մեծ մասամբ ամրացված են լինում գնդով կամ սկավառա-
կով¹⁷:



Նկ. 30. Ժայռագուտակեր Գեղամա-
լեռներից

Նկ. 31. Ժայռագուտակեր Գե-
ղամա լեռներից

Ինչպես վերը նշեցինք, թռչունները հանդիպում են սկավառակ-
ների վերին մասերում կամ գնած՝ կախելու օղակի մոտ (ՊՊԲ, ինվ.
20/137, նկ. 14 և շ):

Թռչումը, ինչպես մատնանշում են Մ. Արեգյանն, Ա. Միլլերն
ու շատ այլ ուսումնասիրողներ, բոլոր կրօններում սերտ կերպով
կապվում է երկնքի հետ և հաճախ հանդիսանում արեային աստ-
վածության արտահայտությունները¹⁸:

Շատ գեղքերում էլ թռչունների փոխարեն շղթաներից կախ-
ված են գնդիկներ, որոնք նույնպես արևի կամ լուսատուների
իմաստն են կրում իրենց մեջ¹⁹,

17 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 198, рис. 77-3, 4, 5, 6, 7. Т. С. Хачатրян նշվ. աշխ., ст. 75, табл. 5, рис. 3, 4.

18 А. А. Миллер, նշվ. աշխ.

19 Б. Б. Пиотровский, նշվ. աշխ., էջ 93.

Ավելորդ չէ այստեղ հիշեցնել, որ «Սասնա ժռեր»-ի Մհեր Միջբ-Արեր նույնպես անքակտելիորեն կապված էր ազգավի կերպարի կամ «ազգավի քարի» հետ, որը արևի մայրամուտի վայրն էր:

Այսպիսով, ստացվում է, որ թոշունն ու գոմզը հավասարագոր են և որոշ գեպքերում փոխարինում են մեկը մյուսին:

Միջին բրոնզեդարյան (մթա II հազ. I կես) գունազարդ անոթների վրա արևի գնդերը երբեմն ուղեկցվում են նույն լողացող թռչունների պատկերներով, հաճախ էլ պատկերվում է սրանցից մեկը կամ մյուսը, մարմնավորելով իրենց մեջ արևի պաշտամունքը (Գառնի, Կարմիր, Էջմիածին):

Հայ ազգագրական և բանահյուսական նյութերի մեջ ավելի հաճախ հանդես է զալիս ծիծեռնակի և արագիլի պաշտամունքը: Սրանք գարունն ավելուղ թռչուններ են, ուստի և պետք է ենթադրել, որ հնագիտական իրերի վրա արևը խորհրդանշող թռչունները ներկայացրել են գարնանային արևը:

Ստացվում է, որ արևը տարվա տարբեր ժամանակներում տարբեր կերպարանքով է պատկերացվել:

Գարնանային թռչուն-արևին հաջորդում է ամռան տար, կիզիչ արևը՝ առյուծի կերպարանը ընդունած, որը համարվում էր ամենապալորդ բոլոր կենդանիների մեջ, ուստի և խորհրդանշում է ընության ամենազորեղ ուժը:

Ամռան արևի այսուժակերպ տեսքը ընդհանուր է ողջ Առաջավոր Ասիայի համար:

Հին Բարելոնում հուլիս-օգոստոս ամիսները կոչվել են կրակի ամիս և կենդանակամարում նրանք պատկերվել են առյուծի կերպարանքով²⁰:

Եզիպտոսում էլ Սոփամետ աստվածուհին՝ արևի աստծո կինը, առյուծի կերպարանք ուներ:

Հայ բանահյուսության մեջ պահպանված մի ավանդության համաձայն լուսինն ու արևը քույր ու եղբայր են: Մի օր քույր արևը գանդատվում է, թե ինքը վախճնում է գիշերը ման գալուց, ցերեկն էլ ամաշուռ է, երբ իրեն են նայում: Լուսին եղբայրն ասում է, որ գիշերը ինքը կշրջի, թող ցերեկը նա պատվի, միայն թե հետը վերցնի մի քանի խուրձ տահղ և խրի իրեն նայողի աշթերը: Այդպես էլ

²⁰ F. Lenormant, Les premières civilisations études d'histoire et d'archéologie, t. 2, Paris, 1877, t. 74.

անում են: Արևը նստած մի առյուծի մեջքին սլանում է երկնակամարով, և երեկոյան գնում հանդստանում մոր զրկում: Առյուծը իր միթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից²¹:

«Սասնա ծուրում» Մհեր-արև աստվածը կրօսմ է առյուծաձե, առյուծասպան մականունը²²: Վերջին մականունը գուցե և ցույց է տալիս, որ արևի մարդակերպ աստվածը դուրս է վանում իր կենդանակերպ զուգակցին:

Հետաքրքիր է նաև այն, որ Մհերի կողմից առյուծին սպանելու միջադեպը տեղի է ունենում ամուսնու:

Ստացվում է, որ Մհերը—Առյուծ Մհերը, նախաբրիստոնեական Հայաստանում, ինչպես Միջազգետրում հանդես եկող շատ աստվածություններ, պաշտվել էր որպես ամուսնական արևի աստված:

Առյուծի ու արևի կապի մասին է խոսում հայ ժողովրդի մեջ արմատացած այն պատկերացումը, որ երբ առյուծի (աստղ) թաթը արնոտվում է, անպայման արևի խավարում է սպասվում²³:

Պատահական չէ, որ նախառութարտական ու ուրարտական արվեստի հուշարձանների վրա էլ հաճախ են հանդիպում առյուծների պատկերներ: Վրաստանում՝ Թրիալեթիում, ինչպես նաև Կորանում գտնված ուշ բրոնզեդարյան զոտինների վրա փորագրված առյուծներն իրենց վրա կրօսմ են արևի նշաններ՝ բազմաթիւ աստղեր, ճառագայթավոր սկավառակներ²⁴ (նկ. 27):

Ավելի հետաքրքիր ու բազմակողմանի է Քալարենդում, իվանովսկու կողմից հայտնաբերված բրոնզե զոտիններից մեկը²⁵: Նրա շրջանակը ձևավորված է զայտարկող պարույրներով, կենտրոնական զաշտը՝ իրար հետեւից վազող առյուծներով, այժերով ու նրանց միջև վեր զայտարկող օձերով: Ստացվում է այն տպավորությունը, որ այս տեղ զարձյալ դործ ունենք ամպրոպի ու արևի պաշտամունքը մարմնավորող կենդանիների հետ:

Առյուծների կողքին պատկերված սվաստիկաները կարծեն կասկած չեն թողնում, որ առյուծները կապված են արևի հետ (նկ. 32):

Իր ներքին բովանդակությամբ այս զոտու հետ սերտորեն կապված է լալայանի կողմից նոր Բայազետում (գտնվում է Վրաս-

21 «Ազգագրական հանդես», թ. 1897, էջ 216:

22 «Սասնա ծուրը», Երևան, 1936, Ա. Հատ., պատում 9, էջ 130—131:


23 «Երակացու ձատենազրությունը» (Ա. Արրահամյան), էջ 331—332:

24 Б. А. Куктин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, рис. 49.

25 А. А. Ивановский, По Закавказью, МАК, вып. VI, М., 1911, табл. 1, 2.



Նկ. 32. Բրոնզե զռուի մալաքենդից



Նկ. 33. Բրոնզե զռությունից
պատճենահան Նոր Բայազետից

տանի պատմության պետական թանգարանում) հայտնաբերված դաշտունի պատյանը²⁶, որի վրա փաստորեն զետեղված են երկնացին էակների մի խումբ (օձեր, արևներ և առյուծ), որը դարձյալ հաստատում է մեր այն կարծիքը, թե արևն ու տարերքը (կայծակ, ամպրոպ) հանդես են գալիս մեծ մասամբ համատեղ և որ առյուծի կերպարներն ամենուրեք անքակտելիորեն կապվում են արևի պաշտամունքի հետ (նկ. 33):

Պատահական չէ, որ հայ հեթանոսական պանթեոնի շատ սիրելի և զիխավոր աստվածներից մեկը՝ Վահագնը կրում է տարերքի և արևի աստվածության ընույթ և իր իսկ ծագմամբ—ծննդով երկնացին ու երկրային էակ է, որովհետև նրա ծննդյան պահին երկիրն ու երկինքն էին երկնում և եղեգնի փողից ծուփ ու բոց էր ելնում...

Պատահական չէ, նաև, որ ուրարտական զոտիների ու վահանների վրա պատկերված են արեւը խորհրդանշող ունալ կամ թևավոր առյուծներ, ինչպես նաև ամպրոպն ու կայծակը խորհրդանշող ցուլքը:

Ուրարտական Խալդ աստվածը կիրառական արվեստի հուշարձաններում ու հիմասրանչ որմնանկարներում իրքէ կանոն հանդիս է գալիս առյուծի վրա կանգնած:

Արին-բերդում, Խալդ աստծու տաճարի դահլիճում, օրնամենտալ որմնանկարների կողքին բացվել է նաև Խալդի պատկերը՝ կանգնած առյուծի մեջքին²⁷, ինչպես Թիշուրը ցուլի մեջքին:

Կարմիր բլուրի գոտիներից մեկի վրա նույնպես ներկայացված են ուրարտական մի քանի աստվածություններ, նույն թվում Խալդն ու Թիշերան՝ առյուծի և ցուլի վրա²⁸:

Անկասկած, Խալդիի պաշտամունքը կտակ ունի արևի հետ,

Հայկական լեռնաշխարհի տարրեր շրջաններում հայտնաբերված են առյուծի քանդակներ (Կարմիր բլուր, Գորիս) կամ առյուծի զլիով զարդարված իրեր, որոնցից հետաքրքրական է լեռնային Դարարաղի Առաջաձոր գյուղի դամբարանադաշտում (մթա X դ.). Ռեսլերի կողմից հայտնաբերված, գունավոր քարերով ազուցված


26 Յ. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայտնաբերում, Երևան, 1930, էջ 162, նկ. 119, ինչպես նաև Ս. Ա. Եսայն, Օружие и военное дело древней Армении, Ереван, 1966, рис. 3, стр. 68.

27 Կ. Լ. Օգանեսյան, Արն-բերդ, Երևան, 1961, рис. 32.

28 Բ. Բ. Պոտրովский, История и культура Урарту, Ереван, 1948, рис. 42, 43.

ուղղանկյուն ճարմանդը (գտնվում է Պետական Էրմիտաժում), որի չորս անկյուններից վեր են բարձրանում առյուծների դրույններ²⁹ (նկ. 34):

Լճաշենում գտնվել է ոսկուց պատրաստված առյուծի զլուխ, որը միևնույն ժամանակ նախնադարյան ոսկերչության հոյակապ նմուշներից մեկն է: Հայտնաբերվել են նաև առյուծագլուխ ապարանջաններ և այլն:



Նկ. 34. Բրոնզե ճարմանդ Լեռնային Ղարաբաղից
(Էրմիտաժ)

Դժվար է ասել, թե սրանք պատրաստվել են նախնադարյան մարդու կողմից իրեւ արևի պաշտամունքի խորհրդանշաններ, թե պարզապես ունեցել են դեկորատիվ նշանակություն: Պետք է ենթադրել, որ ամեն գեպքում գոյություն է ունեցել այս կենդանու պաշտամունքը, որոշ դեպքերում արևի հետ կապված, երրեմն էլ գուցե անկախ նրանից:

Նախահայկական և վաղ հայկական կրոնական գաղափարաբանության մեջ արևի պաշտամունքի հետ կապվում էր նաև ձին: Հանրահայտ Զ Քսենոփոնի տեղեկությունն այն մասին, թե միա Վ դարի վերջերին Հայաստանում արևի աստծուն ձիեր էին զոհաբերվում³⁰ և այս կապակցությամբ նաև զիտնականների այն ենթադրությունը, որ Արմավիրի տաճարին ձիերով մարտակառեր էին նվիրաբերվում: Այս ենթադրությունն արվում է Արմավիրի հռւարեն արձանագրությունների թարգմանության և վերլուծության, ինչպես նաև Խորենացու «Հայոց պատմության» այն հատվածի հիման վրա, որտեղ պատմահայրը հաղորդում է, թե Երվանդյան շրջանում Հին Արմավիրի տաճարում կանգնեցված էին Արեգակի, Լուսնի ու թա-

²⁹ К. Х. Կյանարես, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА, XXVII, 1957, стр. 139, рис. 3, 4.

³⁰ Ксенофонт, Анабасис, IV, 35.

գավորական նախնիների արձանները: Արևի տաճարներին մարտակառքեր նվիրելու սովորությունը ընդունված էր ողջ Փոքր-Ասիայում և Արևմուտքում: Կ. Վ. Տրեմերը նշում է, որ վաղ հայկական դրամների վրա գրոշմված բառածի մարտակառքերն էլ կազ ունեն այդ երևոյթի հետ³¹:

ինչպես վերն արդեն նշվեց, բարելական բնագրերի և բրոնզեդարյան Հայաստանի պատկերազարդ գոտիների սյուժեների համաձայն, արևն իր շրջապատույթը կատարում էր հրեղեն ձիերով լծված կառքի մեջ:

Հետաքրքիր է, որ հայ ժողովրդական շատ հերիաթներում հրեղեն ձին, որը միշտ գտնվում է ծովի մեջ, իր հերոսին ծովի մի ափից մյուսն է թոցնում, կամ ծովի մակերեւութից մինչև արևի գունդը:

Անկասկած, հրեղեն ձիու այս հատկությունը ժողովրդի մեջ մնացել է արեգակի երկնային ծովում կատարվող պառլուտից, ծովի մեկ ծայրից մյուսն անցնելու կարողությունից և այն պատկերացումից, որ արևը գուրս է գալիս ծովի հատակից, բարձրանում երկինը և իր օրական պառլուտը կատարելով երկնակամարում, ինում է նորից օվկիանի ջրերը:

Հին աշխարհում գոյություն ունեցող պատկերացումների համաձայն, արևը ծովի ջրերի մեջ լողանալով, նորից երիտասարդանում էր, ուժեղանում³²:

Այս առիթով շմոռանանք նշել Սասնա ծուրի՝ Մհեր-Միհր-Արևին և Սանասար-Բաղդասար—ամպրոպ-կայծակին, որոնք իջնում էին ծովի հատակը և նոր ավլունով լեցուն դուրս գալիս այնտեղից: Հետաքրքիր է Սրբանձոյանի կողմից զրի առնված ավանդությունը Օձամանուկի և Արևամանուկի մասին, որտեղ նույնպես արևը լողանում է ջրում՝ մայր մտնելուն պես: «Պահ մը ետք եկաւ Արեգակն րոցերով, մտաւ աւուզը, աստղերը արթնացան, ոտքի վրայ բարեկ կայնեցան, թագուհին գրկեց վեր հանեց ջրէն արեգակը, և պատկեցուց անկողինը, իր ծոցը, ու ծիծ կուտար, անհնանալի, անծերանալի, մշտամանուկն արեգակ»³³:

31 K. B. Тревер, Очерки по истории культуры древней Армении, М.—Л., 1953, стр. 129—132.

32 F. Lenormant, Կազ. աշխ., էջ 76.

33 Գար. Ե. Մրգանձուսն, Համով-Հոռով, Թիֆլիս, 1904, էջ 286—287,

ինչպես մեզ հայտնեց խեթադեւ Վ. Խաչարյանը, խեթական Արինա քաղաքը Համարվել է արևի պաշտամունքի կենտրոն: Խեթերն այդ անունը նշանակում է աղբյուր: Ըստ էության այստեղ ևս արեգ կապ է ունեցել ջրի հետ:

Զիու՝ արևի հետ կապված լինելու հետաքրքիր փաստ է նշում նաև ֆրանսիացի ականավոր հնագետ Դեշենետը:

Եվրոպայի բրոնզեդարյան ժամանակաշրջանին պատկանող մի Կրոմլեխի շուրջանակի դաստիքոված բոլոր քարերի վրա հազված են եղել ձիու գանգեր: Հեղինակը գտնում է, որ գրանք անմիջական կապ ունեն արևի պաշտամունքի հետ: Ըստ Դեշենետի՝ Կրոմլեխի կաշրջանի ձև ունենալը ինքնըստինքյան արևի արտահայտություն կարելի է համարել, իսկ ձիերը արևի սիմվոլներ³⁴:

Ինչպես ճիշտ նկատել է Հ. Մնացականյանը, Սանահինի գոտու վրա պատկերված ձիերն ու նրանց մոտ գտնվող արևի գունդն, անշուշտ, կապ ունեն արևի պաշտամունքի հետ³⁵ (նկ. 35):

Մեր դիտողությունները հաստատվում են մ.թ.ա. V դարի պատմիչ Քսենոփոնի վկայությամբ, որի համաձայն Հին Հայաստանում հայերը արևին ձիեր էին զոհաբերում³⁶:

Ինչ խոսք, որ ցույր նույնպես կապվում է արևի պաշտամունքի հետ, չնայած որ ավելի հաճախ նա խորհրդանշում է ամպրոպն ու կայծակը (տարերը) և սերտորին առնշվում պաղաքերության պաշտամունքին:

Որոշ երկրներում արևի աստվածը պատկերվում է ցույր ուղեկցությամբ, ինչպես Միհրը Իրանում:

Այսպիսով, վերը շարադրածի հիման վրա կարող ենք ասել, որ Հայկական լուսաշխարհում հնագույն ժամանակներից արևի պաշտամունքը լայն տարածում է ունեցել:


Նախապատմական ժամանակներում արևը պատկերել են զանազան ձևերով՝ երկրաշափական տարրերով ու մարմիններով, որոնք կիրառվել են նյութական մշակույթի ամենատարբեր բնագավառներում՝ խեցեղենի, մետաղի իրերի, ժարիրից ու քարից պատրաստված առարկաների և նույնիսկ փայտե շինվածքների վրա (սալլերի):

34 J. Déchelette, Archéologie celtique ou protohistorique, II, Paris, 1924, էջ 414—415, 417—418:

35 Հ. Մնացականյան, Արևապաշտության հետքերը Հայաստանում, Առանձնահիմք պատմական թանգարանի աշխատությունների, Համ. 1, Երևան, 1948:

36 Կեսոփոնտ, հշվ. աշխ.:

35. $P_{\rho\sigma\tau}q_b$ $q_{nm}h$ $U_{mnm}z\rho h g$



Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերն ու ժողովուրդները հարեան երեսներում ապրողների նման արևը պատկերացրել են գանազան կենդանիների կերպարանքով:

Արևը պատկերացվել է նաև մարդկային և անտրոպոմորֆ կերպարանքով:

Արևի կենդանակերպ և մարդակերպ խորհրդանիշները հիմնականում հանդիպում են նախնադարյան գրաֆիկ արվեստում՝ բրոնզե գոտիների վրա, առանձին արձանիկների ձևով, իսկ ավելի վաղ ժամանակներում՝ նաև ժայռափոր քանդակների մեջ:

Արևը Հայկական լեռնաշխարհում տարվա տարրեր եղանակներին համապատասխան պատկերվել ու խորհրդանշվել է զանազան կենդանիների ձևով, ուստի և զարմանալի չէ այն, որ նա ունի կենդանական հարուստ ու բազմաշատ խորհրդանիշներ, որոնք լիակատար ուսումնասիրության կարիք են զգում:

Հայ ազգադրության և բանահյուսության մեջ պահպանված տվյալները ապացուցում են, որ արևի պաշտամունքը բրոնզեդարյան և շատ ավելի վաղ ժամանակներից պահպանվել է հայ ժողովրդի մեջ նաև բրիստոնեության ժամանակ, դեռ ավելին, արևի պաշտամունքի վերապրուկները մնացել են պարում են հայ ժողովրդի մեջ նաև մեր օրերում:

Սայլի անիվը արեգակին նմանեցնելու սովորությունը ժողովրդի մեջ պահպանվել է մինչև XIX դար³⁷:

Հայաստանի շատ վայրերում գոյություն ունի արևածագը վաղ առավոտյան դիմավորելու սովորությունը, հատկապես հարսանիքի հաջորդ օրը, ինչպես նաև թաղումից հետո³⁸,

Մինչև օրս էլ ժողովրդի մեջ մեծ տարածում ունի արևով երդվելը, որը արևի պաշտամունքից մնացած վերապրուկ է:

37 Գ. Մրուանձանց, Մանաւյ, Կ. Պոլիս, 1876, էջ 126.

38 «Ազգադրական հանդես», 1913, Խ 2, էջ 52.

ԵՐԿՆԱՅԻՆ ԼՈՒՍԱՏՈՒՆԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Հայկական լեռնաշխարհի բնիկների կոսմիկական պատկերացումների մեջ արևի, ամպրոպի, որոտի, բնության երեք գլխավոր ուժերի պաշտամունքին զուգընթաց գոյություն է ունեցել նաև լուսատունների պաշտամունքը, որը համընդհանուր է մարդկային պատմության նախնադարյան ժամանակաշրջանի համար և բավականաշափ վաղ է ժագել Հայկական լեռնաշխարհում։ Հայաստանը Առաջավոր Ասիայի ամենաբարձրագիր ծայրագավառը լինելով՝ աստղային երկինքն ու համաստեղությունները դիտելու համար հարմար պայմաններ ուներ։

Լուսատունների ուսումնասիրությանը նվիրված բազմաթիվ աշխատություններում հնագիտական, բանահյուսական, աղքագրական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրված, որ նախնադարյան մարդիկ լուսատուններն ու նրանց համաստեղությունները պատկերցրել են կենդանիների կերպարանքով։

Լուսատունների կենդանակերպ պատկերներից բացի, բրոնզեգրարյան արվեստի ու պաշտամունքի առարկաների վրա համախհանդիպում են երկրաշափական մարմիններ՝ շրջանակների, աստղերի, պարույրների, անկյունավոր կամ եռանկյունիներից կազմված բազմաձև մարմինների ձևով, որոնք նույնական խորհրդանշում են առանձին լուսատունների կամ նրանց համաստեղությունների գաղափարը։

Կասկածից վեր է, որ միևնույն լուսատունները կամ նրանց առանձին խմբերն ունեցել են բոլորովին հավասարագոր կենդանակերպ և երկրաշափական արտահայտություններ։ Նախնադարյան արվեստի մի շարք նոր նյութեր ցույց են տալիս, որ լուսատունները Հայկական լեռնաշխարհի բրոնզեղարյան բնակիչների կողմից պատկերացվել են նաև մարդկային կերպարանքով, ինչպես այդ ընդունված էր Առաջավոր Ասիայում։

Լուսատունների երկրաշափական խորհրդանիշները շատ են
70

Հանդիպում Հայաստանի ժայռապատկերների հարուստ կոմպոզիցիաներում, բրոնզե գոտիների, սրբքի ու դաշույնների, փեղպես նաև մի շաբթ ալ առարկաների վրա:

Այսպես, Գեղամա լեռներում հայտնաբերված ժայռապատկերներում¹ հանդիպում են ոչ միայն առանձին լուսատուների նշաններ, այլև նրանց ամբողջական խմբեր կամ համաստեղություններ: Դրանցից մեկը կազմված է մի քանի շրջանակներից, որոնք ներսից նույնագիս ունեն կրկնակի և ավելի շրջանակներ կամ կիսաշրջաններ: Այս խմբին միջին հատվածում պատկերված շրջանակը, իտարբերություն մյուսների, իր մեջ ամփոփում է հետզհետե փոքրացող երեք շրջանակներ՝ ընդհատվող գծերով: Այս բազմակի շրջանակի մի կողմին հարում է երկարավիզ թուղունի զլուխ, մյուս կողմին՝ ձգված պոշածե փորվածք: Այս երեք մարմինները միասին խիստ ոճավորված թաշունի տպավորություն են թողնում:

Բացի շրջանակներից, աստեղային սիմվոլների այս խմբի կամ համաստեղության մեջ մտնում են նաև խաչաձև մի քանի փորաքանդակ, կողքի փոքր շրջանակով, և փոքր ինչ ավելի ծավալուն մի օվալ: Առկա են նաև երեք այլ մարմիններ՝ օվալաձև, սրադագիտ մի մարմին և ոճավորված մի պատկեր, որն իր տարածածթերի շնորհիվ նմանվում է թռչողի:

Այս համաստեղության կենտրոնում, ներքին ընդհատվող գծերով լցված շրջանակը բավական նման է անիվի և կարող է մեկնաբանվել իրեն արևի խորհրդանիշ, մանավանդ, որ սրան հարում է վերեկից խիստ ռճավորված թոշունի պատկերը՝ արևային աստվածության կցորդն ու փոխանորդը (նկ. 36):


Արագածի ստորատներում Ա. Քալանթարի կողմից հայտնաբերված ժայռապատկերների շարքում² նույնպես հանդիպում է նըման մի սյուժե: Այն երկար կտուցով և բավական կլոր իրանով երկարավիղ մի թռչուն է, որը շրջապատված է շորս շրջանակներով: Սրանցից ամենավերակինը իր մեջ խաչաձև շորս շառավիղ ունի, նըմանվելով արե-անիլին (նկ. 37):

Գեղամա լեռների ժայռաքանդակ կամ ավելի ճիշտ ժայռագիր-ժայռափոր նկարների մի այլ խմբում պատկերված է սվաստիկա-


¹ Մենք սպառդում ենք ժայռապատճենների՝ Հեազիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահպանվող համապատասխան գրչանկարները, որոնցին հաստիառապես են հանձնվել 1965—1966 թվ. բնիշացքում՝ նարարապես U. Պետրոսյանի կողմից:

2 л. II. Տարեկան. Նոր և յութեր Հայոստանի հեղուուն ըրբանի արքեպիսկոպոսութիւն մէրարկարաց, «Պատմ-բանափրական Հանդիս», № 3, 1966, էլ. 2:

Ներքեմից նրան հարող վեց մասր շրջանակներով: Կարելի է ենթադրել, որ այստեղ ներկայացված են արևը, լուսինը և հինգ մոլորակները: Այս համաստեղությանը շատ մոտ կանգնած է մի այժմ եղազուրներից մեկի վրա երեք խոշոր շրջանակներով: Անկասկած, այս էլ նույն երկնային ուժերը մարմնավորող էակ է, եթե հաշվի առնենք, մանավանդ, եղազուրների խոշոր շրջանակները (նկ. 38):



Նկ. 36. Ժայռափոր կոմպոզիցիա Դեղամա լեռներից




Նկ. 37. Ժայռապատկեր Արագածից

Այս խմբից ոչ հեռու, նույն ժայռաբեկորի վրա քանդակված է մի այլ սպատկեր: Այն բաղկացած է ցրված շառավիղներ ունեցող անիվանման մեջ շրջանակից (որը մեր կարծիքով նույն արևի նը-

շանն է), վերևից նրան հարող այծի պատկերից, և ինչ որ գիշատիչ, անորոշ կենդանու գծագրությունից (նկ. 39):



Նկ. 38. Ժայռապատկեր Գեղամա լեռներից




Նկ. 39. Ժայռապատկեր Գեղամա լեռներից

Հետաքրքիր է, որ հայ բանահյուսության մեջ այծերը հաճախ հանդես են զալիս իրեն լուսատուները խորհրդանշող կենդանիներ, իսկ հին արևելյան և հունական շատ առասպելներում՝ որպես երկնային աստվածությունների հովանավորող ու սնուցող³:

³ А. Ф. Лосев, Античная мифология, М., 1957, стр. 249—253.

Արագածի ստորոտներին Ա. Քալանթարի կողմից հայտնաբերված ժայռապատկերների մեջ նույնպես հանդիպում են սվաստիկաների զանազան պատկերներ:

Այս ժայռապատկերներից մեկի վրա⁴ ներկայացված է իրարմիացված երկու սվաստիկա, որոնցից մեկի թևը զիգզազաձև զայլարվելով ավարտվում է պարույրի պատկերով: Պարույրի ներքին ծայրը կարծես օձագլուխ է և ննթաղրել է տալիս, որ հին արվեստում այդքան տարածված պարույրի մոտիվը առաջացել է գալարվող օձի գաղափարից և դառնալով նրա ոճավորված ձևերից մեկը, ներկայացվել է իրեն երկնային երևոյթ, էակ կամ մարմին: Նկարագրված սվաստիկայի տակ ներկայացված է մի հարուստ ռկոմպոզիցիա՝ այժերի, օձի և մարդու պատկերներից բազկացած, որոնք բոլորն ել, կարծես, աստրալ նշանակություն ունեն (նկ. 40):



Նկ. 40. ժայռապատկեր Արագածից

Ինչպես տեսնում ենք, մեր նկարագրած բոլոր ժայռապատկերներում լուսատուների երկրաշափական պատկերների մոտ գտնվում են մանր եղչերավոր կենդանիներ:

Նախնադարյան մարդու պատկերացումների և ըմբռնումների համաձայն, ինչպես այդ երեսում է շումերական առասպելներից և այլ աղբյուրներից, երկնային լուսատուները՝ աստղերն ու մոլորակները պատկերացվել են հենց այժերի ու ոչխարների կերպարանքով:

⁴ Ա. Ա. Քալանթար, Խով. հոդվածը, նկ. 9:

Շումերական տռասպելներից մեկում⁵ ասվում է, թե յոթ գլխավոր և հիսուն այլ աստվածների կողմից ստեղծված կամին հովիվը՝ աստվածային երիտասարդը, երկներից իշեցրեց ոչխարների ու այժերի հոտերը, որոնք արածել սկսեցին լայնատարած մարդագետիներում:

Ինչպես ստորև կտեսնենք, նման պատկերացումներ ունեին նաև Հայաստանի հնագարյան բնակիչները:

Ժայռապատկերների վրա ներկայացված երկնային պաշտամունքների էնեռլիթյան և ավելի ուշ ժամանակների վերաբերյալ վերը քննարկած մոտիվները, ուրեմն և նրանց արտահայտած գաղափարները պահպանվում են նաև ուշ բրոնզեդարյան դարաշրջանում՝ մ.թ.ա. II հազարամյակի վերջին:

Այս անգամ, լուսատու-կենդանիներին մենք տեսնում ենք նաև Հայաստանի տարրեր շրջաններում գտնված բրոնզե գոտիների վրա: Դրանցից մեկը հայտնի է Քաղաքենդում՝ հայտնաբերված Բելքի կողմից, 1890 թ., ուշ բրոնզե դարին պատկանող դամբարաններից մեկի պեղումներով⁶ (նկ. 41):

Գոտու եղբերը զարդարված են հանդիպակաց կոր գծիկներով և եռանկյունաձև զարդանախշով: Նրա ձախ կեսում պատկերված են մի խումբ այծեր, իսկ աջում՝ այծեր և եղջերուներ: Կենարունում տեղադրված են խոյի եղջյուրներին նմանվող պատկերներ, որոնցից վեր կանգնած է զառան նման մի կենդանի՝ բերանից զիգզագաձև իշնող բարակ դժիկով: Սրա մարմինը զարդարված է կետագծային եռանկյուններով, իսկ մյուս կենդանիներինը՝ կարճ կոր գծիկներով, ցանցատիպ նախշով կամ կետերով:

Գոտու վրա ներկայացված բոլոր եղջերուները թևակոր են՝ հանդամանքամանք, որը մատնում է նրանց և նույն միջավայրում պատկերված մանր եղջերավոր անասունների երկնային ծագումը:

Հաղարամյակիների խորքից եկող հայ բանահյուսության բացառիկ նյութերը համոզում են մեզ, որ քննարկվող պաշտամունքային բրոնզեդարյան գոտիների վրա ներկայացված եղջերուներն, այծերն ու ոչխարները Հայկական լեռնաշխարհի նախարնիկների կողմից դիտվում էին իրրե երկնային էակներ, իբրև լուսատուներ:

5 Ա. Դ. Բեդեր, եշվ. աշխ., էջ 31:

6 Ռ. Վիրիառ, Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, «Աղբագրական հանդես», № 1, 1895, էջ 94, տարբակ II:

7 Ռ. Վիրիառ, եշվ. աշխ., էջ 94—100, տարբ. II, Հատ. V:

Ճերմակ քոլոզով քուրղը,
Մեկ սուրու (հոտ) ոշխար կուշտը.
Զոր գիշեր աշխարքին կաշե⁵:

Այստեղ «ճերմակ քոլոզով քուրղը», ներկայացվում է իրու լուսին, իսկ ոշխարների հոտը՝ իրեն աստղաբույզեր:

Գեղամա լեռների ժայռապատկերներում հանախ են հանդիպում լուսատու այծերի և հովիզների պատկերներ (41 1. 2). Նրանք բոլոր դեպքերում ուղեկցվում են արևի և աստղերի երկրաշատիական նշաններով: Սրանով իսկ հաստատվում է, որ մեր նշան հայ ժողովրդական հանելուկներն իրենց արմատներով հասնում են ուսումնասիրվող ժամանակաշրջանը և հնարավոր է, որ սաղմնավորված լինեն շատ ավելի վաղ ժամանակներում (VII—VI հազ.):

Նույնպիսի արժեք ունի նաև

Մաղրմ վեդ
Մեջն անարա⁶

Հանելուկը, որի մեջ անիմիստական դադափարաբանության սկզբունքով վեգերը փոխարինում են անասուններին—աստղերին, անարան՝ լուսնին, իսկ մաղի միջոցով ներկայացվում է երկինքը:

Այս հանելուկը հետաքրքիր է նաև այն տեսակետից, որ երկնային էակներն այստեղ ներկայացվում են ինչպես կենդանիների, այնպես էլ երկրաշատիական ձևերի միջոցով, որոնք ուղղակի առնչվում են բրոնզեդարյան դադափարաբանությանն ու պատկերացումներին:

Մենք չենք կասկածում, որ այս հանելուկներում արտահայտված են նախահայկական, նախնադարյան միջավայրում ձևավորված պատկերացումները:

Այդ պատկերացումներն իրենց արտահայտությունը գտնել են նույնիսկ XIX դ. և ժամանակակից գեղագրիկստական գրականության, մասնավորապես, պոեզիայի մեջ¹⁰:

Քալաքենդի № 47 դամբարանից գտնված մի այլ գոտու բեկո-

8 Ա. Հարուրյոնյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 107.

9 Ա. Հարուրյոնյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 10.


10 Հայտնի է, որ օգտագործելով ժողովրդական հարուստ բանահյուսությունը, Հոգհաննես Թուժանանն էլ մեր դարի սկզբներին գրում էր.

Ամպերը դանդաղ ուղտերի նման,

Նոր են՝ ջուր խմած՝ ձորից բարձրանում:

ՏԵ՛ս Խաչ. Արեդյան. «Կիշապներ» կոչված կոթողներն իրեն Աստղիկ-Գերեկու դիցունու արձաններ, Երևան, 1941, էջ 64.

Л. 42. Решётка двери из храма в Калуге



Л. 42. Решётка двери из храма в Калуге



բի վրա¹¹ պատկերված են զանազան կենդանիներ՝ վայրի ալձեր, անգղառյուծներ, թոշուններ, ձիեր, ցուլեր, երկղխանի էջեր ու օձ (նկ. 42): Կենդանիները կարծես կովում են իրար հետ: Օձը մարտընչում է անգղառյուծներից մեկի հետ, որն իր բաց երախով պատրաստ է կուլ տալու վերջինին:

Կենդանիների միջև եղած լայնաթև խաշն ու բազմաթև աստղը, որն ավելի ծաղկի է նման, ենթաղրել է տալիս, որ սրանք նույնպես նրկնային էակներ են և խորհրդանշում են լուսատուներին: Մի առանձին աստղ էլ, պարզապես բազմած է անգղառյուծներից մեկի պոչի վրա, հիշեցնելով՝

Մի գոմ տավար սմիմ

Բոլորի հազին (պոշին) ծաղիկ է

(խատուտիկ)¹²:

Հանելուկը, որի պատկերազարդումը հեռու չէր լինի մեր նկարագրած կոմպոզիցիայից:

Հետաքրքիր է, որ երկղխանի էջին շատ նման կենդանու պատկեր ենք տեսնում Քերքութից գտնված մի կնիքի վրա:

Հավանաբար, երկղխանի և բազմազլուխ կենդանիներին երկնքում պատկերացնելը տարածված երևույթ էր Առաջավոր Ասիայի շատ երկրներում գենես հնագույն ժամանակներից սկսած:

Նկարագրվող գոտին երիզված էր կարճ-կոր գծիկներով, լայն ու հասար վազող պարույրներով: Վերջիններիս միջև եղած տարածությունը զբաղեցնում են անկյուններում օղակներով ավարտվող եռանկյունները: Եզրային այս զարդամոտիվից ցած երկշարք հյուսվածքային զարդանախաջ ու փոքր կիսաշրջաններ են փորագրված, որոնց տակից գոտու ամբողջ երկարությամբ անցնում է կետերի մի շաբաթ:

Նույն վայրից ծագող մի այլ բրոնզե գոտուց պահպանված փոքր բեկորի վրա փորագրված են փասիանների նմանվող թոշուններ և եղջերավոր անասուններ, որոնցից միայն մեկ-երկուսն են երեսւմ, գոտու վնասվածության պատճառով¹³ (նկ. 43):

Հավանական է, որ այս թոշուններն էլ երկնային լուսատուների ուրույն արտահայտություններն են: Համենայն դեպք հայ բանահյուսության ընդեղըթից եկող հետեւյալ հանելուկը կարող է հաստատել մեր միաբարը.

11 Ռ. Վերխով, եղվ. աշխ. էջ 88, հատ. III, տախտ. II:


12 Ս. Հարուրյանյան, Հայ ժողովրդական հանելուկներ, էջ 57:

13 Ս. Հարուրյանյան, եղվ. աշխ., էջ 10:

Մի հավանոց ունեմ,
Մեզը երկու թուխս կա իրենց ճուտերովը¹⁴:

Այստեղ երկինքը մեկնարանվում է իրեն հավանոց, արևն ու լուսինը իրեն թուխսեր, իսկ աստղերն ու մոլորակները՝ իրեն ճուտեր:

Յրոնզեղաբյան գոտիների վրա հեթանոսական շրջանից եկող հանելուեկներում մարմնավորված կրոնապաշտամունքային ու գաղափարաբանական պատկերացումները շարունակում են ապրել տակավին միջնադարյան գաղափարաբանության մեջ:



Նկ. 43. Բրոնզե գոտու բեկոր Քալաբենդից

Անանիա Շիրակացու վկայությամբ հայկական կենդանակամարում, որը, իր իսկ խոսքերով, հայերը, հույները ու եգիպտացիք վերցրել էին բարելացիներից, աստղային համաստեղությունները, կամ ինչպես ինքն է զրում, աստեղատները զանազան կենդանիների կերպարանը ունեն: Աստղային համաստեղություններով էլ պայմանավորված են տարվա ամիսները, որոնցից յուրաքանչյուրը կենդանակամարում ունի իր նշանը:

Այսպես, ըստ Շիրակացու երկինքը 12 աստեղատան է բաժանված, որոնք կենդանակերպ են¹⁵:

Խոյը զրանցից գիշավորն է համարվում և շնորհառու, որովհետեւ խոյն էլ հոտի գլուխն է և պարզեատուն:

14 Ա. Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար (տեքստը կազմել է Ա. Աբրահամյանը), Երևան, 1940, էջ 20:

15 Ա. Աբրահամյան, Շիրակացու մատենադրությունը, Երևան, 1944, էջ 323:

Թերևս մեր նկարագրած առաջին գոտու վրա այծերի ու եղացերուների միջավայրում պատկերված խոյի եղջյուրները և ինքը՝ գառը՝ նրանից վերև կանգնած, նրա զլիավոր ու զեկավարող իմաստի դրսնորումն են: Գառն իր զարդանախշերով նույնիսկ տարբերվում էր մնացած բոլոր կենդանիներից:

12. Աստեղատաները՝ տարվա 12 ամիսներն են:

Խոյը, ցուլը և երկրավորը կենդանակամարում խորհրդանշում են գարունը: Խեցգետինն, ապյուծը ու կույսը հատկանշում են ամառը, կշիռը, կարիճն ու աղեղնավորը՝ աշունը, այժեղջյուրը, ջրհոսն ու ձռւկը՝ ձմեռը¹⁶:

Թվում է, որ Հայաստանի տարբեր վայրերում գտնվող ժայռապատկերներից շատերը մասամբ առնշվում են կենդանակամարին, մասամբ էլ կապված են անասնապահության ու որսորդության պաշտամունքի հետ, պատկանելով, ըստ երևույթին, շատ ավելի վաղ ժամանակների, քան մեր բրոնզե գոտիները:

Կիրովականի հիշատակված գոտու վրա էլ, բացի նրա երկու ծայրերը զարդարող ոճավորված խեցգետիններից, ներկայացված են բազմաթե աստղեր, իրեն լուսատուների երկրաշափական սիմվոլներ:


Դեղամա լեռների ժայռապատկերներում առկա մյուս կենդանիներից շատ ու ելիստորեն են արտահայտված այծերի ժայռափոր քանդակները:

Այծերը կենդանակամարում ձմռան առաջին ամսվա խորհրդանիշն են, իսկ մեր այծերի մոտ գտնվող ցուլի հոյակապ պատկերը կարծես դրսնորումն է կենդանակամարում գարնան երկրորդ ամիսը նշող վայրի ցուլի: Հնարավոր է, որ նկ. 44-ում պատկերված ցուլը նույն իմաստն է կրել:

Արտահայտիչ են իրար հետ մարտնշող ժայռափոր երկու արռեայծերը, որոնցից յուրաքանչյուրն իր մեջքի վրա կրում է արևի նշանը: Միննույն ժամանակ, նրանցից մեկի մոտ լուսնի խորհրդանիշն է և մի այծիկի ֆիգուր: Ժայռաքանդակ կոմպոզիցիաներից մեկ ուրիշում արևի և լուսնի նշաններով են ուղեկցվում այծերի երկու ֆիգուրներ, որոնցից առաջինն ունի բարձր պողեր, ընսրոշ II

16 Վերջին երկու տարիների ընթացքում պեղվող Սեծամորի հոյակապ հուշարձաններ, որին նշութական մշակույթը պատկանում է III—I հազ. մ. թ. ա. Հոկայտան ժայռաբեկորների վրա պահպանվել են աստղեր, երկինք խորհրդանշող ժայռափոր պատկերներ: Պետք է ենթադրել, որ հուշարձանի այս մասը ժառայիկ է սրբած երկնքի և երկնային լուսատուների պաշտամունքի մի սրբատեղի:

հաղ. գումազարդ խեցեղենի վրա հանդիպող այծերին: Լուսնի նշանները պատկերված են երկրորդ այծի կիսատ թողնված պատկերներից վերև և ներքև:



Նկ. 44. Ժայռապատկեր Գեղամա լեռներից


Կոմպոզիցիաներից մեկ ուրիշը կազմված է այծերի, ցուզի և աղեղնավորի պատկերներից, որոնք նույնպես ուղեկցվում են լուսատուների երկրաշափական նշաններով: Հնարավոր է, որ այստեղ պատկերված էակները կապված են կենդանակամարի հետ: Նույն իմաստը կարող են ունենալ Ելեսնեղորդի մոտ գտնված բրոնզեդարյան մի ամանի վրա պատկերված այծերն ու աղեղնավորները: Այծերի պոչերը ավարտվում են շրջանակով: Շրջանակներ են զետեղված նաև նրանց ոտքերի միջև, մեջքի վերևում, եղջյուրների մոտ: Մեկընդեմք պատկերված են սվաստիկաներ, որոնց թևերի միջև նույնպիսի կլոր շրջանակներ կան: Անկասկած սա աստղազարդ երկնքի խորհրդանիշն է, իսկ այժմ ու աղեղնավորը (որոնք կրկնվում են ամանի շուրջը), ամենայն հավանականությամբ, կենդանակամարի պատկերներից են: Ըստ Շիրակացու, աղեղնավորը կեն-

գանակամարում խորհրդանշել է աշնան վերջին ամիսը։ Այս երևույթը ամեննեին զարմանալի չէ։ Նախնադարյան մարդը սրբացրել է երկինքն ու կենդանակամարը և այն դրսորել խեցեղեն ամանների և կիրառական արվեստի այլ իրերի վրա։ Կենդանակամարի հիանալի պատկեր է արտահայտված կուրիստանից գտնված մի թասի վրա։

Առհասարակ, Գեղամա լեռների ժայռապատկերներում լուսատու-կենդանիներով բազմապիսի կոմպոզիցիաները մեծ թիվ են կազմում։ Սրանցից մի խմբի մոտ են հայտնաբերվել ստորև մանրամասն նկարագրվող վիշտապարարերից շատերը։ Ըստ երևույթին, լեռնային այս ընդարձակ տարածությունը եղել է պաշտամունքային սրբազն մի վայր, շրջապատված լերկ ու խիստ ժայռերով ու լեռներով, խորհրդավոր շունչ ունեցող բնապատկերներով։

Ժայռաքանդակների մեկ ուրիշ խմբում ներկայացված է մարդկային հսկա մի ֆիգուր՝ տարածած թեկերով։ Նրա կողքին կանգնած է շատ ավելի փոքր շափերի մարդուկ՝ թեկերը տարածած վիճակում։

Մարդկային ֆիգուրները շրջապատող կենդանիների մեջ ընթերցվում են այծը, խոյը, երկու շուն, ոճավորված թռչունը և մի բանի անհասկանալի այլ կենդանիներ (նկ. 45)։



Նկ. 45. Ժայռապատկեր Գեղամա լեռներից

Գայթակղիշ կլիներ մտածել, թե հսկայամարմին աժդահան արտահայտում է կենդանիներին երկներից վայր իշեցնող տսավածության գաղափարը, իսկ նրա կողքին կանգնած մարդուկը՝ նրա

ստեղծած հովիլի կերպարը, այնպես, ինչպես Արագածում հայտնաբերված ժայռապատկերների վրա՝ սվաստիկաների ու պարույրի հետ միասին պատկերված այծերի ու մարդու-հովիլի կերպարներն էին:

Այսպիսով, հավանական է, որ Դեղամա լեռների ժայռապատկերներում ներկայացված են լուսատուներ, կամ լուսատուների խմբեր, որոնցից յուրաքանչյուրն իր տեղն ունի կենդանակամարում: Ինչպես Շիրակացին է ասում, սրանք շարժվում են տարվաշորս եղանակներին համապատասխան շորս տարրեր ուղղություններով և մի տարվա ընթացքում անցնում արևի, լուսնի ու յոթ մայրակների ճանապարհը, որոնք իշխով և բարձրանալով մոտենում են մեզ կամ հեռանում, գիշեր են բերում կամ ցերեկ, չերմություն և ցրտություն, խոնավություն և երաշտ և զեկավարում են օրերի (եղանակների) ու ժամանակների փոփոխությունը¹⁷:

Լուսատուների պաշտամունքին է վերաբերում նաև 1935 թ. Նոր Բայազետի շրջանից գտնված բրոնզե զռտին¹⁸, որն աշբ է ընկնում իր զարդամոտիվների ճոխությամբ և կենդանական պատկերների յուրօրինակությամբ (նկ. 46):

Այն բաժանված է ութ կենդանապարդ մասերի, որոնք իրարից անջատվում են խորանարդիկներից, ժայրում օղակով ավարտվող ձգված անկյուններից, պարույրներից, ոռմբերից, փոքր եռանկյուններից ու դարձյալ ոճավորված թոշունից կազմված զարդամոտիվներով:

Գոտու մակերեսին պատկերված կենդանիների մեջ տեղ են գտել խիստ ոճավորված այծեր ու եղչերուներ, որոնց բաց բերանները ավելի երախի են նման՝ ցցված ժանիքների ու սրածայր լեզուների շնորհիվ: Դրանք կանգնած են իրար դիմաց, յուրաքանչյուր վանդակում երկուական, բացի կենտրոնական մեկ վանդակից, որտեղ գտնվում են երեք եղչերուն:

Այս կենդանիների գլխի և մեջքի մասը ավելի նման է գիշատիչ ձկների (գալլաձուկ) և միայն խիստ ոճավորված եղջյուրներից կարելի է կուահել, որ դրանք այծեր են: Բոլոր կենդանիների վերջավարելի է կուահել, որ դրանք այծեր են: Կուահելու կենդանիների վերջավարելի է ավարտվում են օղակներով, որոնց առկայությունը ենթադրել է տալիս, թե դրանք երկնային լուսատուներ են: Այդ կենդանիների ավելի է հաստատվում նրանով, որ կենտրոնական վանդակարծիքն ավելի է հաստատվում նրանով, որ կենտրոնական վան-

17 Ա. Արշակունյան, Շիրակացու լատենագրությունը, էջ 323.

18 Ա. Օ. Մհաբականյան, Археологические находки в селении Басаргечар. «Краткие сообщения Института истории материальной культуры», 1955.

դակներից մեկնում պատկերված երկու այժեք իրենց վրա կրում են հատվող գծերով լցված շրջանակներ, որոնք լուսատուների սիմվոլներ են:

Այս գոտու վրա պատկերված բոլոր կենդանիներն էլ խիստ մարտական դիրքում են գծագրված և, կարծես, պատրաստ են իրար հոշոտելու:

Եթե Ալինեին նրանց վերջավորություններից կախված օղակները, հնարավոր կլիներ մտածել, թե մենք զործ ունենք մարտնչող վիշտապների կամ վիշտապարազների հետ, ելնելով նրանց գիշատիչ ձկնային տեսորից ու զլիների վրա տեղավորված եղջյուրներից: Զէ որ վիշտապներն ու վիշտապարազներն էլ երկնային տարերքի պաշտամունքը ներկայացնող կենդանիներ են:

Միշտագետքում էլ այծաձկան—վիշտապարազի մասին որոշ գիտնականներ այս կարծիքն են հայտնում, որ աստղերի խմբերը հնում մարդիկ պատկերել են այս ֆանտաստիկ կենդանու տեսքով¹⁹:

Մի գոտու վրա, յուրաքանչյուր կենդանական զույգի միջև ոռմբիկներից բազկացած պատկերներ են տեղադրված, որոնց իմաստը տակավին անհասկանալի է մնում: Հնարավոր է, որ զրանք տվյալ համաստեղությունների երկրաշափական դրսնորումները լինեն:

Հետաքրքիր է, որ Թարիայում հայտնաբերված բրոնզե գոտուց մի շատ փոքր բեկորի վրա պահպանվել է եղջերուի ոճավորված պատկերը, որը նույնպես կետերի միջոցով է կատարված և իր կեցվածքով բավական մոտ է վերը նկարագրած գոտու կենտրոնական վանդակում կանգնած երեք եղջերուներից մեկին²⁰: Գոտու այս բեկորը նույնպես զարդարված է պարույրներով ու կետավոր եռանկյուններով, հյուսվածքային, շատ փոքր օվալաձև ու կետագծային զարդանախշերով (նկ. 47):

Պետք է ենթադրել, որ հարուստ զարդամոտիվների միշտավայրում պատկերված այս ոճավորված եղջերուն նույնպես խորհրդանշում է երկնային ինչ որ լուսատու:

Սևանի ավագանի նյութերի մեջ տսաղային մի համաստեղություն էլ ներկայացված է Յ. Լալայանի կողմից դտնված հետաքրքրական մի փրով (նկ. 48):

Սրա ոռմբաձեւ միջուկին ներբերից հարում են երկու շրջանակներ, իսկ մնացած մասերից՝ աստղաձեւ յոթ ֆիգուրներ, որոնց

¹⁹ Alfred Jerenias, Կազ. աշխ., 1929, էջ 223.

²⁰ A. A. Martirosyan, Կազ. աշխ.:

24. 47. 90000. μ $\text{m}^2 \text{ min}^{-1}$





Fig. 46. *Hypothalassia* *lutea* (L.)



բոլորի մեջ էլ ներդծված են ոճավորված եղան կամ ցուլի գլուխ-ներ:

Եղան ոճավորված զլուխը մտնում է նաև երկու հարթ շրջանակ-ներից վերջինի մեջ: Պետք է համաձայնվել Հ. Մնացականյանի և Բ. Թումանյանի այն կարծիքին, որ այս իրն ամբողջությամբ մի համաստեղություն է ներկայացնում²¹: Նկատի ունենալով այն փաստը, որ բոլոր շրջանակների մեջ ցուլի ոճավորված զլուխներ են, մեզ հավանական է թվում, որ այն զուցե և «ցուլի համաստեղություն» է կոչվել:



Նկ. 48. Բրոնդե իր Սկանի ավագանից

Ինչպես երևում է Եզնիկ Կողբացու աշխատությունից, հայերի մեջ երկար ժամանակ արմատացած է եղել այն գաղափարը, թե լուսատուները կենդանիներ են:

«...Եւ զի՞նչ զարմանք և ընդ նոցա՝ թէ զերկինս վասն անշափ մեծութեանն, և զլուսաւորս վասն առաւել պայծառութեանն աստուածս կարծէին, յորժամ ի փայտս և ի բարինս և ի գաղանս և ի ճճիս անգամ աստուածս խնդրէին...»²²:

Մի այլ առիթով՝ Կողբացին գրում է. «Եւ ոչ լուսաւորքն, որ պէս յառաջապույն առացար, կենդանիք ինչ են և պատճառք բարեաց կամ շարեաց, այլ միայն յոր կարգեցանն՝ զայն սպասաւորութիւն հարկանեն»²³:

Վերը նկարագրվածի և Կողբացու բնագրի համապատասխան հատվածի հիման վրա մենք կարող ենք եղրակացնել, որ լուսատու-

21 Բ. Թումանյան, Հ. Մնացականյան. Բրոնդե զարի զոտի-օրացուց, Երևան, 1965, էջ 10, նկ. 2:

22 Եղբնկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց, էջ 141.

23 Նույն տեղում, էջ 128:

ների պաշտամունքը լայն տարածում է ունեցել Հայկական լեռ-նաշխարհի բնիկների մոտ: Ուսումնաբրությունները ցույց են տվել, որ Հայկական լեռնաշխարհում լուսատուներով զբաղվել են ժամանակի գիտության մակարդակով:

Հայկական լեռնաշխարհն իր լանդշաֆտի շնորհիվ պարարտ հող է ստեղծել աստղագիտության զարգացման համար: Ուստի և զարմանալի չէ, որ այլ պաշտամունքների կողքին տեսնում ենք երկնային լուսատուների պաշտամունքի արտահայտությունը հնագիտական բազմաթիվ իրերի վրա: Շատ ուսումնասիրողներ, ինչպես այդ ցույց են տվել թ. Թումանյանն ու Հ. Մնացականյանը իրենց ուսումնասիրության մեջ, փորձել են աստղագիտության առաջնումն ու զարգացումը տեսնել Հայկական լեռնաշխարհում: Թերենք թ. Թումանյանի և Հ. Մնացականյանի կողմից արդեն մեջբերված, բայց շատ կարեոր հատվածները:

Աստղագիտության գիտակ Վ. Օլկոստը գրում է. «Աստղաբաշխության տվյալները համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինող մարդիկ, հավանաբար, ապրել են Եփրամի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան մոտակա շրջաններում»²⁴:

Այնուհետև, հենվելով Մառնդերի և Սվարցի ճիշտ գիտողության վրա, ըստ որի երկնային սֆերայի սկզբնական քարտեզն ընդորում է հարավային կիսագնդի միայն մի փոքրիկ մասը, Վ. Օլկոստը հետեւյալ կարծիքն է հայտնում. «Այն մարդիկ, որոնք երկինքը բաժանել են համաստեղությունների, ամենայն հավանականությամբ ապրում էին 36—42 աստիճան հյուսիսային լայնությունների միջև, այնպես որ համաստեղությունների նշանակման հայրենիքը չել կարող լինել ոչ Եփրամոսը և ոչ էլ Թարելոնը: Հաշվելով, թե որտեղ է այդ դատարկ տիրույթի կենտրոնը համբեկնում հարավային բնեղի հետ, մենք ստանում ենք 2800 թ. մինչև ք. թ., որը, ամենայն հավանականությամբ, հանդիսանում է համաստեղություններին անուններ տալու հին գործի ավարտման տարեթիվը»:

«Նկատվել է, որ համաստեղությունները պատկերող ձևերի թվում բացակայում են հետեւյալ կենդանիները՝ փեղը, ուղտը, գե-

²⁴ В. Олькоստ. Легенды звездного мира (перевод с английского) — СПб. 1911, стр. 8; այս նույն թ. Թումանյան, Հ. Մնացականյան. Կ24. աշխ. էջ 45.

տաձին, կոկորդիլոսը և վազը, դրա համար էլ մենք կարող ենք հաստատել, որ ոչ Հնդկաստանը, ոչ Արարիան, և ոչ Եգպիտոսը շեն կարող լինել այն տեղը, ուր ծնվել է երկնային սֆերայի գաղափարը:

Հայաստանը, Իտալիան և Իսպանիան մենք կարող ենք դուրս հանել, պատճառաբանությամբ, որ համաստեղությունների թվում գոյություն ունի առյուծի պատկերը: Այսպիսով, հարցին զուտ տրամաբանորեն մոտենալով, մենք կարող ենք հաստատել, որ աստղային պատկերների հայրենիքը կարող էր լինել Փոքր Ասիան և Հայաստանը, այսինքն այն վայրը, որը սահմանափակվում է Սև, Միջերկրական, Կասպից և էգեյան ծովերով²⁵:

Մեր կողմից քննարկման ներկայացվող հնագիտական նոր նյութերն ու նրանց մեկնարանությունը կարծես գալիս են հաստատելու վ. Օկլոտի տեսակետը և լրացուցիչ նոր տվյալներ են ընձեռում կենդանակամարի ստեղծման վերաբերյալ, նյութեր՝ մանաժանդ ժայռապատկերներ, որոնք ժամանակագրական տեսակետից լիովին կարող են համապատասխանել վ. Օկլոտի նշած մթա III հազարամյակի սկզբներին և նույնիսկ նախորդել այդ շրջանին:

25 Բ. Թումանյան, Հ. Մեծագականյան, եղվ. աշխ., էջ 15—16.

ՏԱՐԵՐՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան ցեղերի կրոնական պատկերացումների ու ըմբռնումների շարքում մեծ տեղ է գրավել նաև ամպրոպ-կայժակի պաշտամունքը:

Հասկանալի է, որ իր գոյությամբ բնությանն ապավինած մարդը ընդունակ չէր ըմբռնելու նրանում կատարվող երևույթները, նրա տարերքը, ուստի և երկնքում հավաքվող սև մութ ամպերը և նրանցից լսվող որոտի աճեղ ձայները, փայլատակող շանթերը չեին կարող շսարսափեցնել, շահաբեկել անդոր բնապաշտին և անկարող լինելով բացատրելու բնական երևույթների պատճառները, դրանց տիրելու, սահմանաբերությունները, ստիպված էր երկրպագելու դրանց, վերագրելով ու մարմնավորելով նրանց մեջ գերինական, հաճախ շար ուժենք:

Հետազում, կարգված արդեն պարզունակ հողագործության առաջացման ու նրա զարգացման հետ, ամպրոպն ու կայժակը, ամենայն հավանականությամբ, ձեռք են բերում նաև բարի ոգու կամ աստվածության հատկություններ: Ամպրոպից հետո տեղացող անձրւը կենսական պահանջ է դառնում նախնադարյան հողագործի անտեսական կյանքում:


Ամպրոպի ու կայժակի պաշտամունքը, կարելի է ասել, չի զիջնի արևի կուլտին և շատ հաճախ այս երկուսի դրսեարումը տեսնում ենք նյութական մշակույթի միենույն առարկաների վրա համատեղ պատկերված:

Հին հայկական և հին արևելյան բանահյուսության մեջ նույնպես արեն ու ամպրոպը միասին են հանդիս գալիս և հաճախ նրանց ընույթի մեջ տեսնում ենք ընդհանուր շատ տարրեր ու հատկանիշներ:

Հին Հայաստանի բրոնզեդարյան բնակիչը, արևի նման, կայժակի ու որոտի պաշտամունքը նույնպես արտահայտել է երկրաշա-

փական զանազան պատկերներով, ինչպես և ամենատարբեր կենդանիների ու մարդու կերպարներով:

Ինչպես վերը տեսանք, Հայկական լեռնաշխարհի զունազարդ հարուստ խեցեղենի վրա պատկերված երկնային ջուրը՝ անձրևը,



Նկ. 49. Գունազարդ կավաճան
էջմիածնից

հաճախ արտահայտված է զիգզազների ձևով։ Անկառիկած, զրանք իրենց մեջ մարմնավորում են նաև կայծակը։

Եջմիածնի զամբարաններից մեկում զանված կարմիր անգորապատ կավաճանների վրա, ուն ներկով ուղղահայաց իշնող ալիքավոր գծերը, հավաերար, արտահայտում են կայծակը, իսկ Հորիզոնական և նրանց հարող զույգություղ ուղղահայաց իշնող ալիքներն՝ անձրևն ու ջուրը¹ (Նկ. 49):

Հին Միջագետքում ամպրոպի ու կայծակի աստված Աղապը (Թեշուր) պատկերվում էր ձեռքում կայծակներ բռնած։

Խորիտական ու ուրարտական թեշուր կայծակ-տարերի աստվածը ներկայացվում էր հաճախ նույն ձևով, երբեմն էլ նրա փոխարեն պարզապես պատկերում էին կայծակի նշանը²։

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում տարերի աստվածությունը խորհրդանշող կենդանիները։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա ընդունում է տարեր կենդանական կերպարանքներ՝ ցովի, ալծի, խոյի, եղջերուի, թաշունի, նույնիսկ առյուծի ու ձիու։

Ամպրոպ-կայծակի աստծու այս հատկանիշը խիստ ցայտուն է արտահայտված Հայաստանում զանված վիշապարարերի վրա³, որոնց հակիրձ նկարադրությունը և կապը տարերի օդերևութիւնը

¹ А. А. Мартirosyan, Եզդ. աշխ., աղ. 11.

² Տ. Բ. Пиотровский, Кармир-блур, 1, Ереван, 1950, стр. 60, рис. 38.

³ Հ. Յ. Մարք և Յ. Ի. Սմիրնով, Եզդ. աշխ., 1939, Մ. Արելյան, «Վիշապներ» կողման կոթողներին իբրև Աստղիկ-Դերեկտո դիցունու արձաններ, Երևան, 1941 և ուրիշներ։

Հիմնական տարրերի հետ, մենք արդեն նշեցինք նախորդ գլխում։ Արդ անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ երկրի, ծովի, երկնի, երկնային օվկիանի հետ կապվող վիշտապների վրա փորագրված կենդանիները հավասարապես առնչվում են նաև ամպրոպային աստծո կամ կայծակի զաղափարին, բանի որ կայծակն ինքն էլ բնիւթում էր իրոք երկնային և երկրային երևույթ։

Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ռատո-Շամբայի և Բողազը յի խորհրդական տերստերում հիշատակված է Վիշաշապ և Վիշա(ի)շապ աստվածությունը, որը խորհրդական պահենում տեղ է գրավել երկրորդական աստվածությունների շարքում և պարզ չէ, թե ինչ ֆունկցիաներ է ունեցել: Վերջապես, նշում է Գ. Մելիքիշվիլիին, անկասկած այս աստվածությունը պաշտվել է նաև Հայաստանում: Ուստի և հայերի և վրացիների կրոնական պատկերացումներում լայն տարածում ստացած վիշապը անքակտելիորեն կապվում է վերը նշված աստվածության հետ: Ավելի ուշ, հավանաբար, սկսած վաղ քրիստոնեական ժամանակներից, ինչպես նշում են ուսումնասիրողները, վիշապը ժողովրդական պատկերացումներում, կորցնելով իր բարի աստվածության հատկանիշները, վեր է ածվում շար էակի:

Այս կոթողներից մի քանիսի վրա պատկերված են ամպրոպի առավածության տարրեր կերպարանքները միասին, մնացածների վրա՝ նրա կենդանակերպ դրսնորումներից որևէ մեկը:

Խնչպես վերը տեսանք, Աժդանական վիշապ-ձկներից մենքի վրա պատկերված էին ցուլի գլխի, նրա երկու կողմերում կանգնած ունավորված թռչունների, գալարվող օձի ու ցուլի կաշվի ուղինք քանդակներ:

Հիմ հայերի պատկերացմամբ վիշտապներն իրենցից մեծ օձեր կամ ձկներ էին ներկայացնում: Վիշտապի երկիմաստ «երկենցաղ» ընավորությունը լավ է տրտահայտված եղնիկ Կողբացու մոտ: Եղնիկը գրում է «...Զի վիշտապն որ ինքն զրաստ է՝ այնու զի անառուն և անխօսուն է, զիա՞րդ՝ որ ինքն զրաստ է՝ զայլ զրաստ վարիցէ. զի վիշտապի այլազդ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օճի, այն յայտ էակ է: Եւ զօձ յազիանդամ, կամ զգազան ինչ ծովածին, կոչեն գիրք վիշտապ. որպէս հազիթանդամ հակայ անուանեն, նոյնպես և զօձ ցամաքային անհոռնի, և զգազանն ծովական լեռնաձև, զկիտացն ասեմ և զգելփինաց, վիշտապս անուանեն... «Եւ այլ ինչ ոչ են վիշտապք՝ բայց կամ օձը մեծամեծ ցամաքայինը, կամ ձկունը անարիը ծովականը, նոցա մանր ձկունը են, որպէս և օձից մեծամեծաց

մանր ինչ ճճիք կամ անասունք: Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց, կամ առնիցեն և ոչ տաճարք իրքի մարդկան են նոցա ի ընակութիւն և ոչ զոր ի թագաւորազգեաց և ի զիւցազնաց ունին կապեալ առ իրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնաւորաց երկու հեթ կան, ենովք և նդիա»⁴:

Այս ամենով հաստատվում է նախորդ զիսում հայտնած մեր այն տեսակեար, թե վիշապների վրա պատկերված կենդանիներն էլ կարող էին կապված լինել տարերքի տարրեր դրսորումների կամ հավասարապես երկնի, երկրի և օվկիանի հետ: Սակայն, ինչպես նկատել են ուսումնասիրողները, վիշապն ինքն էլ օդերևութի, ֆիզիկական տարերքի մարմնավորումն է ժողովրդական մտածողության մեջ:

Շիրակացին (VII) ասում է, որ փոթորիկը «ի բազազանս և յառասպելս, վիշապ հանել ասեն»: Իսկ վանական վարդապեար (XIII) փոթորկի երևուցի մասին պարզապես զրում է. «Ասեն թէ զվիշապն ի վեր յօդն քարշենք»⁵:

Եվ, ինչպես ցույց է տվել Մանուկ Արեգյանը իր վիշապարազ վահագնին նվիրված ուսումնասիրության մեջ, իրրև ամպային էակ վիշապը զանազան կերպարանքներ է ընդունում: Արեգյանի խորաթափանց արտաշայտությամբ ովիշապը մեր հին ու մեր ժամանակի ժողովրդական հավատալիքներով փոթորիկի, պատուտահողմի, թաթառի և փոթորկալից ամպի անձնավորումն է, հենց ինքը փոթորիկը «թանձրացյալ ամպով, կայծակներով ու որոտմունքով,—մի չար ոգի է, որի նախատիպն է օձը, որ և շափազանց մեծ օձի կերպարանքով է ներկայացնում, բայց իրը ամպային էակ համախ փոխում է իր կերպարանքը և զանազան կերպարանքներ է ընդունում»:

Բրոնզեդարյան Հայաստանից մեզ հասած հնադիտական նյութը միանգամայն հաստատում է նրա այս միտը:

Եղնիկը ասում է. «Եւ եթե բառնայցի ի վեր այնպիսի վիշապն ոչ ելլէ եզամբը ինչ անուանելով»⁶:

Իրանական ամպրոպային աստված Տիշտրիան ունեցել է զեղեցիկ պատանյակի, արջատի—սպիտակ ոսկեզջուր եղան և ձիու կերպարանք⁷:

⁴ Խզընկայ վարդապետի Կողբացայ եղծ աղանդոց. Թիֆլիս, 1914, էջ 72, 73:

⁵ Մ. Արեգյան, Հայոց հին գրականության պատմություն, համ. 1, Երևան, 1944, էջ 35:

⁶ Խոյին տեղում:

⁷ Ա. Մելիք-Օհանջանյան, Միթրա-Միհրը «Սասհա ժոկր»-ի մեջ (Առանձնատիպ), Երևան, 1948:

Հնդիկների նույնպիսի աստված Ինդրան և Հանմախ ցուլի կերպարանքով է հանդես եկել:

Եղնիկի տողերից հասկանալի է դառնում, ինչպես նշում է Արեգյանը, որ վիշտակ վերացնողը՝ «վիշտակաբաղը» մտածվել է մեղանում և իրու ցուլ, եղ:

Թվում է, որ մեր վիշտակաբարերի վրա պատկերված եղանգուիները համապատասխանում են վիշտակի՝ ցուլի կերպարանք ստունալու հատկությանը:

Հայ ժողովրդական բանահյուսությունից մեզ հասած հանելուկների մեջ պահպանվել է ցուլի ամպրոպի և երկնային ծովի հետունեցած կապի գաղափարը:

Դրանցից մեկում անվում է.

Կով մի ունիմ հանա-հանա

Կոտոշները մարխանա

Կաթնազրուրեն չուր կխմա

Արյունծովեն ձեն կը հանա:

(Շիրակ, Կարին)

Եվ, ինչպես Արեգյանն է ասում, «այս հանելուկի պատասխանն է որոտմունք և ամպ: Որոտմունք, որը ամպը կամ ամպեղն է ակը, բմբանված, ինչպես շատ հնդեվրոպական ազգերի մեջ, իբրև արջառ, հատկապես կով, հանում է երկնային արյուն, այսինքն արենագույն (ժիրանի) ծովի միջից⁸:

Որոտի ու ամպի վերաբերյալ ասվող այլ հանելուկներում նույնպես որոտն ու կայծակը կովի, եղան կերպարանք ունեն:

Հե ին ինչն ա ինչ

Կովը բռանշի

Ֆորթը փախչի:

(Լոռի)

Կամ⁹

Գարմիր եղ մը ունիմ,

Պոլոկելով (բառաշելով) խեղը (Հող)

մղեռւ զու (մտնել)⁹:

(Կրաօնոգար, Մախոչ, Պոլիս)

8 Ա. Հարուրյանյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 12:

9 Ա. Հարուրյանյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 103:

Թռչունները նույնապես հանդիսացել են ամպրոպի ու կայժակի աստծու գրաւորումներից մեկը:

Հին Միջազգայտքի առասպելներից մեկում պատմվում է, որ Նինգիրսուին՝ տարերքի աստծուն ուղեկցում էին արծիվներն ու առյուծները¹⁰:

Մեր վիշապաբարերի վրա թռչունները հիշեցնում են արագիլների՝ չրի հետ կապված թռչունների, հանգամանք, որ ավելի համոզիչ է դարձնում նրանց կապը ամպրոպի ու կայժակի պաշտամունքի հետ:

Խավը մը կեր, հանք էր
Կրղըլըուփին վանք էր,
Արուն ծովին՝ ձեն կիտեր (տալ)
Յոթն աղբուզն չուր կիգար:

Վիշապի մասին ասվող այս հանելուկից պարզ է դառնում, որ տվյալ դեպքում վիշապը պատկերացվել է նաև թեևվոր թռչունի կերպարանքով¹¹:

Այս իմաստի արտահայտությունն ենք տեսնում Սամարայում մ. թ. ա. V—III հազարամյակին պատկանող գունազարդ խեցեղենի վրա, որի մեջ մեծ հետարրը թյուն է ներկայացնում ամառներից մեկի հաստակին (ներսից) տեղ զտած կոմպոզիցիան¹², ուր պատկերված է սվաստիկա և նրա շուրջը թռչուններ, որոնց երկար ու քարակ մարմինները դալարվող օձի են նմանվում և միայն երկար թեւերն ու ոտքերն են հուշում նրանց թռչուն լինելը: Թռչունների կտուցների մոտ ձկներ են տեղավորված: Սրանք շատ մոտ են մեր հանելուկի թռչուն-վիշապին: Չուկը շեշտում է նրանց չրի հետ կապված լինելու հանգամանքը: Ամանի եղրամ մեկ նույնպես ձկներ են պատկերված: Սա երկնային ծովի և արևի հոյակապ պատկեր է՝ դրսեսրված նախնագարյան նկարչի ձեռքով (նկ. 50):


Գեղամա լեռներում քանդակված ժայռապատկերների մեջ

10 Н. Д. Реддер, նշվ. աշխ., էջ 52:

11 Վ. Հարուրյան, նշվ. աշխ., Երևան, 1960, էջ 105:

12 Н. Д. Фламտուր, Культура и искусство Двуречья, стр. 52; André Parrot, Sumer, Gallimard, 1960, էջ 45, նկ. 60-ը.


զտնում ենք թռչուն-վիշապի մի բանդակ, որն ամենեին չի վիշում Սամարայի գունագարդ ամանի թռչուն-վիշապին (նկ. 51): Սա նույնպես երկար գալարվող օձի մարմին ու վիզ ունի, սակայն զրուխը թռչունի է, երկար կտուցով: Այս թռչուն-վիշապը ունի բազմաթիվ ոտքեր: Այս պատկերին առնչվում է նաև Շենգավիթի պեղումներով հայտնարերված III հազարամյակի թասերից մեկը, որի ներքին մակերեսը զարդարված է միակերպ ջրային թռչունների գունագարդ պատկերներով: Թռչունների մի մասի բերաններում օձեր կան (նկ. 52): Այս մոտիվը կրկնվում է հայաստանյան և անդրկովկասյան մ. թ. ա. III հազարամյակի շատ խնցանոթների վրա, այն տարբերությամբ, որ վերջինները ներկայացված են ոելինք, վերադիր զարդի ձևով:




Նկ. 50. Գունագարդ աման Սամարայից

Վիշապալձի վիշապաբարի վրա նույնպես բանդակված են ցուլի, օձերի ու թռչունների պատկերներ, որոնք մարմնավորում են վիշապի՝ վերը նշված հատկանիշները:

Մյուս վայրերում (Աժդանական Վանստան և այլն) գտնված վիշապաբարերի վրա տեղ գտած ոելինք պատկերները ավելի են հաստատում այն միտքը, որ հների պատկերացմամբ վիշապը, ձուկը, օձը ընդունել են կենդանական տարբեր կերպարանքներ:



Նկ. 51. Ժայռափոր «թռչուն-դիշառ» Գեղամա լեռներից




Նկ. 52. Կավաման Շենդավթից

Սրանցից մեկի վրա պատկերված է գալարվող օձ, որի երկու կողմերից իջնող զուգահեռ ալիքավոր դժերը մարմնավորում են ջուրը (նկ. 53₁) Վանստանում (հմիրզեկում) զտնված վիշապաքարերից մեկի վրա քանդակված են ձիերի ոճավորված զլուխներ,

որոնց բերաններից դուրս են թափվում ջրի շիթեր, արտահայտված ալիքավոր ռելիեֆ գծերի միջոցով (նկ. 53,2):

Վիշապաբարերից մեծ մասի վրա պատկերված են ցուլեր և ձիեր՝ բերաններից թափվող ջրի շիթերով (նկ. 53,3), որոնք, անկասկած, կապ ունեն երկնքից թափվող ջրի հետ և շեշտում են նըրանց երկնային բնույթը: Վիշապների հետ անբակտելիորեն կապված է ժայռափոր կոմպոզիցիաներից մեկում պատկերված ցուլը, որի բերանից նույնպես չուր է թափվում:



Նկ. 53. 1, 2, 3 վիշապաբարեր

Խուրրիտական ժագում ունեցող ոսկե թասերի վրա (XI—IX դդ.) զտնված Հասանլուում պատկերված են եղանակի (տարերքի) աստվածները՝ ցուլերով կամ չորիներով՝ լծված կառքերի մեջ¹³:

Ցուլին լծված կառքի մեջ բազմած է թևավոր աստվածը, իսկ

¹³ Pierre Amiet, Un vase Rituel Iranien, Syria (Revue d'art Oriental et d'archéologie), tome XLII, Paris, 1965, t. 235—251, նկ. 2.

ցուլի բերանից ջրի հղոր շիթ է դուրս ժայթքում, ինչպես մեր վիշտապարերի ցուլերի բերաններից (նկ. 54):



Նկ. 54. Դատկեր Հառանլուքի ոսկե թասից

Խեթական Դատան՝ ամպերի աստվածը, որն իր մեջ մարմնավորում է ամպրոպի ու կայծակի հատկանիշներ, կոչվում է երկնային հղոր ցլիկ: Հետարրեփը է, որ սա ևս ունի տարրեր գրսնորում-ներ: Ըստ խեթական մի արձանագրության, «Խորշալաշի քաղաքի Դատա աստծու արձանը, մեկ քիչ բարձրությամբ, բրոնզից, մեկ արձան, այն աղբյուրի ձկան կերպարանքով է (բառացի՝ մոռութիւն): Այս արձանագրությունից հասկանալի է զառնում, որ տվյալ դեպքում դրվել է Դատա աստծու արձանը, ձկան տեսքով, այն էլ աղբյուրի մոտ¹⁴:

Դատայի ձկան մոռութիւն արձանին շատ մոտ են մեր վիշտապարերը, որոնք, ամենայն հավանականությամբ, գրվել են տարերի աստծու պատվին՝ իրենց վրա կրելով նրա կենդանակերպ տարբեր գրսնորումները:

Դատան բացի ձկան տեսքից ունի նաև ցուլի կերպարանը և կոչվում է «վայրի զորեղ ցլիկ Դատա», ինչպես նաև շամպրոպի, որոտի Դատա», որը նետ ու աղեղով զինված մարդ է:


Խորիտական և ուրարտական ամպրոպի ու կայծակի թեշուր աստվածը միշտ պատկերվել է ցուլի վրա կանգնած¹⁵:

14 Խեթական Դատա աստծու մասին տվյալները հազորզել է խեթադիտ Ա. Խաչառյանը:

15 Andre Parrot, Nineveh and Babylon, London, 1961, էջ 79, նկ. 89, E. Pottier, L'art Hittite, Paris, 1926, էջ 66, նկ. 77.

Ամպրոպի ու կայծակի պաշտամունքի դրսնորումը դահաղան կենդանիների տեսքով ցայտում է արտահայտված կեռնալին Ղարաբաղում հայտնարերված, Պետական էրմիտաժում պահվող երկու բեկորից բաղկացած (նկ. 12) բրոնզե գոտու վրա, որը նկարագրված է աշխատության II գլխում¹⁶:

Մեր կատարած հետազոտությունների, ինչպես նաև հայ և հին արևելյան առասպելաբանության հիման վրա կարելի է ասել, որ սրանք ամպրոպի պաշտամունք արտահայտող կամ նրա աստվածությունը խորհրդանշող կենդանիներ են: Զմոռանանք նշել, որ գոտու վրա պատկերված թռչունը շատ նման է Ռեսլերի կողմից Ղարաբաղում գտած գոտու մի բեկորի վրա պատկերված թռչուններին¹⁷, որոնց արտահայտչական ձևը, ըստ երևույթին, գալիս է շատ ավելի վաղ ժամանակներից, զատելով Դեղամա լեռների ժայռապատկերներում տեղ գտած թռչունի պատկերից: Այն զարմանալիորեն նման է իր պոչի շարժումով և տարրերվում է միայն երկար վզով (նկ. 55):



Նկ. 55. Թռչունի պատկեր Դեղամա լեռներից

Սրանցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում այժի գրինով, ձկան մարմնով էակը, որին մենք, ամենայն իրավամբ, կարող ենք վիշտապայծ անվանել: Այս կենդանին պատկերված է խոյազում սողունի կողքին: Հետաքրքիր է, որ Միջագնորում ևս այս երկուոք նույնպես միասին էին պատկերվում, ինչպես այդ երկում է Մելիշիստակ 2-րդի սահմանաբարի վրա տեղ գտած բանդակից (նկ. 56): Մեր գոտու վրա սրանք դասավորված են իրար հետեւից և

16 Բ. Բ. Գիտորովսկու Տուա զանգում է գոտու լրիվ նկարը ձողիկով:

17 Ռ. Վիրիառ, Կովկասի տեղը բաղադակերթության պատմության մեջ, «Ազգագրական հանդես», № 1, 1895, էջ 101—103, տախտ. 4.

Հավասար շափով խորհրդանշում են ամպրոպ-կայծակը, ինչպես և Միջագետքում այս երկու կենդանին կրել են նույն իմաստը:

Շումերական արվեստի III հազարամյակի կեսերին պատկանող Հուշարձաններում շատ հաճախ է հանդիպում այս էակը, հատկապես կնիքների վրա¹⁸:



Նկ. 56. Քանդակ՝ Մելիշիպակ 2-րդի սահմանաբարից (Միջագետք)



Նկ. 57. Արեի գոռ աստվածը՝ Գենդերա

Թելլոյում (Լագաշ) գտնված արծաթի մի սափորի վրա պատկերված է տարերքի աստված Նինգիրսուն՝ առյուծի զիխով, արծվի թերով ու մարմնով, որն իր ճիրաններում բռնել է առյուծ, այծ ու եղջերու, որոնք նույնպես նրա խորհրդանիշներն էին¹⁹, իսկ զրի էա աստվածը ունեցել է ճիշտ մեր վիշապաբաղի՝ այծածկան կերպարանը:

Այս ֆանտաստիկ կենդանին առհասարակ հանդիպում է Առաջավոր Ասիայում, Եգիպտոսում, Հին Միջագետքում: Այդ երկրներում այժաման պատկերն իր արտաքին տեսքով և մանրամասներով նույնն է, երբեմն չնշին տարրերությամբ, որը գալիս է, անկասկած, տվյալ երկրի պետականության և դրա հետ կապված կանոնիկության սկզբունքներից: Հայկական լեռնաշխարհում այն հանդես է գալիս ուրույն ձևով՝ կանոնիկությունից անկախ, փորագրող վարպետի հայեցողությամբ կամ պատկերացմամբ: Երեմիասը գրում է, որ բարելացիները աստղային համաստեղությունները պատկերում էին այս կենդանու ձևով²⁰:

¹⁸ Marguerite Ruttent, Les arts du Moyen-Orient ancien, Paris, 1962, էջ 48, աղ. XII:

¹⁹ André Parrot, Summer, էջ 150, նկ. 188—(13); Marguerite Ruttent, նշվ. աշխ., աղ. XII:


²⁰ Alfred Jeremias, նշվ. աշխ., էջ 224:

Հին Միջազգեարում արևի աստված Ներգալը պատկերված է այսպիսի մի վիշապաբաղի վրա կանգնած, երկնային լուսատուների ցրապատռում:

Եզրիպտոսում՝ Դենդերայում արևի Գոռ աստվածը կանգնած է նույն էակի վրա²¹ (նկ. 57):

Ինչպես ցույց են տալիս Հայկական լեռնաշխարհում գտնված նյութական մշակույթի մեացորդները, հայ բանահյուսական ու ազգագրական նյութերը, այժը նույնպես կապվում է ամպրոպի ու կայծակի աստվածության հետ և հաճախ հանդիս գալիս օձի հետ միասին:

Ամպրոպի ու կայծակի, այսինքն նույն այժի ու օձ-վիշապի արտահայտությունն ենք տեսնում նաև Ղարաբաղում գտնված (նույնպես էրմիտաժում պահպաղ) բրոնզե նեղ թիթեղի կոմպոզիցիայում, որը կատարված է գրվագրման տեխնիկայով արված գնդիկավոր ֆիգուրներով: Դրանք երկու օձեր են, զիգզագաձև գալարվող, որոնց միջև կանգնած է մի այժ: Սա նույն վիշապաբաղն է, միայն ոչ թե միացված մի մարմնի մեջ, այլ առանձին-առանձին (նկ. 58):



Նկ. 58. Բրոնզե դուռը բեկոր Ղարաբաղից (Էրմիտաժ)


Այս թիթեղի վրա արտահայտված կոմպոզիցիային շատ նման մի պատկեր մենք տեսնում ենք Ա. Քալանթարի կողմից Արագածում հայտնաբերված ժայռապատկերների շարքում: Դրանք բանդակված երկու այժ ու երկու օձեր են, ըստ որում, օձերն իրենց կեցվածքով կարծես ամպերի միջից փայլատակող շանթեր լինեն (նկ. 59), որով և ավելի են ամբապնդում այն ենթադրությունը, որ այծերն ու օձերը տվյալ դեպքում արտահայտում են ամպրոպի ու կայծակի պաշտամունքի գաղափարը, հանդիսանում են զրանց խորհրդանիշը:

Գեղամա և Սյունաց լեռների հարուստ ժայռապատկերներում մենք բազմիցս հանդիպում ենք նման պատկերների, յուրաքանչյուր դեպքում ուրույն ձևերով ու արտահայտություններով:

21 Նույն տեղում, էջ 209, նկ. 123, 124, էջ 367, նկ. 198:


Արանցից երկուսը մի մարմնի մեջ պատկերված այժավիշապ-
ներ են (վիշապաբազներ):

Առաջինը երկար նեղ իրանով, օձի գլուխ ունեցող կենդանի է,
որի վզի վրա տեղավորված են երկու եղջյուր: Սա ունի նաև ոտքեր:



Նկ. 59. Ժայռապատկեր Արագածից

Եսկ երկրորդը, պարզապես այծ է, որի իրանը՝ սկսած պոչից, վեր է
ածվում երկար, գալարվող օձի: Այս վիշապի մոտ գտնվում է ևս մի
այծի պատկեր (նկ. 60):



Նկ. 60. Ժայռապատկեր Գեղամա լեռներից

Ամփոփելով Ղարաբաղի բրոնզե գոտու և թիթեղի այժաձկան,
այծի ու օձերի, ինչպես և հնագույն ժայռապատկերների վիշապա-
բազների ու նման պատկերների քննարկումը, կարող ենք եղբակաց-
նել, որ սրանք ներկայացնում են վիշապաբաղ կոչեցյալ կենդա-
նուն, ըստ որում հնագույն ժամանակների համար, ինչպես երկում
է, ավելի բնորոշ է օձի և այծի միացությունը, իսկ ավելի ուշ ժա-
մանակների համար՝ այծի ու ձկան, որոնք հավասար շափով վի-
շապի մարմնավորումն են:

Որ այծը կապված է ամպրոպի ու կայծակի պաշտամունքի հետ՝ մեզ համոզում է այն հանգամանքը, որ միջագետքյան առասպելում նինդիրսուի մայրը սրբազան այծն էր²²:

Զեսին՝ Կրետե կղզում կերակրում է այծը:

Հայկական բանահյուսական նյութը նույնպես այդ կարծիքին է հանգեցնում:

Խըր էծ


Միջը պէծ²³, —

ասվում է հանելուկներից մեկում, որից պէտք է հասկանալ, որ այծը համեմատվում է կայծակի հետ:

Թվում է, որ սխալված շնորհինի, եթե ասենք, որ Լաշենում 1956 թ. № 2 կուրգանից գտնված ցուլի բրոնզե արձանիկը՝ երկու կողմերից կանգնած այծերով, նվիրված է ամպրոպի ու կայծակի պաշտամունքին²⁴ (նկ. 61):

Հասկանալի է, որ վիշապների, վիշապաբաղի թեման, ժայր առնելով հնագույն, գուցե էնեոլիթյան (V—IV հազ. մ. թ. ա.) երկրագործական մշակույթի ժամանակներից, շարունակվում է նաև ուրարտական պետության տարիներին, մ. թ. ա. IX—VI դարերում:

Վան-Տուշպայում գտնված ուրարտական կնքադրոշմների վրա նույպես հանդիպում են այս տիպի ֆանտաստիկ կենդանու պատկերներ, քիչ այլ տեսքով: Դրանք թեավոր արարածներ են՝ ձկան մարմնով, որոնցից մեկն ունի եղչերուի գլուխ, իսկ մյուսը՝ գիշատչի²⁵: Ի տարրերություն Հարաբաղի բրոնզե գոտու, շումերական ու բարելական կերպարների այս արարածները ուրիշ ունեն: Երկու կենդանիներն էլ



Նկ. 61. Բրոնզե արձանիկ լաշենից

²² Դ. Ռ. Քեր, Աշ. աշխ., էջ 103.

²³ Ս. Հայուրյան, Աշ. աշխ., 1965, էջ 11, 20:

²⁴ Ա. Օ. Միացական, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан, «Советская археология», № 2, 1960, рис. 16.

²⁵ Բ. Բ. Պոտրովսկի, Ուրարտ, Երևան, 1944, стр. 276, рис. 83 2. 3.

գտնվում են լուսատումների շրջապատում։ Ծատ հավանական է, որ սրանք երկուսն էլ պատկանում են ուրարտա-խուրրիտական թեղութիւններին (նկ. 62):

Ըստ էռթյան վիշապաքաղ հասկացության հետ սերտ կապի մեջ են Երզնկայի՝ վաղ հայկական ժամանակաշրջանին (VI դ. մ. թ. ա.) պատկանող նշանավոր սիտոնները, որոնք օձի մարմին և անդայծի գլուխ ունեն (նկ. 63)²⁶:



Նկ. 62. Կնքագրոշմներ
վան-Ցուշպայծից

* * *

Մենք վերևում քննարկեցինք ամպրոպի պաշտամունքի հարցերը՝ կապված վիշապների ու վիշապաքաղի հետ։ Սակայն բրոնզեդրայան արվեստում կան շատ այլ հուշարձաններ, որոնք հիշտ է, կապես կապված են տարերքի պաշտամունքին, բայց արտահայտված են այլ ձևերի ու միասնության մեջ, շատ հաճախ կապված են արևի ու այլ լուսատումների պաշտամունքի հետ։

Սրանք գերազանցապես գրաֆիկ արվեստով զարդարված գոտիներ են՝ գտնված պատմական Հայաստանի տարբեր վայրերում։

Գոտիների մեջ մեծ հետաքրքրություն է ներկայացնում Քալաքենդի № 36 գամբարանից գտնված գոտին, որի եզրերն ու միջանկայլ տարածությունները զարդարված են վազող պարույրներով, իսկ կենտրոնական մասում պատկերված են իրար հետեւյց վազող կենդանիներ՝ առյուծներ, այծեր ու նրանց միջև գալարվող օձեր²⁷ (նկ. 32):


Պարույրների առկայությունը գոտու տարբեր մասերում նշում է կենդանիների երկնային էակներ լինելը։ Նույնը ապացուցվում է նաև սվաստիկաների սիմվոլներով։

Առյուծների մոտ պատկերված սվաստիկաները ապացույց են այն բանի, որ վերջիններս խորհրդանշում են արևը, մինչդեռ այծերն ու օձեր՝ ամպրոպն ու կայծակը։

Զոռոանանք նշել, որ առյուծների պոշերը օձի գլխի ձևով են ավարտվում։ Այս հանգամանքը ավելի հաստատում է դարձնում մեր այն կարծիքը, որ արևի ու տարերքի աստվածությունները

26 Բ. Առաքելյան, Դիտողություններ Վիշապաքաղ Վահագնի մասին, «Տեղեկագիր», № 2, Երևան, 1951, էջ 75—80։

27 А. А. Ивановский, По Закавказью, МАК, вып. VI, табл. 1, 2.



Նկ. 63. Արծաթե սիմոն Երգնելոյից

Հների պատկերացմամբ ունեցել են որոշ ընդհանուր հատկանիշներ:

Միջագետքյան առասպելներից մեկում մայր մտնող արևը համեմատվում է դեպի երկինք թռող կրակի օձի հետ²⁸:

Հայկական շատ հանելուկներում ու հերիաթներում թանկարժեք ակը՝ արևը, գտնվում է օձի՝ վիշապի բերանում, որը հաւախ ապրում է ծովի մեջ:

Քալարենդի նկարագրված գոտու կենդանիների դասավորությունից կարելի է ենթադրել, որ ամպրոպն ու կայծակը ներկայացնող էակները հետապնդվել են արևի աստվածության կողմից:

Հունական անտիկ արվեստում նույնպես հանդիպում ենք այս երեք կենդանիներին՝ տեղափորված մի մարմնի՝ առյուծի վրա: Այծը (այծի գլուխը) առյուծի մեջքին է տեղափորված, իսկ օձը՝ պոչին: Երեքի բերանից էլ բաց է զուրա գալիս: Այս կենդանին հայտնի է Քիմերա անունով և ըստ հունական դիցաբանության, մարմնավորում է փոթորիկ, երկրաշարժ և հրաբխային ստորերկրյա ուժերը²⁹:

Ինչպես տեսնում ենք փոթորիկի, ամպրոպի ու կայծակի հետ կապված երեսությը արվեստում արտաքերվում է այս երեք կենդանիների միջոցով:

Բրոնզե գոտիների վրա հանդիպում են նաև ամպրոպի աստվածության մարդկային կերպարներ, դարձյալ արևի աստվածության հետ միասին:

Այդպիսին է Ղարաբաղում (Խաչըրուաղ) գտնված գոտին³⁰, որի վրա պատկերված են տարերքի աստվածը՝ ձեռքին նետ ու աղեղ բռնած, եղջերուների և սակրածն մարմինների ուղեկցությամբ, արևի աստվածության հետ միասին: Վերջինիս մոտ, որը ձեռքում վահան ու նիզակ է բռնել և հագել է փետրամոր բարձր գդակ, պատկերված է ձիերով լծված սայլ և գունդ (նկ. 25):

Լձաշենում հայտնաբերված գոտու վրա ես պետք է ենթադրել, որ պատկերված են այս երկու աստվածությունները, ձիերով լծված երկանիվ կառքերի հետ միասին, որոնցից, սակայն, միայն մեկն է ամբողջությամբ պահպանված:

²⁸ Д. Редер, նշ. աշխ., էջ 102.

²⁹ Н. А. Кун, Легенды и мифы древней Греции, 1954, стр. 112, 113; Rudolf Malten, *Bellerophontes*, Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts, Band XXX, 1925, Berlin und Leipzig, 1926, d. 26, 44, 59.

³⁰ Г. Кесаманлы, նշ. հողմածը, նկ. 4.

Գոտու վրա պատկերված են թռչուններ, կետազարդ ուղեկցող շրջանակներ և սակրատիպ մարմիններ: Գոտու եզրերը բոլորված են պարույրների երկու շարքով:

Հետաքրքիր է, որ ամպրոպի ու որոտի աստվածությունը արևի նման, երկնակամարում շրջում էր ձիերով լծված կառօպվ:

Ինչպես ցույց է տվել Մ. Արեգյանը ամպրոպի ու կալժակի աստվածության հատկանիշներ կրող, չրից ծնված և շրում հզորացող Սանասարն ու Բաղդասարը հանդես էին գալիս ձիու վրա հեծած, ձիու, որը նրանց նման դուրս էր եկել չրից, բայց և հրեղեն էր և միննույն ժամանակ ծառայել էր նաև արևի աստծուն՝ Մհերին:

Այն, որ արևի աստվածներն իրենց մեջ կրում էին նաև տարերքի աստծո հատկանիշներ, երեսում է այն փաստից, որ տարերքի աստված Նինդիրսում իր կառօպվ ամեն օր սլանում է արևելքից արևմուտք, կրկնելով արեգակի երկնակամարում կատարած օրական պտույտի իմաստը և դրանով իսկ արտահայտելով արևին բնորոշ հատկություններ կամ նրա հետ ունեցած աղերսներ,

Ըստ Փրանսիացի ուսումնասիրող Շանտեպի գել լա-Սոսեյի, ժագող արևին նախորդում են փոթորիկներն, ամպերն ու խավարը, որոնք ձգտում են փակել նրա արշալույսը (ծագումը): Ուստի և նա՝ ինը կոչվում է փոթորիկող սկ ամպ: Այդպիսին է Նին-իրը (Նինդիրսուն), որը համարվում է Բելի (Էնդիլի) նախաստեղծը: Վերջինիս համար էլ ամպերը հանդիսանում էին ավետարերներ: Այդ պատճառով էլ նրա երեան զալը, երբ նա իր հզոր ուժով քշում է ամպերը, համեմատվում է կովի մեջ անզուսպ հարձակման հետ: Նա սլանում է փոթորիկող ալիքների վրա, պարուրված վախով ու սարսափով:


Անկառակած, սրանք տարերքի աստծուն բնորոշ հատկանիշներ են, որոնք բխում են նրա էությունից:

Կամ այն հանդամանը, որ առասպելում Նինդիրսուի ձին կամ էշը համեմատվում է առյուծի հետ, նույնպես խոսում է այդ աստվածությունների մոտ եղած ընդհանրությունների մասին: Արևը նույնպես ձիով կառքի մեջ է նստում և հաճախ ձիում առյուծն է փոխարինում³¹:

Ամպրոպ-կայծակի կապը արևի հետ բավական ցայտուն է արտահայտված Արագածի ժայռապատկերներում: Դրանցից մեկում

31 Հ. Ռ. Խորայելյան, Արևի պաշտամունքի հետքերը բրոնզեդարյան Հայաստանում, «Երաբեր», 1967, № 4:

պատկերված են օձեր՝ տարրեր դիրքերով: Օձերից մեկը՝ բաց բերանով, լեզուն դուրս հանած, իր հաստ մարմնով նման է վիշապ օձի: Նրանցից ձախ և աջ նույնպես օձեր են, որոնցից մեկի մոտ կանգնած է չորրոտանի մի կենդանի, դարձյալ օձի նմանվող պոշով: Այս կենդանուց ներքև պատկերված է մի շրջանակ՝ մեջը կետով: Այսպիսի մի շրջանակ էլ պատկերված է այս կոմպոզիցիայի աջ մասում, սակայն գալարվող օձերից վեր: Գալարվող օձերը, որ թվով երկուսն են, կարծես ջրի արտահայտություն լինեն: Սրանցից վեր՝ շրջանակի վրա կանգնած է մարդկային ֆիգուրը՝ վեր բարձրացրած ձեռքերով (նկ. 64):



Նկ. 64. Ժայռապատճեր Արագածից

Արդյո՞ք միշտ չեր լինի կարծել, որ շրջանակներն՝ այսուղ արևի իմաստ են արտահայտում: Բայտ որում, կոմպոզիցիայի ձախ կողմում գտնվող շրջանակը (կենդանուց ցած) ներկայացնում է մայր մտած արեւը (անդրշիրիմյան), որին հսկում է օձի պոշով չորրոտանի կենդանին, իսկ աջ կողմում՝ ջուր արտահայտող օձերից վերի պատկերված շրջանակը՝ արդեն ծագած արեւի սկավառակն է իր մարդակերպ աստվածությամբ:

Այս պատկերում գուցե և բերանը բաց արած հաստ օձը ուզում է կուլ տալ արեւի սկավառակը, սակայն մյուս պատկերում նրա՝ օձերից վեր գտնվելը և մարդու ձեռքերը վեր բարձրացրած կեցվածքը խոսում են արեւի, ամպրոպի-կայծակի գեմ տարած հաղթանակի մասին: Այս պատկերը կարծեմ հիշեցնում է Նինդիրսուի մասին միշտագետքյան առասպելի շարունակությունը, ուր ասվում է, թե նա՝ Նինդիրսուն, լինելով պատերազմի արքա, մինչույն ժամանակ արևի աստված է, սակայն, ի տարրերություն Մարդուկի ու Թա-

մուզի, իր ընթացքը ավարտում է կայի աշխարհում՝ գետնի տակ, և Հետո, այնաևդից գուրս գալով հեռացնում է գիշերը:

Այստեղից հասկանալի է Նինգիրսուի կապը կայի հետ: Նա կոչվում է ակունքների ու ծովերի տեր, որը բաց է անում փականքները, լուսավորում է օվկիանի խորքերը և պայծառ լույս ուղարկում գիշերային երկնքին: Նա դուրս է գալիս անդրշիրիմից և նորից սուպվում այնտեղ: Ծագող արևին նախորդում են փոթորիկները, խավարն ու ամպերը կամենում են փակել նրա ճանապարհը...³²:

Ինչպես տեսնում ենք, լինելով ամպրոպի-կայծակի աստված, Նինգիրսուն միենույն ժամանակ մարմնավորում է արևի աստծո հատկանիշներ, հաստատելով մեր այն միտքը, որ կայծակ-ամպրոպի (տարերքի) և արևի աստվածություններն ունեն շատ ընդհանուր գծեր և հաճախ դրանք մարմնավորված են մեկ աստվածության կամ այդ աստվածություններից որևէ մեկի մեջ:

Այլ գեղքերում, երբ տարերքի աստվածությունները շունեն արևի հատկանիշներ, նրանք հանդես են գալիս արևի աստվածությունների համակարգում:

Այսպես, խենքերի մոտ տարերքի աստված Դատայի կինը արևն է՝ երկնքի թագուհին:

Հայ դիցարանության մեջ էլ Սանասարի՝ տարերքի աստծո կինն էր արևը՝ Քառսուն Դիզձուն ծամը, որին բանտարկել էր շարվիշապը: Եվ միայն նրան հաղթելուց և ազգկան՝ արևին ազատելուց հետո, նա փայլեց, լուսավորելով խավարի մեջ թաղված իր բարը³³:

Ի դեպ նշենք, որ շար վիշապը ապրում էր ծովի մեջ, և, ըստ երեսոյին, ամպրոպի-կայծակի շար անձնավորումն էր, որը և պարտություն է կրում իր արգեն մարդկային՝ բարի աստվածության կողմից (ինչպես առյուծը Մհերից):

Սանասարից ու Քառսուն Դիզձուն Սամից ծնված Մհերը նույնպես արևի աստվածն էր: Սարկայն դրանք միենույն բնույթի աստվածություններ չեն: Զնայած էությամբ և ֆունկցիոնալ նշանակությամբ տարերք են, սակայն ունեն ընդհանուր բնորոշ հատկանիշներ, բանի որ կյանքում երկուսն էլ կհնաւկան անհրաժեշտություն էին:

Նույն երեսոյին նկատվում է Սասնա հերոսների (Սանասար և Բաղդասար) էության մեջ: Ուստի զարմանալի չէ, որ Մ. Արեգյանը

³² См. П. Д. Шантепи-де-Ля-Соссий, Խվ. աշխ., էջ 200—204:


³³ՏԵ՛ս Մ. Աբեղյան. Հայ ժողովրդական վեպը, էջ 11—13, «Ազգագրական Հանդես», գիրք 17, 1908, Խ 1, Թիֆլիս:

նրանց համարում է ամպրոպի ու որոտի կամ կայծակի աստվածներ, իսկ Կ. Մելիք-Օհանջանյանը նրանց դիտում է իրրե արեի աստվածություններ:

Սրանք, անկառակած, տարբեր աստվածություններ են, սակայն ընդհանուր շատ հատկանիշներով:

Այդ առումով էլ ճիշտ է Մ. Արեղյանի այն կարծիքը, որ Վահագնը հայերի մոտ նախրան արեգակնային աստվածություն դառնալը, ավելի վաղ կրոնական պատկերացումներում եղել է կայծակի աստված: Բայ նրա, Վահագնի կոփովը երկրի վրա ոչ թե օձերի դեմ է, այլ ըմբռնվել է իրրե կոփով վիշտապ Դեմոնի դեմ, իրրե ամպրոպային կոփով³⁴:

Ի դեպ, Արագածի ստորոտում գտնված ժայռապատկերների մեջ կարելի է գտնել նաև վիշտապների հետ մարտնչող Վահագնի նախատիպին: Դա հսկա վիշտապների դեմ կովող մի դյուցազն է, շրջապատված օձերով (նկ. 65): Նա կովում է եռամարմին մի վիշտապի հետ: Այս մոտիվը տեսնում ենք նաև Վրաստանում՝ կորանյան կացինների վրա պատկերված օձերի և նրանց դեմ կովող դյուցազնի սյուժեում, որն ընդունվում է իրրե Ամիրանի մասին առասպելի գրականությունում:



Նկ. 65. ժայռապատկեր Արագածից

Հասկանալի է, որ արեն ու ամպրոպ-կայծակը բարի ու կենսական նշանակություն ունեցող աստվածություններ էին նախնադարյան մարդու կյանքում, այդ իսկ պատճառով հավասար տարածում ունեին և շատ հաճախ նախնադարյան ըմբռնումների ու

34 Տե՛ս Մ. Արեղյան, հշվ. աշխ., էլ 107, 131, Կ. Մելիք-Օհանջանյան, հշվ. աշխ.:

պատկերացումների համաձայն մեկը մյուսի կինը կամ որդին էր համարվում, երբեմն էլ սրանց հատկանիշները մարմնավորված էին մեկի մեջ:

Այդ է պատճառը, որ շատ գեղքերում նրանց խորհրդանիշները հանդիպում են համատեղ՝ զանազան կենդանիների ու մարդկային կերպարանքով:

* * *

Ինչ վերաբերում է սակրածե մարմիններին, պետք է ասենք, որ տարբերի աստվածը բացի նետ ու աղեղից կրել է նաև այլ զենքեր՝ սակրեր, զաշույններ, որոնք պատկանել են նաև արևի աստծուն:

Այդ վաղուց ապացուցված է հատուշաշի դարբասներից մեկի վրա պատկերված թեշուրի ոելինք քանդակի և թեյշերախինի բաղարի պեղումներով հայտնաբերված թեյշերա աստծո բրոնզյա արձանիկի գյուտերով, ուր երկուսն էլ պատկերված են սակրերով³⁵:

Հետաքրքիր է, որ հազիտական պեղումներով հայտնաբերված շատ դաշույնների ու թրերի վրա էլ մենք տեսնում ենք լուսատունեցատ դաշույնների ու թրերի վրա էլ մենք տեսնում ենք լուսատունեցատ դաշույնների պակապական պատկերներ և, որ ավելի հետաքրքիր է, ամպրոպ-կայծակը խորհրդանշող օձեր, այծեր: Օսեթիայում գտնված սակր-կացինների վրա ամրացված են այծերի քանդակներ (նույն է, ինչ որ տվյալ դեպքում թեշուրը)³⁶:

Այդպիսի պատկերներ է կրում իր վրա Ղարաբաղում գտնված թուրք, որի լայն մասում փորագրման տեխնիկայով արտահայտված են պարույր և նրա երկու կողմերում կանգնած այծեր:

Կան բազմաթիվ դաշույններ, որոնք կրում են օձերի ոելինք ու փորագրված պատկերներ:

Այդպիսիններից է էրմիտաժում պահպանվող Օձունից գտնված դաշույնը (ինվ. 17097): Գալարվող օձի պատկերով, կամ կաշենի դաշույնը (ինվ. 3559)՝ նույնպես վերադիր օձերով³⁷:

Թաղայշվիլու կողմից գտնված մի դաշույնի վրա պատկերված են գալարվող երկու օձեր, իսկ լայն մասում երկու զույգ հատվող հյուսված դեեր (խաշվող) և պարույրներ³⁸: Ճիշտ այդպիսի մի դաշույն էլ ծագում է Սամբավրոյի դամբարանից (նկ. 66):


35 Б. Б. Пиотровский. Кармир-блур. I, № 31; Н. Д. Флаттер. Ազ. աշխ., էջ 226:

36 Այս սակր-կացինները բուցադրված են Պետական էրմիտաժում՝ Կովկասի բաժնում:


37ՏԵ՛ս Ա. О. Мнацаканյան. Лчашенские курганы. «Краткие сообщения Института археологии», рис. 25₁, 2, 3 (1961, вып. 85).

38 ՏԵ՛ս Ա. А. Мартirosyan. Աշխ. աշխ., աղ. XXXV, VI₃.

Մի այլ դաշույնի վրա, գտնված Նորատուսից՝ Հ. Ա. Մարտիրոսյանի կողմից, պատկերված է դարձյալ օձ³⁹ (նկ. 67): Այս տիպի երկու դաշույն գտնվել են Արթիկում: Սրանցից մեկը բրոնզից է, իսկ նրա վրա ռելիեֆ գալարվող օձը քանդակված է պղնձից (Տ. Ա. Խաչատրյանի պեղումներից):



Նկ. 66. Բրոնզե դաշույն
Լալվարից



Նկ. 67. Բրոնզե դաշույն
Նորատուսից

Օձերը, բացի այն, որ մարմնավորել են երկնային ջուրը, ըստ երևույթին նմանեցվել են նաև փայլատակող կայծակներին:

³⁹ Նորին տեղում, նկ. 9:

հնչպես երկում է Հայ և արևելյան գիցարանությունից, տարեր-
քի աստվածները որպես զենք օգտագործել են իսկապես նաև դա-
շույն, թուր կամ դանակի:

Սահման հերոսները՝ Սահմասարը, Մհերը և մյուսները անբա-
ժան էին թուր Կեծակիից, որի անունն ինքնին հռչում է նրա գա-
ղափարական իմաստը:

Խուրքի-ջումերական միջավայրում գտնվող՝ Սահմասարի ու
Մհերի ամենամերձավոր նախակերպար Թեշուրը՝ խուրքիտական
ամպրոպի աստվածը, որ ծնվում է իր եղբոր՝ Արդանիսի հետ
միասին՝ Փումարրիի թերանից, ախտանարար աճում է ամեն ժամ,
ինչպես Սահմասարը:

Հայրը սարսափելով Թեշուրից (Սահմասար), ձգտում է ոչըն-
շացնել նրան, սակայն ի վերջո, երիտասարդ ամպրոպի աստվածը
հաղթանակ է տանում երկնային հրեշի դեմ, ինչպես Սահմասարը՝
վիշտակ հրեշի:

Պատահական չէ, որ խուրքիտական Թեշուր (Սահմասար) աստ-
ծո առասպելի հետ է կապված նաև Թուր-Կեծակիի զաղափարը,
որը Սահմասարը հանեց Վանեց Վանա ծովի հատակից, իսկ Թեշուրը, ծովի
էա աստծո խորհրդով գտավ Կումմի քաղաքում: Հետաքրքիր է, ի
միջի այլոց, որ Կումմին գտնվում էր Հայկական բարձրավանդա-
կում, Զովամերկի լեռներում, Մուսասիր քաղաքի մոտ, ուր տեղա-
դրվում է նաև «Սահման ծռերի» և շումերական աղբյուրների իրա-
կան ու առասպելական ռազնձե քաղաքը»:

Խուրքիտական առասպելներում պատմվում է հետեւյալը. «Ուր-
կիշ քաղաքի թագավորի հրամանով ծովի մեջ սկսեց աճել դիորիտի
մի սյուն՝ Ռուի-Կումմին, որը վիակում, ստվեր էր գցում Կումմի քա-
ղաքի վրա:

Կումմի քաղաքի կայծակ (Թեշուր) աստվածը երկարատև և
ապարդյուն պայքարեց նրա դեմ: Ի վերջո էա աստծո խորհրդով
Թեշուրը վերցրեց պղնձե դանակը, որով ժամանակին անջատվել
էին երկինքը երկրից և կարեց դիորիտի սյունը, ազատելով Կումմին
անխուսափելի կործանումից»⁴⁰:

Այսպիսով, վերը շարագրվածի հիման վրա կարող ենք ասել,
որ ամպրոպի ու կայծակի (որոտի) պաշտամունքը խոր արմատներ
ու լայն տարածում է ունեցել Հայկական լեռնաշխարհում քնակվող
նախահայկական ցեղերի, ավելի ուշ նաև Հայերի մոտ:

⁴⁰ E. O. James, „Myth and ritual in the ancient Near East, London,
1958.

Ամպրոպի ու կայծակի աստվածը նրանց մոտ պատկերացվել է վիշտառի կերպարանքով, որը մարմնավորել է իր մեջ փոթորիկը, շանթ ու որոտը, ըստ որում վիշտառները և փոթորիկը քաշել, բարձրացրել են երկինք:

Որպես երկնային էակ՝ տարերքի (ամպրոպ-կայծակի) աստվածը դրսեորվել է զանազան կենդանիների տեսքով՝ ցուլի, ալժի, խոյի, օձի, թռչունի, ձիու և առյուծի, ինչպես նաև մարդու կերպարանքով:

Ամպրոպ-կայծակի պաշտամունքը խորհրդանշվել է նաև երկրաշափական նշանների միջոցով:

Զենքը՝ դաշույնը, սակրը, թուրը, նետ ու աղեղը նույնպես հանդիսացել են այս աստվածության խորհրդանիշները:

Ամպրոպ-կայծակի աստվածությունը հին բմբոնումների համաձայն որոշ քննչանուր հատկանիշներ է ունեցել արևի աստվածության հետ: Ամպրոպ-կայծակը խորհրդանշող որոշ կենդանիներ կամ զենքեր հանդիպում են նաև արևի պաշտամունքին բնորոշ խորհրդանիշներում՝ բնորոշուր դառնալով երկուամբ համար, սակայն միննույն ժամանակ, կոնկրետ գեպրում, պահպանում և մարմնավորում են իրենց առանձնահատկությունները:

Դատելով Եզնիկ Կողբացու և ավելի ուշ՝ Շիրակացու տեղեկություններից, հասկանալի է դառնում, որ հին ու միջնադարյան Հայաստանում այս բմբոնումները բավական ուժեղ են պահպանվել և հասել մինչև XIX—XX դարերը:

Ըստ պղպակրական տվյալների, դեռևս անցած դարում՝ և XX դ. սկզբին հայերի մեջ սովորություն է եղել երաշտի ժամանակ փայտի վրա այժի դրուի սարքել և ման տալ գյուղով մեկ, որպեսզի բոլոր գյուղացիները ջուր լցնեն այժի գլխին՝ անձրև բերելու միտումով⁴¹:

Անկասկած այս սովորությունն իր մեջ կրում է ամպրոպի ու կայծակի պաշտամունքի հետքեր, որը դրսեորվում էր վիշտառքաղի-այծածկան կամ այծ՝ օձի տեսքով:

41 Տե՛ս Գ. Մրգաննետեանց, Մանահայ, Կ. Պոլիս, 1876, էջ 113.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ՈՐՍՈՐԴԱԿԱՆ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԸ

Ինչպես տեսանք, կիրառական արվեստի հուշարձանների պատմահագիտական ուսումնասիրությունը լայն հասարավորություններ է ընձեռուած նախնադարյան հասարակության հոգեոր կյանքի այլեւայլ բնագավառների՝ հավատալիքների, գաղափարաբանական պատկերացումների, պաշտամունքի բազմապիսի հարցերի քննարկման ու մեկնարատնման համար։ Այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև ուշ բրոնզի և վաղ երկաթի շրջանի (մ.թ.ա. XIII—VIդ.) բրոնզե պատկերազարդ այն գոտիների ուսումնասիրությունը, որոնց բազմազան խմբում այժմ արդեն մեծ թիվ են կազմում Հայաստանի, Աղրբեջանի, Վրաստանի, Օսմանյան և այլ վայրերի դամբարանադաշտերի պեղումներով հայտնաբերված՝ նախնադարյան որսորդության, որսորդական պաշտամունքների, ծեսերի ու արարողությունների հետ որոշակիորեն կապվող նմուշները։

Աշխատության ներկա բաժնում փորձ է արվում պատմագիտական մեկնարանության ենթարկել գոտիների վերոհիշյալ խմբի, ինչպես նաև վերջիններիս հետ կապվող պաշտամունքային այլ առարկաների սյուժեները, ի նկատի ունենալով հայ և ընդհանուր ազգագրության, բանահյուսության, ավանդաբանության գանձարաններում պահպանվող Հայաստանի նախարնիկների մտածողության և գաղափարաբանական պատկերացումների հետ անմիջականորեն առնչվող տվյալները։

Մասնագիտական գրականության և մեր նախորդ շարադրանքում բազմիցս նկարագրված այս գոտիները կոփածու բարակ թիթեղներ են՝ փորագրման տեխնիկայով կատարված երկրաշափական գարդերով, կենդանիների պատկերներով և ամբողջական գաղափարներ ու մտայնություն արտահայտող կոմպոզիցիոն սյուժենե-

բով, որոնք միշտ էլ ընդգծել են գոտու պաշտամունքային նշանակությունը:

Գոտու պաշտամունքն առանձնապես տարածված էր հին Հայաստանում և Անդրկովկասում։ Գոտունորված որսորդների, արևելյան աստվածների, կիսաստված համարվող թագավորների կերպարները նախադարյան և վաղ սորկատիրական շրջանի կիրառական արվեստի հուշարձանների վրա, աղոթքից առաջ մարդկանց գոտիկավորելու, «շար ոգիներին» խափանելու միտումով շրջանակներ գծելու և բազմաթիվ այլ սովորությունները, ինքնրստինքյան հիշեցնում են գոտուն վերագրվող պաշտամունքային մոգական նշանակությունը։

Ինչպես նշում է Բ. Պիոտրովսկին, այդ արարողություններն առնվազում են մարդու աստրալ պատկերացումների հետ։ Լեզվագիտական նյութը այսօր էլ ընդգծում է գոտու—կամարի («քամար»—երկնակամար) կապը երկնքի հետ։ Այսպիս, նոր հայկական «քամար» գոտի տերմինը սեմանտիկ զծով համապատասխանում է հին հայկական կամարին և պարսկական «զամար»—«զաման», «գոտի», «կամար», «ազեղ», «պարսատիկ», ինչպես նաև վրացական «cīs samara»—«երկնային գոտի», «ծիսածան» տերմիններին¹։

Գոտիների պատկերները, անկախ նրանց բնույթից ու տեսակից, ուսումնասիրության խորն ու հետարբրական ուղիներ են ձգում գեղի հեռավոր անցյալի հոգերը մշակույթը։

Արևելյան Հայաստանի տարրեր շրջաններում կալայանի², Մորգանի³ և այլոց կողմից հայտնաբերված գոտիներն աշքի են ընկնում ոչ միայն որսորդական տեսարանների սյուժետային նմանությամբ, այլև կենդանիների ու մարդկանց կերպավորման և կոմպոզիցիոն հորինվածքի տեսակետից։

Դրանցից առաջինը, որ գտնված է Աևանի ավագանի դամբարանագալուշտերից մեկում, իրենից ներկայացնում է գոտու կենտրոնական մասի ոչ լրիվ պահպանված բեկորը, որի վրա փորագրման տեխնիկայով պատկերված են երկու որսորդ, երկու ձի, թռչուն և արևի սկավառակը։ Գոտու երիզները զարդարված են գալարվող պարույրների շարքերով և անկյուններում կազմող գծիկներով։ Որսորդները ներկայացված են ընդգծված մեծ ֆիգուրներով և շեշտված առն-

1 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, стр. 95.

* 2 Ալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1930։

3 J. de Morgan, Mission scientifique au Caucase, t. I, t. 164.

անդամով, հանգամանքներ, որոնք բնորոշ էին պատրիարքիալ տնտեսության պայմաններում տղամարդու իշխող դերի, ծննդաբերության ու բերրիության գաղափարների համար⁴ (նկ. 26):

Թունադիմակ հագած որսորդներն իրենց հակա, լարված ազեղներով հիշեցնում են հայ ժողովրդական ավանդությունների մեջ հիշատակվող «անձնեայ» և «հաստաբազուկ» դյուցազուններին, որոնց հզոր ազեղները «լայնալին» էին և նետերը «երեքթևան»: Հիշենք Հայերի և Բերի մենամարտը՝ «...ի քարշ պինդ զլայնալին», դիպուցանէ զերեքթևանն կը թից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր անկանի զսլաքնան⁵:

Հետաքրքրական է, որ Մ. Խորենացու նկարագրած «լայնալին» ազեղը շափաղանց բնորոշ էր բրոնզեդարյան Հայաստանի որսորդական զինավորմանը, ինչպես այդ պարզ երևում է Ախմալայի, Մուսիերիի, Խաչըռուզաղի և այլ վայրերում գտնված զոտիների պատկերներից:

Որսորդներից մեկի կողմից արձակած նետն էլ շեշտակի գետին է ընկնում, սակայն նետասլաքը երկիւն է (ոչ թե եռաթե)՝ հար և նման Հայաստանի բրոնզեդարյան բազմաթիվ զամբարաններում գտնվածներին: Որսորդների ու ձիերի իրանները լցված են մանր գծիկներով ու կետերով: Զիերի իրանները երկարուկ են, դնչները՝ սուր, վերշավորությունները կարճ՝ լողակներ հիշեցնող: Չուկը տեղադրված է վերին ձիու մեջբատեղին մոտ, իսկ արևի սկավառակը՝ աղեղի վերին անկյունում:

Այսպիսով, Սևանի գոտու համաստ նկարագրությունից պարզ վում է, որ բրոնզեդարյան Հայաստանի մետաղագործ-արվեստագետը պատկերել է որսի տեսարան՝ մագիկ իմաստ դնելով զրամեջ: Իսկ դա անքակտելիորեն կապված է տեղաբնիկների բնապաշտական գաղափարաբանության, և, մասնավորապես, երեր՝ երկնային, երկրային ու ջրային աշխարհների նախասկզբնական պատկերացման հետ:

Սևանի գոտու վրա առկա են երկինքն ու ծովը խորհրդանշող ձուկն ու արևի քառաթե սկավառակը և որսորդների մարդկային կերպարները, որոնք անկատակած երկնային էակներ են:

4 Հ. Մեացականյան, Արևապաշտության հետքերը Հայաստանում, Առանձնատիպ պատմության պետական թանգարանի «Աշխատությունների», Հատ. 1, Երևան, 1948:

5 Մովսեսի Խորենացոյ Պատմություն նայոց. Տփղիս, 1881, գիրք Ա, գլ. ԺԱ, էջ 32:

Հայտնի է, որ ջուրը, արեքը, երկիրը (հողը) տարերքի այդ հզոր տարրերը, կենդանական ու բուսական աշխարհի, կենաց, հարատևման, պտղաբնուման ու նորոգման դրեղ գործոններ և կենսառու ուժեր էին, որոնցով պայմանավորված էր մարդու գոյությունը, բարօրությունը: Որսորդությունն էլ նախնադարյան համայնքի նյութական արտադրության կարևորագույն նյուղերից մեկն էր և այդ շափով էլ կապված ու պայմանավորված էր տարերքի ուժերով, կենդանական աշխարհի ճոխության, նրա հարատևման գաղափարի հետ:

Գոտու վրա պատկերված ձիերն էլ, անկասկած, միֆական էակներ են, որոնք կապվում են արեկի ու ջրի հետ իրենց երկարուկ իրանով, կարճ՝ լողականման վերջավորություններով և նեղ ու փոքր գլխով:

Դարերի խորքից մեզ հասած հայկական ժողովրդական շատ հերիաթներում հերոսները ձիերին դուրս են բերում ծովի հատակից՝ թափահարելով նախապես ծովի ափին պահպող սանձը: Գուցե և զրանով է բացատրվում այն հանգամանքը, որ նկարագրվող ժամանակաշրջանի շատ դամբարաններում գտնվում են սանձեր, առանց ձիու մնացորդների: Հավանաբար, հանդերձալ աշխարհում իր կյանքը շարունակող ննջեցյալը տանում է իր հետ սանձը, ձիուն այնտեղ գտնելու համոզմամբ:


Սովերի, լճերի մեջ ապրող այս ջրածին և լինդեն ձիերը կարող են ի կատար ածել մարդկանց բոլոր ցանկությունները: Հայ ժողովրդական հերիաթների հերոսներից մեկն ունենում է երեք ձի՝ ոմինը կեծակից էր, մեկելը բամուց, մեկելը կրակից⁶:

Այսպիսով, որսորդության հետ կապվող կիրառական արվեստի առաջին խոկ Հուշարձանի քննարկումը ցույց է տալիս, որ եթե հայկական հեթանոսական պատկերացումներն ու հավատալիքները բանալի են նախնադարյան գաղափարաբանության աշխարհը ներթափանցելու, ապա այդ աշխարհն ինքը գտնվում է նախարրիստու-

6 «Մինամ թագավորի հերիաթը», Հայ ժողովրդական հերիաթներ, Հատ. 3, էջ 280, Օրեան Խնաքես պարզվում է հետպատական պեղումներից, Հայկական լեռնաշխարհի ընիկների մոտ ձին պաշտպող կենդանի էր: Զիու դամբարաններ են հանդիպում Շամբորի շրջանում, Բորլալու գյուղի մոտ՝ Թուշբար գետի ափին (Ելիգավետպոլի գավառ): Այն (տե՛ս A. A. Martirosyan, Раскопки в Головине, стр. 99). Քանոնքնի վկայությամբ մեր արևապաշտ նախնիները արևին ձիեր էին զոհաբերում: Զիու պաշտամունքն է մատնանշում Զանգեզուրում գանձած բրոնզե հոլակապ մի քառանկյունի, որի լորս անկյուններից վեր են բարձրանում մեկական ձիու գլուխ:

նեական հայ մտայիսության ակունքներում։ Այս է պատճառը, որ բրոնզեդարյան արվեստի բազմաթիվ հուշարձանները համոզիչ մեկնաբանում կարող են ստանալ միայն հայկական և հին արևելյան նյութի օգնությամբ։

Այդպիսի հետարրրական հուշարձաններից մեկն էլ ծագում է Ախմալայի դամբարանադաշտից (նկ. 68) և, ինչպես վերը նշեցինք, շատ մոտ է կանգնած Սևանի գոտուն։ Այն պեղել է ժակ դը Մորդանը՝ Ախմալայի մ. թ. ա. VIII—VI դդ. պատկանող դամբարաններից մեկում⁷։ Դժբախտաբար, Ախմալայի գոտին նույնպես ամբողջական չէ։ Հրաժարակված բեկորի վրա երեսում են եղների, որորդների, եղջերուի ու այծի պատկերներ։



Նկ. 68. Բրոնզե գոտի Ախմալայից


Լալվարի որսորդներն իրենց կեցվածքով, զենքով ու դորժունեությամբ շատ նման են Սևանի որսորդներին, սակայն, ի տարրերություն վերջինների ունեն մինչև գոտկատեղը հասնող զգեստներ և դիմակներ։ Մորդանը ճիշտ է նկատել, որ որսորդները նեղ, կիպ անդրավարտիք և սրնբակալներ (ներկարամիտ կոշիկներ) են հագած, ինչպես երեսում է բնդհանուր կոմպոզիցիայից, որսորդները հետապնդում են ցուլերին, եղջերուներին և այծերին։

Մորդանի նկարագրությունից երևում է, որ որսորդական սյուժեները նման գոտի էլ ծագում է նույն ժամանակաշրջանին պատկանող Մուսիիերիի դամբարանադաշտից։ Այս գոտուց պահպանվել է որսորդի պատկերը, որն, ի տարրերություն նախորդների, կրում է արջի դիմակ և մեջքին՝ բրոնզե գոտի։ Որսորդը երկու ձեռքով բռնել է իր հսկայական ազեղը, որի ներքնամասում պատկերված է աղեղի

⁷ J. de Morgan, էջմ. աշխ., նկ. 190:

շամիերին համապատասխանող երեք նետ՝ երկսայլը սլաքներով ու եղեգնյա կոթերով⁸ (նկ. 69):

Վերադառնուլով Ախմալայի դուռուն, անհրաժեշտ է ավելացնել, որ նրա երիզները զարդարված են համակենտրոն շրջանակների երկուական շարքով: Հետաքրքիր է, որ որսորդական սյուժեներ կրող գոտիների մեծ մասը վերևից ու ներքևից զարդարված են կամ համակենտրոն շրջանակներով (լալվար) կամ զալարվող պարույրներով (Սևան, Սանահին, Խաշբուզաղ, Թրիալեթ, Կորան): Վերջին



Նկ. 69. Որսորդի ուստիեր Մուսիկերից
զանգած բրոնզե զատու վրա

ժամանակներս Ափչերոնում հայտնաբերված գոտիներից մեկի շրջանակների մանրամասների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր զեպքերում էլ գոտիների եղրային շրջանակները պատկերում են արեներ կամ երկնային մարմիններ:

Ափչերոնի գոտու կենտրոնական դաշտում եղան և քարայծի պատկերների միջև նույնպես ներկայացված է բազմաթիւ մի ասող:

⁸ J. de Morgan, նշ. աշխ. էջ 165, նկ. 191.

Այսպիսով, պարզվում է, որ որսորդական սյուժե ունեցող գոտիների կենդանական ֆիզուրները, և, մասնավորապես եղների ու ձիերի պատկերները Սևանի ու Լալվարի գոտիների վրա, անքակտելիորեն կապված են երկնային սիմվոլիկայի, ժամանակի կոսմիկական հասկացողությունների հետ։ Եվ դա միանգամայն հասկանալի է Հայաստանի և Առաջավոր Ասիայի անասնապահ-երկրագործ ցեղերի ու ժողովուրդների կրոնական պատկերացումների տեսանկյունից։

Գետք է նշել, որ Հայաստանի գոտիների գերազանց մեծամասնությունը կապված է Սևանի ու Լալվարի վերը նկարագրած գոտիների հետ ինչպես բովանդակությամբ, այնպես էլ այն բացահայտելու միջոցների, եղանակների ու պատկերների տեսակետից։

Խոսքը, մասնավորապես, Սահաճինի դամբարաններից մեկում գտնված գոտու մասին է, որը նույնպես պատկանում է մ.թ.ա. II և I հազարամյակների միջև ընկնող ժամանակաշրջանին⁹ (նկ. 35)։

Սրա վրա նույն պարույրների երկու շարքն է, որ բոլորում է գոտին՝ մնացած մասերից սահմանազատվելով կարճ զծիկներով։ Գոտու ամբողջ տարածությունը բաժանված է հինգ մասի, որոնցից առաջին և հինգերորդ բաժիններում են երկայացված են երկու զույգ ձիեր, նրանց վերևում՝ արևը խորհրդանշող կետավոր շրջանակ, իսկ վերին ձիերին ուղղված է մի-մի նետ։ Հասկանալի է, որ գոտու վրա ենթադրվում է որսորդի առկայությունը։

Մեջտեղի՝ երրորդ բաժնում մի զույգ ձիեր են, որոնցից վերև արևի նույն նշանն է՝ ձիերից մեկի մեջքին կանգնած է սագ հիշեցնող մի թռչուն։ Սրանց հաջորդում է մի զույգ ցուլ։ Եվ ձիերի և ցուլերի վերջավորությունները բոլորովին նման են միմյանց, սրմակներ չունեն և, կարծես բնորոշ են թռչող և լողացող կենդանիների համար։

Բոլոր կենդանիների մարմինները ծածկված են շատ կարճ թեր զծերով և կետերով։ Յուրաքանչյուր զույգից մեկը արու է, մյուսը՝ էղ։ Այս հանգամանքն իր մեջ սիմվոլացնում է պտղաբերության և կյանքի հավիտենականության գաղափարը։

Գոտու կենդանազարդ մասերն իրարից անջատվում են երկրորդ և չորրորդ բաժիններում տեղ գտած երկուական շարք պարույրնե-

9 Հ. Մեացականյան, Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում, Երևան, 1948։

րով, որոնք գոտին շրջապատող պարույրներից անջատվում են կարմ, թեր զծերով և նրանց միջև գտնվող կետերով, լցված նռան-կյումիներով, որոնց սուր ծայրը օվալաձև հանգույցով է, վերջանում Զախ և աջ կողմերից՝ մանր զծիկներից կաղմված ոռմբաձե նախ-շեր են, որոնցից յուրաքանչյուրն իր մեջտեղում փոքր շրջանակ ունի:

Արևի սիմվոլները, ինչպես նաև ջրային թոշունը դարձյալ հաստատում են մեր այն կարծիքը, որ նախահայերի և Հին հայերի կողմից երկրպագվող, նախնագարյան տնտեսության մեջ կենսա-կան նշանակություն ունեցող ձին ու եղբ Ծեերի պատկերացմամբ ոչ միայն երկրային, այլև ջրային ու երկնային էակներ էին:

Դրա ուղղակի և անհերքելի ապացույցները մենք գտնում ենք Հին Հայաստանի բնապաշտների կողմից շրերի ակունքներում՝ որ-պես պահապան թողած վիշապաքարերի վրա, որոնք իրենց վրա կրում էին նաև ցուլերի և ձիերի քանդակներ:

Դեռևս V դ. հայերի մեջ խորապես արմատացած էր կենդանի-ների և բնության տարրերի պաշտամունքը: Ժամանակի նշանավոր գաղափարախոռո Եղեիկ Կողբացին, որ ամեն կերպ պայքարել է հեթանոսությունից ժառանգած գաղափարների ու պատկերացում-ների դեմ, զրում է. «...և ոչ կովուց ծովացուն ելեալ՝ հթէ ի ծո-վակս բնակիցէ: Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի չուրս կեցցէ, որպես և ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի կեցցէ»¹⁰:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, այստեղ էլ մենք գործ ունենք արևի, ջրի և երկրի պաշտամունքի հետ, որն ի վերջո հանդում է պատղաբերության պաշտամունքի գաղափարին: Այն հանգամանքը, որ երկրագործ անասնապահ ցեղերի գաղափարախոսությունը մար-մրնավորող արվեստի այս հուշարձանների սյուժեները պատվում են որսի տեսարանների շուրջը, շեղտել է տալիս, որ նրանցում երկրա-գործությանն ու անասնապահությանն առընթեր մեծ տեղ է հատ-կացված նաև որսորդությանը, որը մի երկրորդ ծաղկում էր ապ-րում անտառների հաշվին վարելանողի նոր տարածություններ իրացնելու ու կիսաքոչվոր անասնապահության բուռն վերելիքի պայ-մաններում:

Ավելորդ շէր լինի նշել, որ Մասնա դյուցազուններն էլ ոչ միայն երկրագործներ ու խաշնարածներ էին, այլև քաջ որսկաններ:

10 Եղբնկայ վարդ. Կողբացոյ ևզծ աղանդը, Թիֆլոս, 1914, էջ 69—70:

Այդ է պատճառը, որ արվեստի բազմազան այլ առարկաների վրա մենք տեսնում ենք խաղնարածության ու որսորդության մտաշնության հետ առնչվող հարուստ ու հետաքրքրական կոմպոզիցիաներ, որոնք արտահայտվում են ունակութական ձևերի մեջ:

Այսպիսի տեսարաններով, ինչպես վերը նշեցինք, առանձնապես հարուստ է Գլխինի նախահայկական շերտերում հայտնաբերված կերամիկան, որն իր վերագիր դարդերով առաջմ եղակի է հնագիտական ժողովածուների մեջ^{11:}

Խաշնարածության հետաքրքիր տեսարանն է պատկերված վերոհիշյալ կարասներից մեկի վրա։ Կոմպոզիցիայի կենտրոնական մասում ներկայացված է կենդանիներին հովանավորող ոգու կամ աստծո կերպարը, որը շրջապատված է վայրի ու գիշատիչ կենդանիներով։ Առանձին գոտիներում, օձի շրջանակների և սուր ցցվածքների միջոցով արտահայտված են երկնային մարմինները, լեռներն ու ջուրը։

Պետք է ենթադրել, որ Ծեսլերի պեղումներից կիրկ-գաղում, Խանլարում Հայոտնարերված կերամիկայի վրա պատկերված մարդկակերպ էակները՝ կանգնած կենդանիների շրջապատում, վերջիններիս հովանավորող նույնպիսի աստվածներ, կիսաստվածներ կամ ոպիներ են¹²:

Պիտարովսկին նշում է, որ կովկասյան միջուռդիայում այդպիսի աստվածություններ շատ են հանդիպում: Արխազների հավատալիքներում որսորդության և կենդանիներին հովանավորող աստվածներն ապրում են մութ, խիտ անտառներում¹³:

Հայ ժողովագական մտածողության մեջ խաշնարածության ոգիներն ու աստվածությունները առայժմ սրբոված են հնության խորհրդավոր քողով, Սակայն հնարավոր է, որ հայկական հերոսավեպի տարրեր պատումներուն կարելի լինի հաստատել այդպիսի ուժերի առկայությունը: Հատկանշական է, որ մանուկ Դավիթն ու շուշ Մհերը հանգես են զալիս իրքեւ երկրադորձներ, որտորդներ ու խաշնարածներ: Գառնարած Դավիթը ընտանի անասունների հոտի հետ միասին բազար ըցեց վայրի գաղանների.

Այսանոր մեկ կողմից բերեց,

Ղարփանը մեկ կողմից բերեց,

11 ՏԵՂ Կ. Պ. Ղաֆաղարյան, նշվ. աշխ.

12 85 и 86. Б. Б. Пиотровский, Археология Закавказья, табл. 9.

[3] *Journal of the American Statistician*, 1931, p. 91-93.

Պընգըլը մեկ կողմից բերեց,
 Գելերը մեկ կողմից բերեց, ,
 Արշերը մեկ կողմից բերեց
 Ամեն գաղաններ ժողվեց, դաշտ լիք լցրեց¹⁴:

Արդյո՞ք Սասնա խաշնաբածության այս նկարագիրը նախնադարյան անասնապահության հեռավոր արձագանքը չէ, երբ խաշնաբածությունն ու որսորդությունը լրացնում էին իրար, արդյո՞ք Դավիթն ու զոջ Մհերը՝ կենդանիներին պահպանող, ազատող այդհակաները, փրենց մեջ շեն կրում խաշնաբածությունը հովանավորող ուժերի՝ ոգիների, աստվածների, կիսաստվածների հատկանիշներ:

Դվինի մի շաբք այլ կարասների վրա պատկերված են հեծյալ որսորդներ, որոնք հետապնդում են եղնիկների, քարայծերի և այլն:

Դվինի վերը հիշատակած հարուստ նյութերը դեռևս հարուստակված են մասամբ միայն, և որսի հետ կապված արվեստի հուշարձանների մոտավորագես լրիվ ակնարկը տալու համար մենք ստիպված ենք դիմելու Անդրկովկասում հայտնաբերված նույնատիպ սյուժեներ ունեցող բրոնզե գոտիների օգնությանը: Նրանք ծագում են Տաշիր-Զորագետի հուշարձաններին անմիջապես հարող Մարալին-Դերեսի (Թրիալեթի) զամբարանային շերտից, իսկ մյուս երկուսը՝ Հյուսիսային Օսեթիայի՝ Կորանի և Տլիի զամբարանագաշտերից: Սրանք բոլորն էլ թվազրվում են մ. թ. ա. VIII—VI դարերով և անխղելիորեն կապվում են Հայկական լեռնաշխարհի և Անդրկովկասին կից շրջանների նյութերի հետ:

Հասկանալի է, որ Հյուսիսային կովկասյան այս գոտիները պարզապես տարվել են Անդրկովկասի սահմաններից:

Տլիի № 76 զամբարանից գտնված գոտու վրա¹⁵ (նկ. 69ա) պատկերված են թոշնադիմակ հազած որսորդներ, որոնցից մեկը հեծյալ է, մյուսը՝ հետիւն: Որսորդներն ունեն լայն գոտիներ, նրանցից կախված են նետերով լի կապարձներ և ներկայացված են վայրի կենդանիների ու թոշունների շրջապատում: Սրանց մեջ կարելի է զանազանել եղջերուների, քարայծերի, սաղերի և բաղերի, ինչպես նաև ցուլի, վարապի, օձի և ձկան պատկերները: Բոլոր կենդանիների ֆիգուրները, բացառությամբ վարապի և օձի, իրենց վրա կրում են

¹⁴ «Սասունցի Դավիթ», Երևան, 1939, էջ 196:

¹⁵ Б. В. Теков, Раскопки Тлийского могильника в 1960 г., «Советская археология», 1963, № 1, стр. 172, рис. 9.

արեի և լուսատուների նշաններ: Լուսատուների և չորս եռանկյուներից կազմված պատկերներ երևում են նաև նրանց միջև, վերելում և ներքեւում: Գոտու երկու ծայրերում կանգնած են մեկական տոյուծ և երեքական բաղ:

Գոտու եզրերը բոլորում են դիմակների նմանվող, շարիխային գծիկների մեջ առնված կիսաօվալներ, որոնք երկու կողմից ունեն ձգված կտրվածքներ:

Մարալին-Դերեսիում գտնված գոտին¹⁶ իր վրա կրում է նույն կենդանիների պատկերները, միայն թե երկու շարքով: Թոշունի գիմակ հազած չորս որսորդները, որոնք նույնպես գոտեվորված են և չորսի մեջքից էլ կախված են նետերով լիբը կապարձները, կատարում են նույն՝ գործողությունը՝ այն է, մի ձեռքով բռնել են աղեղը, մյուսով արձակում են նետը (նկ. 70):

Այս գոտու վրա երկնային մարմինների նշաններ կրում են միայն առյուծները:

Կորանի գոտուց պահպանվել է միայն եզրային բեկորներից մեկը՝ առյուծների զրաֆիկ պատկերներով¹⁷:

Շամբորի շրջանում վ. թելքի պեղումներով հայտնաբերված գոտին վերը նկարագրածներից տարբերվում է կենդանիների դիմաժիկ, ռեալիստական, ֆանտաստիկ անգղապյուծների կերպարներով և մի շարք այլ մանրամասներով¹⁸ (նկ. 71):

Այստեղ տեղ է գտել Հին Հայաստանի հարուստ ֆառնան, սակայն ոչ քարացած վիճակում, ինչպես այդ տեսանք Հայաստանի մի շարք այլ գոտիների վրա:

Որսորդը կանգնած է գոտու մի ծայրում, վեր բարձրացրած ձեռքերից մեկով բռնել է վահանը: Գլխին կրում է սաղավարտ, ոտքերին ցից բլերով կոշիկներ և նեղ՝ մարմնին կպած անդրավարտիր: Նա որսի է գուրս եկել իր շներով, որոնցից մեկը հարձակվում է վիրավոր եղնիկի, իսկ մյուսը՝ վազող եղջերուի վրա: Մի այլ եղջերու փախչում է որսորդի առջևից: Որսորդի թեփ մոտ պատկերված է թոշուն, որը գուցե նույնպես նրա նետի զոհն է դարձել: Փախչող եղջերուի եղջյուրների միջև գալարվող հաստ օձ է

16 Բ. Ա. Կյուրտին, նշվ. աշխ., աղ. ԽХV և էջ՝ 51, նկ. 49.

17 Պ. Սարավա, Могильники Северного Кавказа, МАК, вып. VIII, рис. 39, 40.

18 Ծ. Վիրխով, Կովկասի տեղը բազարակրթության պատմության մեջ, «Աղբազրական հանդես», № 1, 1895:



№ 70. Рельефъ гроба погребального склепа



№ 70. Рельефъ гроба погребального склепа

Fig. 21. *Reticular coccus* *Gemmata*



պատկերված։ Գոտու մնացած մասը լցնող կենդանիները, բացի անգղայուժներից ու ցուզերից, խուճապահար փախչում են։ Հետապնդվող կենդանիների մեջ հստակորեն զատվում են քառատրոփ վազող ձիերը, եղջերուները, քարայծերը և մի քանի այլ մանր կենդանիներ։ Գոտու մի քանի մասերում ներկայացված են կոնցենտրիկ շրջաններ և գալարվող պարույրներ։

Եամբորի գոտին վերը նկարագրած մյուս գոտիների հետ կապվում է տարերի երեք ուժերը՝ երկիրը, երկինքն ու ջուրը խորհրդանշող երկրաշափական մարմինների, երկնային և շրային էակների պատկերներով (թոշուն, օձ)։

Վերը քննարկված անդրկովկասյան բրոնզե բոլոր գոտիների սյուժեների կապը երկնային սիմվոլիկայի հետ, ինչպես նաև արեների, լուսատուների երկրաշափական խորհրդանիշների, շների, վարազների և այլ կենդանիների պատկերների առկայությունը ցույց են տալիս, որ կրոնա-պաշտամունքային նախնադարյան որսորդական պատկերացումները անխզելիորեն կապված են վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի՝ իր էռթյամբ զգալի շափով դեռևս հեթանոսական գաղափարաբանության հետ։

Այս առումով շափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում Աղցի Արշակունյան դամբարանի սալերից մեկի վրա քանդակված որսորդական տեսարանը, որտեղ ներկայացված է նիդակակիր որսորդի և շների կոփիք՝ վարազի զեմ։

Քննարկելով այս քանդակը, Բ. Ն. Առաքելյանը իր աշխատություններից մեկում¹⁹ հանդամանորեն ցույց է տալիս, որ այն կարող էր կապված լինել Հայկ-Օրիոնի առասպելի հետ, որտեղ հայոց նահապետը հանդիս էր գալիս իրու տոտեմ որսորդ—աստղային համաստեղության Մեծ ու փոքր Շուն համաստեղությունների հետ մեկտեղ։ Աղցի այս քանդակն իր հերթին մատնանշում է, որ բրոնզեդարյան որսորդական ավանդույթներն ու առասպելները կենդանի էին վաղ քրիստոնեական ժամանակների ժողովրդական զանդվածների մեջ, մեծ համարում ունեին և, ինչպես Խորենացին է ասում, պատմվում էին «անգիր զրույցների» ձևով։ Այս ամենը գեռն չի նշանակում, որ կարելի է նույնացնել Աղցի քանդակի և բրոնզեդարյան գոտիների սյուժեները։ Հասկանալի է, որ երկար ու ձիգ հաղարամյակների ընթացքում որսորդական պատկերացումներն ու նրանց հետ կապված կոսմիկական գաղափարանություն-

19 Բ. Ն. Առաքելյան, Հայկ-Օրիոն, ՍՍՀՄ ԳԱ Հայկական ֆիլիալ, «Տեղեկագիր», № 8 (13), Երևան, 1941, էջ 29—36։

Նը պարզացման որոշակի փուլեր են անցել, որոնց գիտական դաս-
գասումն ու պարզաբանումը ժամանակի և հնագիտական նոր նյու-
թերի կուտակման ճանապարհով կատարվելիք խնդիր է:

* * *

Որսորդական տեսարանների մի այլ խումբ է ներկայացված
ետքրոնզեղարյան ուրարտական գոտիների վրա, որտեղ, ի տար-
բերություն բրոնզեղարյան հետիոտն որսորդների, հաճախ հանդես
են գալիս ոչ միայն հետիոտն կամ հեծյալ որսորդներ, այլ նաև
մարտակառքերի կամ ուղղակի կառքերի վրա նստած մարտիկներ:
Այսպիսի տեսարաններ շատ ցայտում են արտահայտված մի քա-
նի ուրարտական բրոնզե գոտիների վրա, հատկապես 1957 թ. Երե-
վան քաղաքի Նոր-Արեջ ծայրամասում, հողային աշխատանքների
ժամանակ հայտնաբերված ուրարտական գամբարանադաշտի № 1,
2, 3 գամբարաններում գտնված գոտիների բեկորների վրա²⁰:

Սրանցից առաջինի (№ 2 գամբարան) վրա՝ հինգ հորիզոնա-
կան շերտերում քանդակագրոշմված են որսի տեսարաններ (նկ. 72):
Այստեղ որսը կատարվում է հեծյալ և մարտակառքերի վրա նստած
ուղմիկների կողմից, որոնք կարծես մի ամբողջ ջոկատ են կազ-
մում: Մարտակառքերը երկանիվ են, երկու ձիերով լծված: Կառքի
երկու որսորդներից մեկը կառավարում է ձիերին, իսկ մյուսը՝ նե-
տահարում կառքի հետեւից սլացող առյուծին կամ ցուլին: Առյուծը
կամ ցուլը վազում են նաև այլ մարտակառքերի հետեւից, նույնպես
նետահարված, վիրավորված: Սրանց հաջորդում է հեծյալ որսորդը՝
զինված նիզակով, որի զենքը խոցել է առջեկից վազող մի զեպքում
ցուլին, մյուսում՝ առյուծին: Այսպիսով, հեծյալի և կառքի միջև
վազող կենդանին հարված է ստանում կրծքից և թիկունքից:


Զիերը կրում են մետաղե զարդարանքներ, ծածկոցներ և ընդ-
հանրապես թեթև, գեղեցիկ ձիասարք ունեն:

Գոտու երկու ծայրերին պատկերված են ստատիկ վիճակում
կանգնած առյուծներ, որոնք դասավորված են մեկը մյուսի վրա՝
ուղղաձիգ վիճակում:


Գոտու երեք շերտերում գործողությունը ձախից աջ ուղղու-
թյամբ է ընթանում, իսկ մյուս երկուսում՝ հակառակը:

№ 1 գամբարանում գտնված գոտու բեկորների վրա պահպան-
ված պատկերները տարբերվում են առաջին գոտուց (նկ. 73):

20 Հ. Մարտիրոսյան, Հ. Մեծականյան, Նոր Արեջի ուրարտական կոլումբա-
րին, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 10, Երևան, 1958.



Նկ. 72. Բրոնզե դռառ։ բեկորներ Նոր-Արեգի № 2 զամբարանից



Նկ. 73. Բրոնզե դռառ։ բեկորներ Նոր-Արեգի № 1 զամբարանից

Սրանց եղբերին և ծայրերին պահպանվել են անցքեր՝ գոտու թիթեղը փափուկ հիմքին ամրացնելու համար: Գոտու երկու ծայրերը բաժանված են հինգ ուղղանկյուն վանդակների, որոնց մեջ ուղղանյաց ձևով տեղավորված են առյուծների ֆիգուրներ: Յուրաքանչյուր վանդակին համապատասխանում է գոտու հորիզոնական մեկ շերտ:

Այս բեկորներից մեկի վրա՝ վերին շերտում պահպանվել են ցուլին հետապնդող երկու ծիերի և սանձի մի մասը, որոնք, ըստ երևոյթին, լծված են եղել կառքին: Գոտու մյուս մասերում պահպանվել են հետիւտն ուղղմիկ որսորդների դրոշմաքանդակները, որոնք մեկընդմնջ զինված են նետ ու աղեղով, նիզակով և վահանով: Նրանք ոլխներին սաղավարտ են կրում, մեջքերին՝ գոտի: Հազեր են մինչև ծնկները հասնող, եղբերը ծոպերով զարդարված դգեստ:

№ 3 գամբարանից գտնված գոտու վրա, որից նույնպես միայն բեկորներ են պահպանվել, պատկերված են հեծյալ և հետիւտն որսորդ-ուղղմիկներ, որոնցից հեծյալները և նրանց առջևից գնացող որսորդները զինված են վահանով ու նիզակով, մինչդեռ հեծյալներին հետևող զինվորը նետ ու աղեղով է սպառազինվել (նկ. 74): Սրանց բոլորի հանդերձանքը նույնն է, ինչ և նախորդ գոտու վրա: Զիերը նույնպես շքեղ զարդարված են: Որսի առարկան դարձյալ ցուլերն ու առյուծներն են: Վերջիններից մեկի բաց երախը և տարածած թաթերը ենթադրել են տալիս, որ նա կանգնած է հետեւ ոտքերի վրա և կատաղի կերպով ծառս է լինում, հավանաբար, իրեն հետապնդող որսորդի առջև: Այս գոտու վրա տեղ են գտել նաև կենաց ծառերի և նրանց մոտ կանգնած ֆանտաստիկ թեավոր կենդանիների պատկերներ:

Հ. Ա. Մարտիրոսյանի և Հ. Մնացականյանի կարծիքով, ծառս եղած առյուծի դեմ մարտնչողը, որի ֆիգուրը գոտու վրա չի պահպանվել, պետք է որ ինքը՝ ուրարտական թագավորը լիներ և ընդհանրապես, որսի տեսարանին մասնակցում է թագավորական ողջ դունդը, ինչպես այդ բնդումնած էր Ասորեստանում և Ուրարտում: Այս տեսակետն իր հաստատումն է գտնում 1967 թ. էրեբունի բաղարի միջնաբերդում հայտնաբերված որմնանկարների որսի տեսարաններով, որոնք իրենց տեսակի մեջ հին արվեստի իսկական գլուխգործոցներ են:

Այսուհեղ ներկայացված է թագավորը իր մարտակառով, շըրշապատված գեղեցիկ զգեստավորված հետիւտն ու հեծյալ մար-

տիկներով: Որսի շները հետապնդում են առյուծների, հովազների, վայրի ձիերի ու ցուլերի: Մեծ արվեստով են կատարված սլացող սև նժույգները, գաղանների լեշը կրծող շները, թփերում թաքնված հորթը, ինչպես նաև եղներ արածացնող հոտաղը: Այստեղ առկա են նաև հովանավոր աստվածներն ու ոգիները:



Նկ. 74. Բրոնզե գոտու բեկորներ Նոր-Արեշի № 3 գամբարանից

Որսի այս ամբողջ տեսարանը կատարված է բարձր արվեստով, ներկված նրբաճաշակ գույներով և, ամենայն իրավամբ, կարող է համարվել Առաջավոր Ասիայի արվեստի լավագույն նմուշներից մեկը, շղիջելով նույնիսկ Եգիպտոսին:

Այս տիպի որմնանակարներ վերջերս հայտնաբերվել են նաև Վանի մոտ, ուրարտական ամրոցներից մեկում:

Սակայն որսի մագիկ տեսարաններ կան նաև ուրարտական արվեստում:

Զակիմ գյուղից (Կարսի մոտ) գտնված մի գոտու բեկորի վրա ոճավորված կենաց ծառերի և շրջանակների խմբերից կազմված լուսատուների շրջապատում պատկերված է որսի տեսարան: Թվում է, որ որսը տեղի է ունենում երկնային աշխարհում և որսորդը ինչ որ աստվածություն է ներկայացնում իրենից՝ ծնկած, լարված նետ

ու աղեղով: Աստվածությունը թիկունքից թևեր ունի: Գոտու ծայրերը՝ նույնպես զարդարված են կենաց ծառի զարդամոտիվով:

Մոտավորապես ճիշտ նույն տիպի մի գոտու բեկոր էլ գտնվել է Անի-պեմզայի դամբարաններից մեկում:

Ի տարբերություն բրոնզեդարյան գոտիների, ուրարտական գոտիների վրա որսորդներն հիմնականում առյուծ և ցուլ են որսում և տարբերվում են իրենց հանդերձանքով ու ժնական տեսքով, մինչդեռ բրոնզեդարյան որսորդները գտնվում են միանգամայն բնապաշտական, մագիկ գործողության մեջ և լրիվ տարբերվում են իրենց հանդերձանքով և դիմակներ կրելու հանգամանքով: Սրանք գեռես մեծ մասամբ ասպավինած են բնության, տարբերի ուժերին, իրենց համարելով նրա մի մասնիկը, շանջատելով իրենց նրանցից, այսինքն տարբերվում էին սոցիալական, տնտեսական վիճակով, անկասկած, գտնվելով գեռես պրիմիտիվ, ցածր կենսամակարդակի վրա: Ուրարտական գոտիների վրա տեսնում ենք բարձրատիճան խավի ներկայացուցիչներին, թագավորական լրիվ հանդերձանքով:

* * *

Քննարկելով ուշ բրոնզեդարյան և ուրարտական գոտիների որսորդական պատկերներն ու նրա հետ կապված զանազան հավատալիքների հարցերը, մ. թ. XIII—VI դարերն ընկած ժամանակաշրջանի կապակցությամբ, պետք է նշել, որ արվեստի այս սյուժեները, նրանց հիմքում ընկած պատկերացումները, հավատալիքները, պաշտամունքը Հայաստանում ծագել են նոր-բարեգարյան և էնեոլիթյան ժամանակներում, մեր թվականությունից առաջ՝ VII—VI հազարամյակներում, գուցե և ավելի վաղ, և հարատել են ամբողջ բրոնզի, երկաթի դարաշրջաններում և հայկական շրջանում: Սրա անհերքելի ապացույցներն են Հայաստանի լեռներում պահպանված ժայռապատկերները:


Նախնագարյան որսորդության հոյակապ պատկերներ են պահպանվել, օրինակ, Գեղամա լեռների ժայռերի վրա, որոնցից մենք կնկարագրենք միայն մի քանիսը:

Մի պատկերում ներկայացված է նետ ու աղեղը ձեռքին որսորդը, որը հետապնդում է երկու եղջերուների (նկ. 75):

Մի այլ պատկերում նետ ու աղեղով զինված որսորդը կանգնած է այծերի շրջապատում: Նրա հետ կա նաև երկու շուն: Բնականաբար որսն ընթանում է շների մասնակցությամբ (նկ. 76):




Նկ. 75. Ժայռապատճեր Գեղամա լեռներից



Նկ. 76. Ժայռապատճեր Գեղամա լեռներից

Այս որսորդի աղեղը նման է առաջին պատկերում կանգնած որսորդի աղեղին: Դրանք նեղ ու երկար ձև ունեն:

Մեկ ուրիշ որսորդ էլ, նույնպիսի նետ ու աղեղով զինված, կանգնած է այծերի ու եղջերուի շրջապատում, նա զենքն ուղղել է իր զիմաց կանգնած այծին (նկ. 77):



Նկ. 77. Ժայռապատկեր Դեղամա լեռներից

Չափաղանց հետաքրքիր է նաև որսի մի այլ տեսարան, որտեղ որսորդը նետահարում է իր զիմավերեւում կանգնած այծին՝ աղեղը զլխից վեր բռնած: Պետք է ենթադրել, որ այծը կանգնած է բարձր տեղում, ժայռի վրա, իսկ որսորդը հարվածում է նրան ցածից՝ ուղղաձիգ դեպի վերև:

Նախնադարյան արվեստի հոյակապ նմուշ կարող է համարվել խորաքանդակ մի այլ կոմպոզիցիա (նկ. 78), ուր որսորդը նետը լարած պատրաստ է արձակելու: Իր առջեւում կանգնած եղջերուի վրա, Որսորդից քիչ ձախ պատկերված է հսկայական մի օձ, որի առկայությունը որսի այս տեսարանում, ինչպես նաև բրոնզե գոտի-

Ների որսորդական տեսարաններում, ենթազրել է տալիս, որ նա համարվել է իմաստության ու բարության խորհրդանիշ:

Այսպիսով, օձը կարծես ուղեկցում է որսորդին, որպես բնության մեջ եղած բոլոր երևույթների, բոլոր կենդանիների ու բույսերի լեզուն հասկացող իմաստուն մի էակ, ինչպես մեզ հազորդում հն հազարամյակներ անցած հայ ժողովրդական հերիաթները:




Նկ. 78. Ժայռապատճեր Գեղամա լեռներից

Գեղամա լեռների որսորդական տեսարաններ ունեցող սյուժեներում աշքի է ընկնում նաև հեծյալ որսորդներից կաղմված կոմպոզիցիան, որում ձիերն իրենց ոնական տուանձնաւկություններով նմանվում են Ստեփանավանում հայտնաբերված բրոնզե (IX—VIII դդ.) գոտու վրա պատկերված ձիերին (Նկ. 79):

Վերը նկարագրված գոտիների և արվեստի այլ հուշարձանների ուսումնասիրությունից կարելի է անել հետևյալ եղբակացությունները:

ա. Հայկական լեռնաշխարհում ուշ բրոնզի և վաղ երկաթի կիրառական արվեստի հուշարձանների վրա հաճախ են հանդիպում

զրաֆիկ կոմպոզիցիոն սյուժեներ՝ որսի մագիկ, ֆանտաստիկ տեսարաններով։ Բայ երկութիւն սրանց հանդես գալը պայմանավորված էր ոչ միայն հին ավանդույթներով, այլ նաև նշված շրջանում որսորդության բուռն վերելքով, որն իր հերթին կապվում էր կիսաքոչվոր անասնապահության զարգացման, նոր արոտավայրերի ու վարելահողերի յուրացման հետ։




Նկ. 79. Ժայռապատճեր Գեղամա լեռներից

Բ. Թեև բոլոր գոտիներն էլ պաշտամունքային նշանակություն ունեն, այնուամենայնիվ բավականաշափ կոնկրետ պատկերացում են տալիս բրոնզեգարյան որսորդության մասին։
Նկարագրված բոլոր գոտիների վրա որսորդների թիվը երկուսից պակաս չէ, իսկ կիրառական այլ առարկաների վրա՝ որսի միենույն տեսարանում հանդիպում են նույնիսկ մի քանի որսորդներ։ Սա նախնադարյան կոլեկտիվ որսի տիպական պատկեր է։ Որսորդների մի մասը հետիւտն է, մյուսը՝ հեծյալ, մի փոքր մասն էլ մարտակառքով։ Հասկանալի է, որ մարտակառքերով որսի էին գնում տոհմացեղային ավագանու ներկայացուցիչները։ Լճաշենի հարուստ կուրգաններից մեկում գտնված մարտակառքի բրոնզե մոդելը ներկայացնում է ձիերով լծված երկանիվ մի սայլ՝ վրան

կանգնած նետաձիգներով, որոնք հետապնդում են կառի առջևից փախչող եղնիկներին:

Դիլիջանի դամբարաններից մեկում գտնված է կավե անոթ, որի վրա պատկերված է ձիերին լծված երկանիվ կառը՝ վրան կանդնած որսորդով, որն իր ձեռքի երկար պարաններով պահում է առջևից փախչող քարայծերին²¹ (նկ. 80):



Նկ. 80. Կավաճան Դիլիջանի դամբարաններից

Մյուս որսորդը կանգնած է հասակով մեկ և իր դիրքով ենթադրել է տալիս, որ դա կենդանիներին կախարդող մի ոգի է:

գ. Որսորդների հիմնական զենքը նետ ու աղեղն է. Նրանք հաճախ կրում են նետերով լի, փայտե կաշվեպատ կապարձներ. Նետերը նման են նույն շրջանի գամբարաններում հայտնարերվածներին. Աղեղները լայնալիմ են, հսկայական. Բացի այս զենքից որոշ որսորդներ զինված են սակրերով, դաշումներով, ունեն վահաններ.

դ. Որսորդների հարուստ զինավառությամբ, զգեստավորմամբ,

²¹ A. A. Martirosyan, Армения в эпоху бронзы и раннего железа, стр. 99, рис. 46.

գիրքով, պատկերի խոշոր շափերով ընդգծվում է նրանց դերը հասարակական կյանքում:

Պիոտրովսկին զրում է, որ Կովկասի շատ մասերում, մինչև վերջերս, որսորդությունը համարվում էր սրբազան զրադաւուր, կապված զանազան ծիսակատարությունների հետ: Արխազների մոտ, օրինակ, որսի գնացածի մասին շեն խոսում և միայն հարկադրված դեպքում ասում են «ինչ-որ» տեղ գնաց, խուսափելով արտասանել «որս» բառը²²:

Նրանք կրում են բրոնզե գոտիներ՝ որսի հաջողությունը ապահովելու և իրենց կյանքն անվտանգ դարձնելու միտումով: Նրանց ճտկավոր կոշիկները վեր ցցած քթեր ունեն, որոնք բնորոշ են Հայաստանի միջին բրոնզեդարյան և խեթական արվեստին: Այս տիպի կոշիկների կավե մոգելներ գտնվել են ուշ բրոնզեդարյան Հայաստանում XI—X դդ. մ. թ. ա. պատկանող դամբարաններում (Զանգեղուր), ինչպես նաև Աղբբեզանի (Մինգելաուր) և Իրանի հնավայրերում:

Որոշ դեպքերում որսորդները կրում են սաղավարտներ՝ հոչալի-Առաջաձորի ուազմիկների դամբարաններում գտնվածների նըման:

Առանձնապես հետաքրքիր է այն հանգամանքը, որ բոլոր որսորդները կրում են կենդանակերպ դիմակներ՝ թոշունի, շան, արջի և այլն:

Հին Արևելքի երկրներում, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհում զեռևս հազարամյակներ առաջ զանազան արարողությունների և ծիսակատարությունների ժամանակ տարածված է եղել դիմակավորման սովորությունը:

Միջներկրական ժողի արևելյան ափին գտնվող Երիքոնի VI—V հազարամյակներին պատկանող շերտերի կացարանների հատակների տակ գտնվել են մարդկային կավե հնագույն դիմակներ:

Սալիկայի շրջանի ցեղային առաջնորդների թաղումներից մեկում հայտնաբերված արծաթե գավաթի վրա պատկերված է աղվեսի պոչեր և ոճավորված խլուրդի դիմակներ հագած մարդկանց երթը՝ որոնք շարժվում են գեղի գահի վրա նստած նույնատիպ էակը:

Անկասկած, ինչպես մահվան և նախնիների պաշտամունքին նվիրված ծիսակատարությունների, այնպես էլ որսորդության վելիքական ժամանակաշրջանում կազմակերպված է առաջնորդությունը:

22 Ե. Բ. Պոտրովսկայ, Խմ. աշխ., էջ 92:

բարերող արարողությունների ու ծեսերի ժամանակ հին բնապաշտ-ները հանդես են եկել կենդանակերպ դիմակներով, ինչպես ցուց են տալիս նկարագրված գոտիների վրա տեղ գտած դիմակավորված որսորդների կերպարները:

Զեյմսը զրում է, որ որսի գուրս գալուց առաջ որսորդները ծիսակատարություն էին մատուցում այնպես, ինչպես Ավստրա-լիայում արունդա ցեղը: Նա մատնանշում է, որ դիմակավորված արարողների նկարները ցույց են տալիս գոյություն ունեցող մի այնպիսի պաշտամունք, որի մեջ որսորդը ծիսակատարությանը մասնակցում էր դրամատիկական ձևով²³:

Հին Հայաստանում դիմակավորման հինավորց տրադիցիան պահպանվել է հայ ժողովրդի թատերական արվեստում և զանա-գան ծիսակատարություններում:

Հայկական միջնադարյան ձեռագրերի վրա պահպանված ման-րանկարչական պատկերներում՝ հրատարակված Ա. Մնացականյա-նի «Հայկական զարդարվեստ» գրքում, Հաճախ ենք հանդիպում դիմակավորված դերասանների²⁴:

Հնում դերասանները պատկերացնելով իրենց առանձին տուե-մակերպ նախնիներին, ինչպես նշում է Հեղինակը, կազմել են բարդ կենդանապատկերներ (6541 ձեռագրի 10ր թերթի վրա պատկերված խիստ բարդ կենդանապատկերը, էջ 950):

Հնայած այդ բոլոր հանգամանքներին, գոտիների վրա պատ-կերված որսորդական տեսարանները ունելիստական չեն, որսի մագիկ արարողություններ ու միստերիաներ են:

Ե. Դրանք որսի, որսորդական արարողությունների ու ծեսերի միստերիալ կոմպլեքս սյուժեներ են՝ ներկայացված ընապաշտական միասնական գաղափարաբանության ֆոնի վրա: Այս արարողու-թյուններն անբակտերի աղերսների մեջ են տարերի զլիավոր ու-ժերի՝ երկրի, ջրի ու արևի հետ: Բոլոր գոտիների վրա բնության այս ուժերը պարտադիր կերպով առկա են, արտահայտված դրանք խորհրդանշող պատկերներով: Մրանցից յուրաքանչյուրը կենսա-կան նշանակություն ուներ հին բնապաշտի՝ երկրագործի, անաս-նապահի, որսորդի կյանքում, ուստի և նրա պատկերացմամբ դրանք հանդես էին գալիս միշտ համատեղ՝ մի ամբողջության ու միասնության մեջ:

23 E. O. James, Prehistoric religion, New-York, 1957, էջ 176—181.

24 Ա. Մնացականյան, Հայկական զարդարվեստ, Երևան, 1951.

Անասնապահությունը, երկրագործությունն ու սրտորդությունն
էլ անխղելիորեն պայմանավորված էին մեկը մյուսով և անհուսա-
լիորեն կախված տարերքի քմահաճույքից:

զ. Այս սյուժեների կրոնա-պաշտամունքային նշանակության
բացահայտումը թեև գժվարին, բայց հասկանալի խնդիր է և դրա
պատճառն այն է, որ քննարկվող բոլոր գոտիներն էլ վերաբերում են
մ.թ.ա. XII—VI դարերին, մի ժամանակաշրջան, երբ տեղի էր ու-
նենում հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը:

ՊՏՎԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ

Նախորդ զլուխներում քննարկված երեք հորիզոնների, արևի, լուսատունների և, ընդհանրապես, տարերքի պաշտամունքը սերտության կապված էր Հայաստանի երկրագործ-անասնապահ բնակչության հիմնական գաղափարաբանության՝ պաղաքերության պաշտամունքի հետ, քանի որ արևը, երկիրն ու ջուրն ամենաառնհրաժշշտ գործոններն էին նյութական արտադրության բարգավաճման ու ծաղկման:

Որպանով այս պաշտամունքներից յուրաքանչյուրը քննարկվել է առանձին-առանձին, ուստի և ներկա զլիսում հարկ չկա կանգ առնելու նրանց մանրամասների վրա և մենք կրավարարվենք միայն ընդգծելով նրանց մասնակցությունը պաղաքերության՝ պաշտամունքում ընդհանրապես:

Ուսումնասիրվող ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանում նախնադարյան հողագործությունն ու անասնապահությունը գտնվում էին բավականաշատ բարձր մակարդակի վրա, ուստի և միանգամայն հասկանալի է պաղաքերության պաշտամունքի լայն ու խոր տարածման երևութը Հայկական լեռնաշխարհում և Արևելքի հարեվան երկրներում:


Պաղաքերության պաշտամունքի հետքերը մեզ են հասել վաղ ժամանակներից: Երկրագործական-անասնապահական նյութական մշակույթի մնացորդներն էլ տանում են մեզ մինչեւ VI—V հազարամյակները:

Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում հայտնաբերված ժայռապատկերներում կանացի բազմաթիվ ֆիգուրներով ըսկիզր են առնում և ձևավորվում այս նույն վաղ ժամանակներում և ավելի ուշ շրջանին պատկանող Երեշ-բլուրի, Քյուլ-թափայի, Ենդավթի, և բազմաթիվ այլ հնավայրերի պեղումներից գտնված կանացի և դրանց հետ անմիջականորեն կապվող կենդանիների

կավե արձանիկները, որոնք ինչպես ստորև կտեսնենք, կապվում են պտղաբերության պաշտամունքի հետ, մարմնավորում այն:

Ուշ բրոնզեդարյան մշակույթի ժամանակաշրջանին պատկանող հոգևոր մշակույթի մնացորդներից պտղաբերության պաշտամունքի ամենանախնական դրսերությունները Կարմիր բլուրի նախառարառական շերտից գտնված կուռքերն են՝ տուֆ քարից պատրաստված, որոնք ուսումնասիրել են համոզիչ մեկնարանել է Հ. Մարտիրոսյանը¹:

Բրոնզեդարյան քարե կուռքերն իրենցից ներկայացնում են կանացի ուժեղ ոճավորված ֆիգուրներ՝ ամրողական խոշոր կոմմանը ֆրագմենտներով, որոնք գտնվել են Հացահատիկի Հորերի կամ կարասների և օջախների կողքին: Մինչև 1962 թ. գտնվածներից մի քանիսն ամրողական են: Դրանցից առաջինը գտնվել է ամրոցի պարսպապատից դեպի Հարավ արևմուտք 70 մ հեռավորության վրա ընկած մի փուռորակի մեջ, որը նախնագարյան և ուրարտական կացարանի մնացորդ էր (նկ. 81):



Նկ. 81. Քարե կուռք Կարմիր բլուրից

Կուռքը իր ներքեի մասում լայն է ու մասսիվ և մեջքի փոխարեն երկու կողմերից թեթև փորվածքներով միանում է զլիսին ու թեերին: Գլուխը ուղղանկյուն ձև ունի և թեերից անշատվում է թեերի կտրվածքներով: Կուռքի թեերն ու զլուխը ծածկված են ամրողության ծառի կամ ծառի ճյուղերի նմանվող փորված զարդամուգություններով:

¹ A. A. Martirosyan, Идолы из Кармир-блура. «Պատմ-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 114—139.

տիվով։ Կուռքը դրված է եղել գետնի վրա ուղղահայաց դիրքով՝ հենված մի մեծ քարի։

Կուռքից 80 սմ հեռավորության վրա գտնվել է հողի մեջ թաղված բավականաշափ մեծ կավանոթի ստորին մասը, նեղ հատակով (15,5 սմ տրամագիծ) և բավական լայն իրանով։ Իրանի կենաբոնական մասը զարդարված է եղել երկու զուգահեռ, ուսուցիկ գոտիներով։

Մինչև 1955 թ. գտնված կուռքերի ֆրագմենտներն իրենց մորֆոլոգիական և ոճական հատկանիշներով շեն տարրերվում նկարագրված կուռքից և կրում են նույնպիսի զարդանախշեր։

Սակայն այս կուռքերից և նրանց ֆրագմենտներից բոլորը շեն, որ զարդարված են բուսական զարդանախշով։ Կան, առհասարակ, զարդ չունեցող կուռքեր։ Այդպիսիներից է 1955 թ. ուրարտական № 44 սենյակի հիմքի վերքում գտնվածը, որը ներկայացնում է կարմրավուն տուֆի մի զանգված՝ երկու կողմերից հարթեցված։ Ներքեփ մասը լայն է ու մասսիվ և վերին ավելի կարմ մասից անջատվում է դարձյալ գոտիկատեղի փորվածքներով, որոնց հետեւանքով կուռքի վերին մասում առաջանում են թերթեր։ զույիշը կոտրված է (նկ. 82)։ Բայ Հ. Մարտիրոսյանի, այն փր զուգահեռներն ունի ավելի վաղ ժամանակներում՝ Քյուպ-Թափայի ու Շենգավթի բնակավայրի արձանիկների մեջ, որոնք նկարագրվածներից տարրերվում են ցայտում զբանորված կրծքերով և ներքին մասում՝ սեռական նշանն արտահայտող փոսիկով։

Կարմիր բլուրի հին բնակավայրում գտնված կուռքի ֆրագմենտներից մի քանիսն էլ ունեն հենց այդպիսի փոսիկներ։

Այժմ հետաքրքիր է, թե ինչ կապ կա կանացի արձանիկների ու նրանց ծածկող ծառերի կամ ծառի ճյուղերի միջև։ Զէ՞ որ շատ դեպքերում էլ կուռքերի ֆրագմենտները՝ ծածկված բուսական այս զարդամոտիվով, թվում է, թե ընդհանրապես իրենցից ճյուղ են ներկայացնում։

Հասկանալի է մի բան, որ ծառը կապված է հողի՝ մայր հողի գաղափարի հետ։ Նախնադարյան մարդու պատկերացմամբ պտղաբերողը կինն էր՝ մայրը։ Քանի որ հողը նույնպես պտղաբերողը՝ ծնողն էր, ուստի կինն ու հողը հավասարապես պտղաբերող էին համարվում։ Այստեղից կինը՝ մայրը և ծառը, որ հողի ծնունդն էր, հանդես էին գալիս որպես մայր հողի գաղափարակիրն ու խորհրդանիշը։

Այդ է պատճառը, որ պտղաբերության մայր աստվածուհին

Հին ժողովուրդների արվեստի մեջ հաճախ պատկերվում է ծառի բնի կամ ճյուղերի հետ միահյուսված, ինչպես բազմաթիվ կրծքեր ունեցող խեթական Մաստվածուհին, որի ոտքերը գտնվում են ծառի արմատների տակ, իսկ ինքն իրենից կենաց ծառ է ներկայացնում:



Նկ. 82. Քարե կուռք Կարմիր ըլուրից

Էրմիտաժում պահվող եղիպտական գործվածքների վրա պատկերված է Դիոնիսոս՝ խաղողի ողկուցզների, այծերի ու սափորի շրջապատում, իսկ ուշ շրջանի ասրկոֆաներից մեկի վրա ներկայացված է եղիպտական մենոնդ և հարություն անող աստված Օսիրիսը, որը կանգնած է անոթից գուրս եկող ծառի ճյուղերի միջև։ Անոթի երկու կողմերում թուլուններ են պատկերված²:

² К. С. Ляпунова, Изображение Диониса на тканях, Труды отдела истории культуры и искусства Востока, III, Л., 1940, табл. VI 1-2, рис. 2.

Պաղեստինյան մայր աստվածուհու արձանիկը ներկայացնում
է կանացի ֆիգուր՝ բարձրացրած ձեռքերի մեջ ծաղիկներ բռնած:

Ուրարտական կնիքներից մեկի վրա պատկերված է կուռք, որը
կարծես, ճյուղերից է պատրաստված, ձեռքերը նույնակես ճյուղերի
են նմանվում: Սրա գոտկատեղը բարակ է, ներքին կիսակլոր մասը
կողքերից շտրիխավորված, գլուխը եռանկյունաձև: Նրա երկու կող-
մերից պատկերված են ծառեր և ֆանտաստիկ էակներ³ (նկ. 83):



Նկ. 83. Կուռքի պատկեր ուրարտական կնիքի վրա

Հայկական պատղարերության մայր աստվածուհի Անահիտը
նույնակես կապվել է բուսականության հետ: Ինչպես վկայում է
Քյումոնը, Սատաղի գաշտում ինքը տեսել է ավազաբարե մեծ սալ,
որի վրա քանդակված էր Անահիտը՝ ձիթենու ճյուղը ձեռքին⁴: Քյու-
մոնի վկայությունը հաստատվում է IV դ. պատմիչ Ազաթանգեղոսի
հետեւյալ տողերով.

Եթրեկ եկն եմուտ ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և
իբրեւ ընդ գինիս մտին՝ հրաման ետ թագաւորն Գրիգորի, զի պսակո
և թաւ սստս ծառոց նուէրս տարցի բազնին Անահատական պատ-
կերին⁵:

Հասկանալի է, որ Անահիտին նվիրաբերվել են նաև ծառի
ճյուղեր ու պսակներ, հանգամանք, որը մատնանշում է Անահիտի՝
իբրեւ պատղարերության աստվածուհու կապը բուսականության հետ:
Հայտնի է, որ Հատուկ անտառներ են նվիրված եղել նրան:

Մայր աստվածուհու և ծառի պաշտամունքի հետ կապված գա-
ղափարախոսությունը շատ երկար է հարատել հայ ժողովրդի մեջ:

Հայկական ձեռագրերում հաճախ են հանդիպում երեխան զբր-
կին բույսերից «ծլող» կամ բուսական ֆոնի վրա հանդես եկող

3 A. A. Խարիստանյան, Նշվ. հոգֆածը, էջ 177:

4 Ա. Մելիք-Փաղայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 55:

5 Ազաթանգեղիս Պատմութիմ հայոց, Բիթլիս, 1914, դիւխ 6, 49, էջ
34—35:

կնոց պատկերներ (ձեռ. 979, նկ. 229ա)⁶: Անկարսկած, հեթանոսական մայր աստվածության և ծառի գաղափարը բրիտաննեության ժամանակ մարմնավորվում է Մարիամ Աստվածածնի կերպարում, սակայն արտահայտման միջոցներն ու պատկերացումները կարելի է ասել, էական փոփոխություններ չեն կրում:

Մայր աստվածուհու կապը բուսականության հետ ընդհանուր է ամբողջ Հին աշխարհի մտայնության համար:

Ե՛վ Առաջավոր Ասիայում և Հին Հայաստանում ու Հռոմում մայր աստվածուհու պաշտամունքը համակցվել է ծառերի և առհասարակ բուսականության պաշտամունքի հետ, որի հիմքում ընկած է հողի-երկրի պտղաբերության ու նրա պաշտամունքի գաղափարը:

Ազգագրական տվյալները հաստատում են այս երևույթի լայն տարածումը և պահպանումը նաև բրիտաննեության գոյության ընթացքում, նույնիսկ մինչև մեր օրերը, աշխարհի շատ երկրներում:

Հին Հռոմում հայտնի է սրբազն ծառի պաշտամունքի հետ կապված դաժան մի օրենք, որի համաձայն սրբազն ծառը, որ համարվում է պտղաբերության աստվածուհու՝ Դիանայի խորհրդանշանը, պահպանվում էր հատուկ քուրմի կողմից: Վերջինս փոխվում էր միայն այն ժամանակ, եթե որևէ մեկը կարողանում էր գաղտագողի կտրել ծառից մի ճյուղ և սպանել քուրմին: Ինչպես նշում է Զ. Ֆրեզերը, այս գործողությունն անկարսկած, կապ ունի մեռնող և հարություն առնող աստվածության գաղափարի հետ⁷:

1966 թ. Ս. Խայանի կողմից թագարենդի ուշ բրոնզեդարյան դամբարաններից մեկում գտնված բրոնզե գոտու վրան ներկայացված են ծառի և մարդու զրաֆիկ ֆիգուրներ, որոնց շափազանց վատ պահպանված ընդհանուր սյուժեն հնարավորություն շի տալիս որոշ շելու նրա կենտրոնում բուսական ոճավորում ունեցող զարդից կազմված շրջանակի մեջ և նրանցից զուրս զանվեղ կենդանիների տեսակները: Բարեբախտաբար պարզ նրեւում են կենաց ծառի պատկերները, որոնցից յուրաքանչյուրի մոտ մի մարդ է կանգնած: Եատ հնարավոր է, որ այս դեպքում ևս մենք գործ ունենք սրբազն համար հնարավոր է, որ այս դեպքում ևս մենք գործ ունենք սրբազն կենաց ծառը պահպանող քուրմի, գուցե և հենց իրեն՝ պտղակամ կենաց ծառը պահպանող քուրմի:

⁶ С. С. Лисицян, Старинные пляски и театральные представления армянского народа, I, Ереван, 1958, табл. CVIII, 3, рис. 4.

⁷ Дж. Фрезер, Золотая ветвь, I, М.—Л., 1931, стр. 16.

⁸ Ս. Խայան, Երկան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական բաերի կատալոգ, պրակ. 2:

բերության աստծո հետ՝ իր խորհրդանիշը հանդիսացող ձառով հանդերձ (նկ. 84):

Սառի և կնոջ նույնացման հետաքրքիր փաստ ենք տեսնում Հնդկական ցեղերի մոտ, որն ըստ երևութիւն գալիս է հինավուրց ժամանակներից. երբ առատ բերք չի ստացվել, աղամարդիկ զնացել են ծառերի մոտ՝ հարաբերություն ունենալու նրանց հետ, որպեսզի բերքն առատ լինի⁹:

Հայերի մոտ մինչև վերջերս էլ պահպանվել են պտղաբերության տոնին նվիրված ծեսեր, որոնց ակունքները հասնում են ուսումնասիրվող և դեռ ավելի վաղ ժամանակները: Դրանցից ամենաբնորոշներն են վարդավառն ու նուրին-նուրինը¹⁰:

Վարդավառը երկրագործական տոն է, կապված պտղաբերության ու առատության պաշտամունքի հետ:

Տոնի նախօրյակին աղջիկների մի խումբ որեւէ ամանի մեջ ցանում են հացահատիկ, որը տոնի օրն արդեն ծլած է լինում: Այս նոր «բերքով» ամանի մեջ խրում են փայտի կտոր՝ զարդարված վարդերով, խնձորներով և մանր վարունգներով: Կեսօրից հետո աղջիկները հանդիսավոր կերպով ամանը դաշտ են տանում, զնում հողի վրա և որեւէ պառավ կնոջ պահպան կանգնեցնում: Այսուհետեւ կանայք ու աղջիկները տղամարդկանց հետ միասին սկսում են զուռնայի նվազի տակ պարել նրա շուրջը: Այս բոլորից հետո սկսում է երգել ու պարել պառավը՝ ամանը զբխին զրած: Երգի մեջ նա վախ է հայտնում, որ եթե ինքը քնի, մարդիկ կարող են փախցընել փայտիկը: Այդ ժամանակ երիտասարդներից մեկը դագանակի ուժեղ հարվածով ամանի միջից պոկում է փայտիկը՝ «ուրախությունը», որի վրա են հարձակվում ամեն կողմից վարդերն ու մրգերը պոկելու համար:

Մեզ թվում է, որ փայտը փախցնելու հանդամանը, ըստ երեւակութիւն գալիս է սրբազան ծառի քուրմի կողմից պահպանվելու և նրանից նյուղ գողանալու սովորությունից: Ծառ հավանական է, որ այսպիսի կամ նման սովորություն էլ գոյություն է ունեցել բրոնզեգարյան Հայաստանում, որը մեզ է հասել ավելի անաղարտ հնագույն ձևով, այն տեսակետից, որ կենաց ծառը նախապես էլ պահպանվելիս է եղել կնոջ կողմից (բրմուհիների):

⁹ Ջ. Փրեզը, նշվ. աշխ., էջ 162:

¹⁰ A. A. Martirosyan, նշվ. հողվածը, էջ 119—121:



Նկ. 84. Բարձրեց զուրբ թափաքանդակ

Վարդավառի տոների այս ծիսակատարությունների ժամանակ սովորություն է եղել պարտադիր կերպով ջրով ցանվելը, որը «մազիկ աղղեցություն» ուներ պաղաքերությունն ապահովելու համար:

Պաղաքերության պաշտամումը հետ է կապված նաև, ինչպես ասացինք, Նուրինը, որը տեղի էր ունենում գարնանը հողագործական աշխատանքները սկսվելու ժամանակի: Այս դեպքում պատրաստվում էր խրտվիլակ, որին հազցնում էին կանացի շորեր: Խրտվիլակը կոչվում էր Նուրին և այդ անունով շատ տարածված էր Հայաստանի տարբեր վայրերում: Սակայն առանձին շրջաններում այն ուներ նաև տարբեր անուններ, ինչպես՝ Զիշի-մամա, Մամաշթիկ, տիկին և այլն: Հ. Ա. Մարտիրոսյանը նշում է, որ Ազաթանգեղոսի մոտ Անահիտը շատ որոշակիորեն կոչվում է տիկին, մայր, ուստի և երկու զեպքում էլ խոսքը «մայր աստվածուհուն» է վերաբերում¹¹:

Նույն հեղինակը գրում է, որ նկարագրված պատկերների բուսական հիմքը, նրանց կանացի հագուստներն ու անունները մատնանշում են այն փաստը, որ խոսքը վերաբերում է աստվածության կոմպլեքսային արտահայտությանը, որոնց նմանությունը կարմիրը լուրջան բարե կուռքերին արտահայտվում է հենց ամենաէական էլեմենտներում: Այս էլեմենտների հիմքում, զրում է նա,— ընկած է կնոջ և բնության բուսական ուժերի վերաբերյալ կոմպլեքսային պատկերացումը, որի ծագումը պետք է տանել մատրիարխատի ժամանակաշրջանը՝ կապված նախնադարյան հողագործության զարգացման հետ:

Հայաստանում Նուրինի փոխարեն եղել է նաև տղամարդու խրտվիլակ, որ կոչվել է Ախալսն կամ Ակլատիզ: Մրանց խրտվիլակը նույնպես փայտե առանցք ունի, որի ներքենի ծայրին հազցնում են սոխի մի մեծ զլուխ՝ զարդարված յոթ տարբեր զույների փետուրներով: Մեծ պասի ժամանակ սրանք կախված են լինում թուրատներում: Տոնի վերջին օրը մարդիկ Ախալսնը դաշտ են զուրս բերում, ծեծում են նրան փայտերով և ի վերջո զցում ջուրը:

Այս տոնի ժամանակ նույնպես սերմեր են դուրս բերվում, որում կնոջը մեծ դեր է ուրվում¹²:

Բայտ Մարտիրոսյանի, Կարմիր ըլուրի բարե կուռքերը արտահայտում են զարգացման հենց այն աստիճանը, երբ բուսական

11 Ազաթանգեղիայ..., նշվ. աշխ., գլ. 6, 53, էջ 36, 59, էջ 38 և այն:

12 A. A. Martirosyan, նշվ. հոդ ուշը. էջ 121.

աստվածությունները հետդիման ընդունում են կանացի անտրոպո-
մորֆ տեսք և միենույն ժամանակ պահպանում են դեռ ճղները,
պատկերելով նրանց նախնական էությունը: Կովտի հենց այդ նախ-
նական էությամբ էլ պայմանավորված է հատուկ ամաններում հա-
ցահատիկ անեցնելը, որոնք բերվում են պտղաբերության տոների
ու ծեսերի ժամանակի¹³:

Ազգագրական և հնագիտական նյութի հիման վրա ապացուց-
վում է, որ սե փայլեցված ամանը՝ գտնված կուռքի կողքին և նրա
շրջակայրի բազմաթիվ նման ամանները սովորական օգտագործ-
ման համար չեն, այլ կուլտային են՝ «սրբազն», և որպես զու-
գահեռներ մատնանշվում են շումերական (Իշտար), եգիպտական
(Օսիրիս-Իզիդա), ասորական և շատ այլ աստվածներ, որոնք ներ-
կայացված են ամաններով նրանցից գուրս ծլած բույսերի տերե-
ներով կամ զանազան հացահատիկային խուրձերով¹⁴:

Այստեղ պետք է հիշատակել նաև այն փաստը, որ եգիպտական
շատ պատկերներում տեսնում ենք կենաց ծառի, կնոջ և ջրով լըց-
ված սափորի համակցությունը: Կինը կանգնած է ծառի բնի փոխա-
րեն, իսկ նրա ձեռքի բռնած սափորից ջուր է հոսում:

Երբեմն ծառի ձյուղերի արանքից գուրս է գալիս կնոջ ձեռք՝
սափոր բռնած, որից նույնպես ջուր է թափվում:

Անկասկած, սրանք պտղաբերության խորհրդանիշներ են, բայ-
սորում կինը բուսականության, այսինքն հողի հետ առնշվելուց կամ
այն խորհրդանշելուց բացի, հավասարապես կապված է եղել նաև
ջրի գաղափարի հետ: Այսպիսի ծառերից մեկի միջից էլ դուրս է
եկել արևը: Այսպիսով, եգիպտական այս պատկերներում կոմպ-
լեքսված են պտղաբերության համար անհրաժեշտ բոլոր գործոննե-
րը՝ արև—ջուր—հող (բույս—կին):

Հայաստանում նման կուռքներ գտնվել են նաև 1966 թ. Մեծա-
մորի պեղումների ժամանակ:

Դրանք երեքն են՝ մեկը մյուսից փոքր: Իրենց շափսերով զերա-
զանցում են բլուրի կուռքերին և պատրաստված են ու թե ուսուցիչ:
այլ կավից: Սրանք իրենց կառուցվածքով և ոճական հատկանիշնե-
րով պարզապես կրկնում են Կարմիր բլուրի կուռքը, միայն այն
տարրերությամբ, որ հարթ են, առանց բուսական զարդամոտիվի
և թեսերի ու զյուի միջև՝ ուսերի վրա, ունեն գոգավորություններ:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, էջ 121, 122:

Սրանք դրված են մեծ զոհասեղանի եղբին, որի կենտրոնում մեծ կրակարան է պատրաստված: Զոհասեղանի առջևում դրված է եղի նույնպիսի կլոր ակոսներ կրող ուղղանկյուն նեղ պատվանդան: Այդ կլոր փոսիկները կը կնվաճ են նաև հատակի վրա: Հնարավոր է, որ այստեղ լցվել է զոհաբերված կենդանու արյունը: Մելարտը Զաթալ-Հույսուսում պեղված պտղաբերության պաշտամունքին նվիրված տաճարներում, որտեղ պատերի վրա քանդակված են ցուլերի կամ եզների ու լինֆ գլուխներ՝ որպես պտղաբերության աստվածության խորհրդաներ, ենթագրում է, որ յուրաքանչյուր զիսի տակ դրված է եղել աման՝ արյունը մեջը կաթեցնելու համար¹⁵:

Ելնելով Կարմիր բլուրի և Մեծամորի կուռքերի այդպիսի նմանությունից, կարող ենք ասել, որ Մեծամորի կուռքերն իրենց զոհասեղանով հանդերձ, անկասկած, պտղաբերության պաշտամունքին նվիրված սրբավայր են ներկայացրել, որտեղ ժամանակին տեղի են ունեցել պտղաբերությանը նվիրված կրոնական ծեսեր ու արարություններ:

Սակայն, կարելի է ենթադրել նաև, որ իրար հետեւից շարված այս երեք կուռքերը տղամարդու, կնոջ ու երեխայի գաղափարն արտահայտող ոճավորված ֆիգուրներ են, ելնելով նրանց դնալով փոքրացող ծավալներից: Նման աստվածության զաղափարը հարազատ էր ողջ Հին Արևելքին, ուշ ժամանակներում՝ նաև քրիստոնեությանը:

Հայաստանում Կարմիր բլուրի և Մեծամորի կուռքերի համար զուղահեռներ շատ ունենք: Դրանք, ինչպես ցույց է տալիս Հ. Ա. Մարտիրոսյանը, գտնվում են Հայաստանի տարրեր շրջաններում և նրա սահմաններից դուրս: Բավական մոտ զուղահեռ է էգեյան շրջանում գտնված կուռքի մի արձանիկ, որը վերադրվում է Պերսիականներին և թվագրվում մ. թ. ա. 2000 թվականով¹⁶:

Հ. Մարտիրոսյանը նշում է, որ բլուրյան կուռքերին շատ նման են նաև Անդրեսի կողմից հրատարակված կանացի կուռքերի ֆրագմենտները, որոնք իրենց մանրաւասներով մեծ նմանություն ունեն մեր կուռքերին: Դրանք բարե ուղղանկյուն զլուխներ են՝ նրանց վրա փորված հյուղերով, նման մեր կուռքերի զարդամուտիներին: Մի դեպքում էլ հոնքերի վերին աղեղները և քիթը արտահայտված են իրրե ծառ:


¹⁵ J. Mellaart, Excavations at Çatal Hüyük, 1962, Anatolian studies, N XIII, 1963.

¹⁶ A. A. Martirosyan, Կազմակերպություն, նշան, հոդվածը, նկ. 2:

էշնունից գտնված կանացի արձանիկը իր ընդհանուր տեսքով
նույնպես բավական մոտ է մեր կուռքերին և նրանցից տարրերվում
է միայն ձեռքերի դիրքով:

Ցյուզերի իմաստ կրող նախշեր ունեցող կանացի կուռքեր են
հայտնաբերվել նաև Միջին Ասիայում, որոնք բավական մոտ են
մեր կուռքերին:

Կանացի կուռքերի հետ մեկտեղ Կարմիր բլուրում գտնվել են
նաև ֆալիկ արձաններ, որոնք նույնպես պտղաբերության պաշտա-
մունքի արտահայտություն են և միևնույն ժամանակ հաստատում
են վերը արտահայտված այն կարծիքը, որ նախնադարյան հողա-
գործների պատկերացմամբ մայր աստվածուհիները կամ նրանց
փոխարինող ծառերն ունեցել են իրենց արական գուգակիցը,
որոնց խորհրդանիշներն են հենց այս արձանները և որոնք հավա-
սարապես պաշտվել են նրանց կողմից (նկ. 85):



Նկ. 85. Ֆալիկ արձաններ կարմիր բլուրից

Անահիտի մեհյանի մոտ Քյումոն եղբայրները հնագիտական
հետախուզությունների ժամանակ հայտնաբերել են կավե բոլորակ-

ներ, որոնք տեղացի թուրքերի բացատրության համաձայն ու Անդիշտի Հեթանոսական հին պաշտամունքից մնացած ֆալեր են:

Ճիշտ այդպիսի բոլորակներ գտնվել են նաև Ասորիքում՝ Իշտարի տաճարում, որոնց վրա կաղապարված են մարդու կյանքի ինտիմ տեսարաններ: Բայց զիտնականների կարծիքի, դրանք ժառայել են որպես վարձագին այդ տաճարի հիերոդուլ կանանց:

Հայտնի է նաև, որ երեխա չունեցող կանայք օտար տղամարդկանց հետ սեռական ազատ կյանք էին վարում Անահիտի մեջանի շուրջը և հղիանալով, այդ ունակությունը վերագրում էին Անահիտին՝ որպես ծննդաբերության, պատղաբերության, արգասավորության աստվածուհու:

Այս աստվածությունը, զրում է Կ. Մելիք-Փաշայանը, Հարատեսել է մինչև XIX դարը: Ֆալոսների հետ է կտորված նաև այս սովորույթը, որի համաձայն ծառայության մտնող քուրմերը զոհաբերում էին իրենց առնականությունը (Կիրելայի տաճարում): Ստրարոնը վկայում է, որ Անահիտին ծառայելու համար նվիրաբերվում էին կանայք և տղամարդիկ¹⁷:

Պետք է շեշտել նաև այն փաստը, որ ֆալոսաձև արձանները կարմիր բլուրում գտնվել են գամբարաններում: Անկասկած այս երեսույթը կապված է պատղաբերության աստվածության մեռնելու և հարություն առնելու հատկության հետ, ինչպես ուս զիտվում է Հին Արևելքում Թամուզի (Միջագետրում), Օսիրիսի (Եգիպտոս), Քրիստոսի (Հունաստան) կապակցությամբ:

Հին Հայաստանում այդպիսի աստվածություն էր Արան՝ գարնան ու պատղաբերության աստվածը¹⁸: Պաղաբերության աստծո այս հատկությունն էլ արտահայտված է նաև Ակլատիզի ի վերջո չուրը զցելու պահին:

Ֆալոսաձև արձանների պաշտամունքի հետքերը որպես պատղաբերության պաշտամունքի խորհրդանշաններ, պահպանվել են Հայաստանում շատ երկար ժամանակ և մտել քրիստոնեական տոների մեջ: Այսպես, «Սուրբ Սարգսի» տոների ժամանակ թիվում էին ֆալոսաձև կարկանդակներ, որոնք երիտասարդներին ամուսնական երջանիկ կյանք զուշակող երազներ էին քրում:

Հ. Մարտիրոսյանը մատնանշում է նաև այն փաստը, որ Հին Հույնների պատկերացմամբ Հոդի մեջ զցված ֆալաձև կարկանդակ-

17 Կ. Մելիք-Փաշայան, Անահիտ զիցունու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 53-55.

18 Ա. Վ. Մատիկեան, Արայ Գեղեցիկ, Վիեննա, 1930; Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1945:

ները նպաստում էին հոգի պտղաբերությանը: Սա բավական մոտ է հնդիկ տղամարդկանց կողմից ժառը բեղմնավորելու երևույթին:

Յալիկ արձաններ, բացի Կարմիր բլուրից, գտնվել են Հայաստանի տարբեր շրջաններում (Զվարթնոց, Մեծամոր, Վահագնի, Պատաշար և այլն) և, ինչպես նշվում է զրականության մեջ, Հայաստանի շատ շրջաններում էլ (Կարս, Զանգեզուր, Նոր Բայազետ, Ախալքալաք, Բորշալու, Շուշի, Գանձակ) գտնվում են մեծ լեռ բարեր, որոնց վրա բանդակված են ֆալոսաձև ուլիեֆ պատկերներ և որոնք հնում, անկասկած, մեծ դեր են խաղացել պտղաբերության պաշտամունքի մեջ:

Հայաստանում պտղաբերության ժեսերի ժամանակ օգտագործվել են նաև ֆալածե մանր ֆիգուրներ, ինչպիսին է Խորամ քաղաքում Ուլուխանլու (այժմ Մասիս կայարան)՝ Զուլֆա երկաթգծի շինարարական աշխատանքների ժամանակ գետնի մակերևույթից 2 մ խորության վրա գտնված սպիտակ կավից պատրաստված ֆալը, որն ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի հիշեցնում է Հին Հայաստանում Դիմոնիսի տոնակատարության ժամանակ զամբյուղների մեջ մրգերի հետ միասին դրվող ֆալերը¹⁹:

Բացի կանացի խիստ ոճավորված կուռքերից և ֆալոսաձև արձաններից, գտնվել են նաև արդեն մարդկային դեմք ունեցող կուռքեր, որոնք անմիջապես հաջորդում կամ որոշ դեպքերում էլ պարզապես ժամանակակից են վերը նկարագրված անդեմք կուռքերին:

Դրանցից մեկը գտնվել է «անվանի ուրարտացու» տան վկատակների մեջ՝ 1956 թ. և իրենից ներկայացնում է Հարթ, պրիմիտիվ քանդակագործության մի հոյակապ նմուշ: Գլուխը կոնաձև է և միայն մի կողմից է մշակված: Նրա բարձր ճակատի վրա դարձյալ գտնում ենք բոււական զարդանախշը՝ արտահայտված զուգահեռ փորված գծերի միջոցով: Քիթը միանում է ճակատին: Քթի երկու կողմերում խոռոչների միջոցով արտահայտված են օվալաձև ականջները, որոնցից կարծեն օղեր են կախված:

Այս արձանիկով ավարտվում է Կարմիր բլուրի հին բնակավայրի անտրոպոմորֆ արձանիկների ամրող շարքը և սկսվում է Հարթ ու կլոր քանդակների խումբը, որ մեծ նշանակություն ունի վաղ Հայկական ժամանակաշրջանի ժողովրդական արվեստի ուսումնասիրության գործում: Նկարագրված արձանիկի զուգահեռնե-

19 Հ. Ա. Մարտիրոսյան, Նշվ. հոդվածը, էջ 129:

ըր ծաղում են Կարմիր բլուրից ոչ հեռու գտնվող Աղջաղալա գյուղից, ինչպես նաև Դվինի շրջակայքից և այլն:

Սրանք նույնպես մարդկային դեմքերով քանդակներ են, որոնք աշխատ են ընկնում իրենց արխաիկությամբ, կատարման ձևով ու ֆակտուրայով: Բոլոր դեպքերում մշակված են արձանիկների միայն երեսի կողմը՝ ճակատը բարձրաբանված է, իսկ դիմի հետեւ կողմը անմշակ է թողնված:

Աղջաղալայում 1936 թ. (ինվ. 386) գտնված կուռքը իր դեմքի մանրամասներով շատ նման է տանվանի ուրարտացուատան կուռքին, սակայն տարբերություն է նրանից կղակի վրա գտնված կիսաշրջաններով, զիմի վերնի մասի նեղացումով և առհասարակ, դեմքի լրիվ անջատումով բարի զանգվածից:

Աղջաղալայից գտնված երկրորդ քանդակը (1936, ինվ. 40) ուշ ուրարտական և վաղ հայկական ժամանակաշրջանին պատկանող ծավալային՝ կլոր քանդակագործության պրիմիտիվ մի նմուշ է: Սա կրում է յուրահատուկ զիմաստրը:

Այս արձանների դեմքերի քանդակման եղանակով է արված նաև Շամշագինի նավուր գյուղի «Պակեր» կոչվող վայրում հայտնարերված չորս զիմանի կուռքը: Դա ներկայացնում է թույլ արտահայտված բառանիստ մի հիմք, որոնցից յուրաքանչյուրի վրա քանդակված է կուռքի ռելիեֆ զիմանը:

Սրան շատ նման մի բաղմաղնմ կուռք էլ գտնվում է Գորիսի թանգարանում:

Հետաքրքիր է նաև Մեծամորում գտնված դիցուհու կամ մայր աստվածուհու կավե արձանիկը, որի զիմից ուսերին են իշնում վարսերը (նկ. 86):

Արձանիկների երկրորդ ենթախումբը ըստ Հ. Մարտիրոսյանի, ավելի ուշ է, կատարելագործված, ծագում է Դվինի շրջակայքից (Լուսակերտ, 1925, ինվ. 1006, ներքին Դվին, 1925, 84/դ, 412/դ) և ավարտում իրենցով ուսումնասիրվող հուշարձանների զարգացման որոշակի շրջանը:

Սրանցից մեկը իր շափերով, դեմքի մանրամասների կատարմամբ և այլ հատկանիշներով շատ նման է առաջին ենթախմբի կուռքերին, սակայն վիզ ունի, որի հետեւանքով էլ զերծ է կոնաձև լինելուց: Այս հանգամանքը հենց ամենաընորոշն է երկրորդ ենթախմբի կուռքերի համար:

Մյուս երկու արձանները գլխներին կրում են գդակներ, որոնք ընորոշ են նախաքիստուններական շրջանին: Այդպիսի զիմաստրերը ընորոշ են հայ-կոմագենյան քանդակագործության վերջին դարերին

և Արտաշեսյան դինաստիայի թագավորներին (մինչև I դ. մ. թ.)՝ արտահայտված դրամների վրա:


Կարմիր բլուրի քարե կուռքերից ավելի ուշ, հավանաբար վաղ հայկական ժամանակաշրջանին է պատկանում Աղրբեշանի իսմայիլի շրջանի Սուլթանաքենդ գյուղում գտնված կուզ կավե արձանիկը, որը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում (ինվ. 2260): Այն իր ոճական հատկանիշներով կարմիր բլուրի կուռքերի գարգացման տեսակն է, սակայն նույնությամբ կրկնում է նրանց մարմնի առանձին մասերի ձևերը: Սրա իրանի ներքենի մասը՝ զոտկատեղից ցած հաստ ու լայն է, և կուռքերից տարբերվում է նրանով, որ ունի ստքեր, որոնցից մեկը կոտրված



Նկ. 88. Կանայի արձանիկ Մեծամորից

է: Մեջքը լայն է ու կարճ, արտահայտված է թևերի տակից արված կոր կտրվածքով: Թևերը տարածված են ու կարճ: Գլուխը ուղղանկյուն է, բլուրի կուռքերի նման ուղիղ, առանց վզից անշատվելու: Արձանիկի վրա ցայտուն արտահայտված են կրծքերը: Թևերի վրա կրում է յոթական ապարանջան, իսկ վիզը զարդարված է մանյակներով: Գլխին ճակատակալ ունի, որի տակից կախված են

երկար խոպոպները։ Մազերի երկու փունջ աշքերի խոռոշների տակով կիսաշրջաններ կազմելով անցնում են ռելիեֆ արտահայտված քթի վրա։ Անկասկած այս արձանիկը որպես մայր աստվածուհի, պաշտպնդ է տեղաբնիկ հողագործների կողմից (նկ. 87)։




Նկ. 87. Կանացի կավե արձանիկ Սուլթանքենդ գյուղից

Քարե և կավե արձանիկների հետ մեկտեղ Հայաստանի տարբեր շրջաններում գտնվել են նաև բրոնզից ձուլված կանացի և տղամարդու արձանիկներ, որոնք իրենց ատրիբուտների շնորհիվ կարող են համարվել պտղաբերության պաշտամունքին նվիրված հուշարձաններ։ Բերենք մի քանի նմուշներ, որոնք պահպում են Հայաստանի պատմության պետական թանգարանում։

Մրանցից մեկը տղամարդու մերկ ֆիգուր է՝ մորուքով ու ցայտուն արտահայտված քթով։ Այն զվարին կրում է բարձր, վերին մա-

սում լայնացող գգակ, թերը տարածած է ճիշտ այնպես, ինչպես վերը նկարագրված կավե մայր աստվածութիւն։ Սրա վրա արտահայտված է առնական նշանը և, որ հետաքրքրական է՝ տղամարդ լինելով հանդերձ, ունի ցայտուն արտահայտված կրծքեր (նկ. 88₁)։ Մյուս արձանիկը զլխարկ չունի, նույնպես մերկ է։ Սրա վրա սակայն բացակայում են կրծքերը (նկ. 88₂)։



Նկ. 88. Տղամարդու բրոնզե արձանիկներ

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում նոյեմբերյանի շըրջանից ծագող բրոնզե արձանիկները։ Սրանցից մի քանիսը կանացի մերկ ֆիգուրներ են։ Նրանք մեկ ձեռքում բռնել են եղջյուր, մյուսով՝ սափոր։ Բոլորն էլ վզներին կրում են մանյակներ և ունեն մազերի գեղեցիկ սանրվածք։

Հին Հունաստանում և Հռոմում եղջյուրը համարվել է առատության ու պտղաբերության սիմվոլ։ Հասկանալի է, որ մեր արձանիկների ձեռքում բռնած եղջյուրն ու սափորը նույն իմաստն են արտահայտում, ուստի և կանացի այս մերկ ֆիգուրները ներկայացնում են բերքի, առատության ու պտղաբերության աստվածութիւնների խորհրդանիշներ։

Վրաստանում՝ Ստեփանծմինդայի գանձում պտղաբերության պաշտամունքին պատեկանող այլ առարկաների հետ մեկտեղ գտնվել են փոքր շափի եղջյուրներ, որոնք, անկասկած, սիմվոլիկ նշանակություն ունեն։ Այս գանձում կան նաև տղամարդկանց մերկ, ֆալլիկ ֆիգուրներ, որոնք կանգնած են մեծ մասամբ եղջերուի վրա՝ եղջյուրների միջև։ Սրանցից մեկը մեր արձանիկի պես դիմին գդակ ունի, վզին մանյակ է կրում, իսկ մեջքին՝ գոտի²⁰։

²⁰ III. Я. Амираниашвили, История грузинского искусства, М., 1950 (глава «Железный век»).

Հասկանալի է, որ պտղաբերությունը մարմնավորող տղամարդը կապված է եղջերուի՝ նույնակես պտղաբերության գաղափարը կրող ու խորհրդանշող էակի հետ:

Ծիշտ է, Հայաստանում այս տիպի արձանիկներ չեն հայտնաբերվել, սակայն Ս. Եսայանի²¹ կողմից իջևանի շրջանի Ենոքավանգութիւն Ն 14 դամբարանից գտնված բրոնզե գոտու վրա պատկերված սյուժեն հաստատում է մեր կարծիքն այն մասին, որ եղջերուն սերուրեն կապված է եղել պտղաբերության պաշտամունքի հետ:

Գոտու վրա պատկերված է որսի մի տեսարան, որը, շնորհիվ սակրածե վերջավորություններ ունեցող խաչի, բաժանվում է երկու մասի: Խաչից ձախ ընկած մասում պատկերված են երկու ձի՝ վըզներից կախված կերի տոպրակներով, որոնց միջև կանգնած է վահանով ու նիզակով զինված որսորդը: Մրանց առջևում հասակով մեկ կանգնած է մի այլ որսորդ՝ զինված նետ ու աղեղով: Այսուհետեւ պատկերված է բառածի, երկանիվ մի սայլ՝ ձեռքին վահան բռնած մարդկային ֆիգուրով: Վահանի կողքին թռչուն է պատկերված: Սայլին լծված շորս ձիերի առջևում կանգնած է նույն հսկայամարմին որսորդը՝ նետ ու աղեղը ձեռքին և երեք նետեր, որոնք իրենց սլաքներով դեպի ներքեւ են ուղղված: Այս բոլորի առջևում, ի վերջո կանգնած է մի մայր եղջերու՝ իր ձագերով:

Խաչից աջ կրկնվում են նույն ֆիգուրները, այլ կերպ տասձ, գործող անձինք նույնն են, սակայն գործողությունները՝ տարբեր: Չմոռանանք նշնի, որ աջ մասում եղած բոլոր պատկերները՝ ձախին հակառակ ուղղությամբ են շարժվում:

Որսի այս տեսարանը եզրափակված է երկշարք վազող պարույրներով (նկ. 89):

Ընդունելով Եսայանի այն մեկնաբանությունը, որ որսի ընդհանուր տեսարանը պտղաբերության պաշտամունքի գաղափար է արտահայտում, ուզում ենք սակայն, ավելի մանրամասն, կանուանել մի քանի հանգամանքների վրա:

Սկսներ պատկերի ձախ մասից: Այստեղ աղեղնավոր որսորդն, ի տարրերություն երկու ձիերի միջև և կառքի վրա կանգնած մարդկանցից, շատ ավելի բարձրահասակ է և զիսին ճառագայթավոր թագ է կրում: Նրա արձակած մի նետը գետին է ընկել, մյուսը դեռ աղեղի վրա է: Այս դյուցազնի ճառագայթավոր թագը ենթադրել է

21 С. А. Есаян, Погребение № 14 астхаблурского могильника, «Պատմա-բանագիրական հանդես», № 1, 1967.

տալիս, որ նա կարող էր իրենից արեի աստվածություն ներկայացնել, մինչդեռ երկու ավելի փոքրամարմին ֆիգուրները, Սսայանի ենթադրությամբ, կարող են նույնիսկ կին լինել, քանի որ ի տարրերություն թագակիր որսորդի, նրանք զուրկ են տղամարդկային հատկանիշներից:

Վզներից կախված կերի տոպրակներ ունեցող ձիերը, հավանաբար, հանգստի վիճակում են և ըստ երևույթին, հարկ եղած դեպքում, փոխարինել են կառքին լծված հոգնած ձիերին:

Սսայանի ուշադրությունը գրավել է թռչունի՝ թագակիր որսորդի հանգստ ընդունած մարտական դիրքը և կառքի վրա կանգնած մարդու նրա գործողությունը վահանով կասեցնելու հանգամանը: Հաջորդ վայրկյանում թագակիր որսորդի, անկասկած, եղչերուի վրա արձակած երեք նետերը դարձյալ վայր են ընկել, իսկ աղեղի վրա լարված նեաը չի խոցել նրան:

Ինչպես երևում է, հիմնական որս անողը թագակիր դյուցազնէ, իսկ մյուս երկուսը, պարզապես օգնողի գերում են:

Ենելով այն փաստից, որ որսորդի արձակած բոլոր նետերը շեն հասնում իրենց նպատակին և թռչունն ու վահանով մարդը կանխում են նրան, Սսայանը ճիշտ կերպով նկատում է, որ այստեղ պատղարերության իմաստը կրող մի տեսարան է, ըստ որում, մեր կարծիքով, պատղարերողը և մայր աստվածության խորհրդանիշն ու գաղափարակիրը եղչերուն է իր ձագով, մինչդեռ հովանավորողի գերում հանդես է զալիս ինքը՝ արեի աստվածությունը՝ իր բոլոր ատրիբուտներով:

Աշ մասում պատկերն այլ է: Այստեղ արդեն գործ ունենք ոեալ որսի ու որսորդության հովանավորության իմաստն արտահայտող տեսարանի հետ: Արեի աստվածության արձակած նետն այստեղ հասել է իր նպատակին՝ խոցել է առջեից զնացող եղչերուին, որը, ամենայն հավանականությամբ, արու է: Կառքի վրա կանգնած մարդկային ֆիգուրը վահանի փոխարեն ձեռքում մտրակ կամ պարան է բռնել՝ ձիերին խթանելու և եղչերուին որսալու համար: Թռչունը նույնպես ոչ թե զիմագրում ու կանխում է որսորդի գործողությունը, այլ ուղեկցում է նրան:

Այս գոտու վրա պատկերված մարդկային ֆիգուրները և ձիերը շատ նման են Մորդանի կողմից Ախթալայում գտած զոտու ձիերին, ինչպես և նետ ու աղեղով զինված որսորդին, որը զգեստավորված էր ճիշտ նույն ձևով և զիսին կրում էր նույնպիսի դիմակ, որը առյուծի գլուխ է հիշեցնում, որովհետեւ շափազանց նման է Վրաս-

տանում և Կորանում հայտնաբերված գոտիների վրա պատկերված առյուծների զլուխներին: Եվ այս հանդամանքը, ինչպես նաև թոշնի առկայությունը համոզում է մեզ, որ որսորդն ինքը արեւ աստվածն է: Նա կրում է բարձր ճտկավոր կոշիկներ, իսկ կրծքի վրա՝ երկու շրջանաձև գնդիկներ:

Շատ հնարավոր է, որ Քալաքենդում Բելքի կողմից հայտնաբերված բրոնզե գոտու վրա պատկերված են վազող եղջերուներ²², որոնք իրենց եղջյուրների տարրերությամբ կարող են երկու տեսակի վերագրվել: Հավանական է, որ սրանք նույնպես պտղաբերության ու որսի խորհրդանիշներ են: Նրանց զիմավերում կետերից արված արեկի սկավառակն է, ճառագայթների իմաստ ունեցող բազմաթիվ շառավիզներով: Այս գոտին նույնպես եղջերված է եռաշարք վազող պարույրներով և ոճավորված թոշունի զարդանախշով (նկ. 89):

Մտեփանձմինդայի գանձում մարդկային արձանների հետ միասին գտնվել են նաև կենդանիների՝ երջերուի, ոչխարի, եղան և շան արձանիկներ: Բացի սրանցից գեկորի սիստեմում, ինչպես նշում է Շ. Յա. Ամիրանաշվիլին, մեծ տեղ է զրավում նաև օձը:

Մարդկային աստվածությունների հետ մնկտեղ այս կենդանիների արձանիկների առկայությունը պատահականություն չի կարող լինել:

Նույն երկույթը տեսնում ենք նաև նոյեմբերյանի գանձում, որտեղ կանացի ու տղամարդու արձանիկների հետ միասին գտնվել են նաև տարրեր կենդանիների արձանիկներ: Անկասկած, սրանք կապված են պտղաբերության պաշտամունքի հետ: Հայտնի է, որ Հայաստանի տարրեր վայրերում մինչև վերջին ժամանակներս, սովորություն է եղել նոր տարվա գիշերը զանազան կենդանիների ձև ունեցող փոքր կարկանդակներ պատրաստել և դրանք ուտեցնել իրենց անառուներին, որպեսզի եկող նոր տարում բերքն ու պտղաբերությունն ավելի առատ լինին²³:

Քայլով կենդանիներին, պետք է նկատել, որ ամենից առավել պտղաբերության գաղափարի հետ կապվում է ցուլը (եղ, կով):

22 Վիրխով, Կովկասի տեղը քաղաքակրթության պատմության մեջ, «Ազգագրական հանդես», № 1, 1895, տախտակ 1:

23 Ա. Օղաբաշյան, Քիստոնեական աժմանորի հետ կապված որոշ ժիշտկան վերապրուիներ, ԳԱ «Տեղեկագիր», № 3, 1965, էջ 91—97:

Fig. 30. Раковина симметрическая, рисунок



Fig. 30. Раковина симметрическая, рисунок



Ամպրոպի ու կայծակի աստվածության արտահայտությունը լինելով, նա միևնույն ժամանակ մարմնավորում է պտղաբերությունը:

Այդպիսին է, օրինակ, Հին Միջագետքի Նինգիրսուն՝ ամպրոպի ու կայծակի աստվածը, որի պատվին կազաշի տերը՝ Գուղեան, կառուցում է նոր տաճար և հրավիրում Նինգիրսուին այնտեղ, որպեսզի նա «բարձրացնի ջուրը ջրանցքներում ու առուներում, որպեսզի բարգավաճի ցորենը թագավորի արտերում»: Եվ Նինգիրսուն մտնում է տաճար «ոռնացող փոթորկի նման, Տիգրիսի հեղեղման նման ու առատություն է տալիս երկրին: Տաճարում նա տեղավորվում է տիրուհի Բառի՝ կովի հետ միասին և Գուղեան նվիրատվություններ է մատուցում նրանց²⁴:

Պտղաբերության խեթական աստված Թելեպինուսը հանդիսանում է ամպրոպի աստծո որդին, իսկ Կամրուշեպան՝ նրա մայրը, ծովի անձնավորումը²⁵:

Վանա լճի հյուսիսային ափին, Աղիլջեաղում, ուրարտական ամրոցի ավերված պատերին բազալտ քարերի վրա պահպանվել են ուղիեֆ քանդակներ, որոնցից մեկը ներկայացնում է, ինչպես հեղինակն է նշում, աստծո կամ թագավորի ֆիգուր, կանգնած եղան վրա՝ գեմքով ուղղված դեսպի երկու եռաժանիները: Վերջիններս տեղավորված են մեկը մյուսի վրա: Այս ֆիգուրը քանդակված է հինգ բեկորների վրա, վեցերորդ բեկորը ցույց է տալիս, որ կանգնած է եղել նաև մի այլ մարդկային ֆիգուր, նույնպես դեմքը դեպի եռաժանին գարձրած:

Անկասկած, մարդկային այս ֆիգուրը՝ կանգնած եղան մեջքին, ներկայացնում է ամպրոպ-կայծակի Թելջերա աստծուն, իսկ եռաժանի կոշեցյալ քանդակը ոչ այլ ինչ է, եթե ոչ կենաց ծառի խորհրդանիշը, որը հաճախ է հանդիպում ուրարտական զարդամութիվներում ու բրոնզի գոտիների վրա²⁶ (նկ. 91):

Հասկանալի է, որ բոլոր դեպքերում ամպրոպի ու կայծակի այս աստվածները պաղաբերության համար ամենաանհրաժեշտ դոր-

24 Н. Д. Флітнер. Земледельческие культуры древней Месопотамии в свете последних раскопок, «Труды Отд. истории культуры и искусства Востока», Л., 1930.

25 Г. Капанцян, Об одном хеттском мифе в связи с журавлем и божеством весны, «Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան, 1944».

26 C. A. Burney and G. R. J. Lawson, Urartian reliefs at Adilcevaz on lake Van, and a rock relief from the Karasu near Birecik, Anatolia studies, vol. 8, 1958, 12 211—218:

ծոններից մեկի՝ երկնային ջրի մարմնավորողներն են, ուստի և մի-
անգամայն հասկանալի է նրանց ակտիւ մասնակցությունն ու դերը:



Նկ. 91. Թեյշերայի բարձրաքանակ Աղիչնողից

Հենց այս իմաստով էլ Հայաստանում գտնվող պիշապարե-
րը, որոնք ինչպես արդեն ասվեց, ամպրոպի ու կայծակի պաշտա-
մունքին նվիրված կոթողներ են, միևնույն ժամանակ մարմնավո-
րում են նաև պաղարերության պաշտամունքը: Նրանց վրա պատ-

Ցերված տարրեր կենդանիները՝ թռչուններն, օձերը, ցուլը կամ խոյը, որոնց բերաններից հաճախ ջուր է թափվում, ամպրոպի աստծո տարրեր դրսնորումները լինելով հանգերձ, միևնույն ժամանակ խորհրդանշում են երկիրը, երկինքն ու ծովը (ջուրը), որոնք հավասարապես անհրաժեշտ գործոններ են պաշտպանության զարգացման համար:

Այս առումով էլ միշտ են նշում Գ. Ղափանցյանը և Բ. Պիոտրովսկին, որ այս քարակոթողները պատկանում են նաև պաշտպանության պաշտամունքին²⁷:

Ամպրոպի ու կայծակի մեկ այլ խորհրդանիշը հանդիսացող այժմ հաճախ հանդես է գալիք պաշտպանության պաշտամունքն արտահայտող մոտիվներում: Դա հատկապես նկատելի է կենաց ժառի և նրա մոտ կանգնած այծերի պատկերներում, որոնք տեղ են գտել ոչ միայն բրոնզեդարյան, այլև ուրարտական և նույնիսկ միջնադարյան Հայաստանի խեցեղենի վրա: Արգիշտիխիսինիլի քաղաքի պեղումների ժամանակ հայտնաբերվել է ուրարտական կարմիր ամանի մի բեկոր, որի վրա գոտիով կրկնվում է նույն տեսարանը՝ կենաց ժառի և նրա երկու կողմերում հետեւ ոտքերի վրա կանգնած այծերի և առյուծների պատկերներով: Զափազանց հետաքրքիր է, որ ընդունված կենաց ժառի և նրա երկու կողմերից կանգնած (հաճախ ետեւ ոտքերի վրա) այծերի փոխարեն Ուզարիտում գտնված փղոսկրե թիթեղի (պլաստինկայի) վրա (II հազ. մ. թ. ա), որն ըստ երեսութիւն ամանի խոսք է եղել, կենաց ժառի փոխարեն պատկերված է կանացի ֆիգուր (մայր աստվածունու), որը յուրաքանչյուր ձեռքում բռնել է մի փունջ խոտ, կերակրելով իր երկու կողմերում ետեւ ոտքերի վրա կանգնած այծերին: Այս փաստն ամբապնդում է վերը արտահայտած մեր կարծիքը կնոջ ու ժառի հավասարազության, պաշտպանության պաշտամունքում մեկը մյուսին հավասարաշափ փոխարինելու մասին²⁸:


Պաշտպանության գաղափարն են արտահայտում Շամիրամի կրոմիեխների շուրջանակի դասավորված քարերի վրա մայր այծի և ուզերի փորագիր պատկերները:

Հաղթատում, զամքարաններից մեկում գտնված գոտու բեկորի վրա երեք շարքով պատկերված են այծեր: Ելնելով գոտու զարդարացափ փոխարինելու մասին²⁹:

27 Գ. Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, «Արայի քարակոթողները» գլուխը:

28 Н. Д. Фиштнер, Культура и искусство Двуречья, стр. 196.

նախշերից, որոնք կազմված են եռանկյունիներից՝ լեռներից և ծառի ոճավորումից ստացված զարդանախշից, որը մենք ունենք թաղարենդից գտնված գոտու վրա, պետք է ենթադրել, որ այստեղ ևս արտահայտված է նույն պաղաբերության գաղափարը (նկ. 92),



Նկ. 92. Բրոնզե գոտու թեկորներ Հաղբատից

Պաղաբերության աստված Թամուզի նվիրական անասունը այժմ էր²⁹:

Հայերի մոտ գոյություն ունեցող այն սովորույթը, որ երաշտի ժամանակ այժմի խրտվիլակ են պատրաստում և տնե-տուն ման ածելով, վրան չուր լցնում, իր հիմքում կրում է այժմ՝ երկնային ջուր առաջացնողի գաղափարը, որը և անմիջականորեն արտահայտվում է պաղաբերության պաշտամունքի մեջ³⁰:

Չափաղանց հետաքրքիր է նաև ուսումնասիրվող ժամանակաշրջանում գոյություն ունեցող այն պատկերացումը, որի համաձայն շատ վաղ ժամանակներից սկսած, մայր աստվածուհու ամուսինը կամ արական գուղակիցը ցուլ է եղել:

29 Ա. Վ. Մատիկեան, Արայ Գեղեցիկ, Վիճակ, 1930, էջ 182:

30 Գ. Մրուանձանց, Մանաւայ, կ. Պոլիս, 1876, էջ 113:

Այսպիսին էր օրինակ՝ հին փյունիկյան մեռնող և հարությունառնող աստված Բաալը, որն իր կնոջ՝ պատգարերության աստվածունքի Անաթին (որը նրա քույրն էր միենույն ժամանակ), պատղի բերելիս ընդունում էր ցուլի կերպարանք: Ըստ որում, պետք է նշել, որ Բաալը առասպելում սլանում է ամպերի վրայով և Անաթը լվացվում է նրա առաջացրած անձրևի ջրով: Սա, անկասկած, ամպրոպի աստծու հատկությունն է:

Անաթը նրա համար ծնում է ցուլ³¹:

Ինչպես նշում է իր գրքում Յ. Մարինզերը, դանուրյան հոգածշակները պաշտում էին նաև մայր աստվածունու արական զուգակցին, որին նըանք իրենց արենլյան ժամանակակիցների նման ցուլի կերպարանքով էին սրատկերացնում³²:

Զաթալ-Հույուկում Մելարտի պեղած տաճարներում կան պատղաբերության պաշտամունքին նվիրված դահլիճներ, որոնց պատերը զարդարված են եղել ուղինքի բանդակներով: Դրանք եղների կամ ցուլերի զլուխներ են: Ինչպես նշում է Հեղինակը, արու աստվածք հանդես է եկել որպես եղան կամ արջառի զլուխ: Պատերի վրա պահպել են նաև, ինչպես ննթաղրում է Մելարտը, կնոջ կրծքի և եղան եղջյուրի կոմբինացիան, որոնք, անկասկած, արտահայտում են պատղաբերության պաշտամունքը, խորհրդանշելով մայր աստվածունուն և նրա արական զուգակցին³³:

Այս երեսությը զիտվում է նաև Հին Հայաստանում՝ կապված Անահիտ մայր աստվածունու պաշտամունքի հետ:

Խաչիկ Սամվելյանը բերում է հին պատմապիրների վկայություններն այդ կապակցությամբ, ըստ որոնց Անահիտի մեհյանի շուրջը՝ դաշտերում արածում էին բազմաթիվ ցուլերի սրբազն նախիրներ, որոնք համարվում էին նվիրաբերված այդ աստվածունուն: Նրանք իրենց կաշվի վրա կրում էին դիցունու նշանը և դանը վում էին տարուի ներբու, շնորհիվ Անահիտի, որը համարվում էր «ցլապահ» զիցունի:

Անկասկած, Անահիտի՝ ցուլի հետ առնշվելու հանգամանքը զալիս է շատ վաղ ժամանակներից, կապված հենց այն պատկերացման հետ, որ մայր աստվածունու արական զուգակիցը ցուլ է եղել:

³¹ E. O. James, The cult of Mother goddess, London, 1959, էջ 75.

³² J. Maringer, The gods of Prehistoric Man, New-York, 1960, էջ 198.

³³ J. Mellaart, Earliest civilizations of the Near East, London, 1965, էջ 93—97.

Ուստի և միանդամայն հասկանալի է եղան (ցուլի) պաշտամունքի լայն տարածումը Հայկական լեռնաշխարհում, որի խոսուն ապացույցներն են տարբեր վայրերում (Սևանի ավազանում, Շեյբան դաղում և այլուր) պեղված եղների գամբարանները:

Ուրմիա լճի Ղարաբաղ կոչված թերակղզում, Ղուշչի գյուղի ավերակների փորվածքներում 1905 թ. պատահարար գտնվել է եղան մումիացած կմախը³⁴:

Վերջապես եղան պաշտամունքին են վերաբերում Լճաշենի հարուստ կուրզաններում³⁵, Զանգեզուրում³⁶, Էսոնային Ղարաբաղում³⁷ և Հայաստանի այլ վայրերում գտնված եղների կամ ցուլերի բրոնզե արձանիկները, որոնք, իհարկե, կապված են հողադործական կուլտերի, պաղարերության պաշտամունքի հետ:

Այս ամենի հիման վրա կարելի է անել այն հետեւթյունը, որ պաղարերության պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում գոյություն է ունեցել երկի նոր քարեղարյան ժամանակներից, կապված հողի մշակման, ինչպես նաև անասնապահության ու որսորդության զարգացման հետ:

Արևի, ջրի, լուսատուների, տարերքի պաշտամունքը ի վերջո հանգեցնում է պաղարերության պաշտամունքին, վաստորեն դառնալով առանձին կոնկրետ մոմենտներ պաղարերության ընդհանուր պաշտամունքում:

Բացի այս, պաղարերության պաշտամունքում մեծ տեղ է հատկացվում հողին, որը խորհրդանշվում է ծառով: Մարդ փաստումն նույն գաղափարն է կրում, ինչ և կինը, որպես ծննդարերող, այդ իսկ պատճառով, հաճախ մայր աստվածունին կամ նույնիսկ պաղարերության արական սեռի աստվածները պատկերվում էին ծառի կամ ծառի ձյուղի առկայությամբ, հաճախ էլ նրանից դուրս գալով:

Պաղարերության աստվածները միևնույն ժամանակ ունեն մեռնելու և հարություն առնելու հատկություն, կապված տարեկան բերքի հավաքման և նոր բերքի անման հետ:

Պաղարերության աստվածները միևնույն ժամանակ որսորդներ են ու հովիվներ: Նրանք հովանավորում են անասուններին:

34 Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, 1 հատ. Երևան, 1931, էջ 177:

35 Ա. Օ. Միացականյան, Древние новозки из курганов бронзового века на побережье оз. Севан, СА, № 2, 1960, рис. 16.

36 Ա. Ա. Մարտիրոսյան, Կըֆ. աշխ., ող. XIV.

37 Կ. Խ. Կոշինարեա, Կըֆ. հողվածք, էջ 139, նկ. 3, 5:

Պաղարերության աստվածները փաստորնն իրենց մեջ խռացնում են արեկի, ամպրոպի, լուսատուների աստվածությունների շատ հատկանիշներ:

Պաղարերության պաշտամունքին նվիրված շատ ժիստկատարություններ ու հավատալիքներ պահպանվել են հայ ժողովրդի մեջ նաև քրիստոնեության մուտքից հետո և հարատեսել նույնիսկ մինչև մեր օրերը: Անկասկած զբանք արտաքնապես աղավազվել են, կորցրել իրենց հիմնական իմաստը, սակայն իրենց արմատներով համում են հազարամյակների խորքը, հիմքում ունենալով վերը նկարագրված երևոյթները:

* * *

Ինչպես տեսանք, աշխատության մեջ նկարագրված նյութն ընդգրկում է զերազանցապես մ. թ. ա. XIII—VIII դարերի միջև ընկած ժամանակահատվածը: Մի շրջան, որի հիմնական առանձնահատկությունը հայ ժողովրդի կազմավորման ընթացքի խորացումն էր, նրա նյութական ու հոգեոր մշակույթի ձևավորման պրոցեսը:

Մ. թ. ա. II հազարամյակի վերջերին և I հազարամյակում նախահայկական փոքրիկ իշխանություններ են երեսմ Հայկական լեռնաշխարհի տարրեր մասներում. որոշ գիտնականների կարծիքով, այդպիսի խմբեր են տեղափոխվում նույնիսկ Արարատյան դաշտավայր: Հայաստանի բրոնզեդարյան տեղաբնիկները սովորում են հայերենը, բայց միաժամանակ պահպանում իրենց մշակույթը, հավատալիքներն ու կրոնը, որը և ընկած է հայ հեթանոսական պաշտամունքի հիմքում:

Հայաստանի բրոնզեդարյան և հեթանոս հայերի գաղափարաբանությունն ու կրոնը բխում են մեկ միասնական ակունքից և եթե նրա ակունքները բրոնզեդարյան տրադիցիոն մշակույթի խորքերումն են, ապա բանալին հայ հեթանոսական գաղափարաբանության մեջ է, որի հարշալի թեկորները պահպանվել են ժողովրդական մտածողության խորին ծալքերում: Հանելուկների, առասպելների, հերիաթների, հայ հերոսագետի մեջ: Հեթանոսական ժամանակների մասին հետաքրքիր տեղեկություններ են պահպանվել վաղ ֆեոդալական շրջանի պատմիչների երկերում, հատկապես Ե. Կողբացու, Խորենացու, Աղաթանգեղոսի, Շիրակացու, Վանական վարդապետի և այլոց մոտ:

Վ դարի նշանագոր գաղափարախոս Եղիկ Կողբացու «Եղծ աղանդոց» երկում մենք գտնում ենք ընախոսական գաղափարա-

բանության պատկերավոր նկարագրություններ, որոնք ուղղակի կապվում են բրոնզեղարյան բնակիչների մտայնության հետ: Առանձնապես պատկերավոր է երեք հորիզոնների նախասկզբնական դադափարը, որ ցայտուն կերպով արտահայտված է վերը քննարկված արվեստի առարկաների վրա:

«Եւ երկինք, ասեն, որշափի ի վեր են՝ դոյնչափի ի խոնարհ են, և դոյնչափի յամենայն կողմանց շուրջ զերկրաւ, և զերկիրս շուրջ շուր պատէ, և զջուրն և զերկիր՝ օդ, և զօդն և զջուր և զերկիր՝ հուրբ³⁸:

Հին գրականությունը լի է այսպիսի հատվածներով, որոնք մեզ տանում են զեպի Հայաստանի նախահայկական՝ սուբարի-խուրրիտական հոգևոր մշակույթի հարուստ գանձարանը, ուրեմն նաև հին արևելյան զեղեցիկ ու երիներանդ աշխարհը: Ամենից առաջ այստեղ պետք է փնտրել մեր հին մշակույթի ակունքները և նրանից հետո միայն հնդեվրոպական ժողովուրդների ու ժամանակների մեջ:

38 Եղբնիայ վարդ. Կողբացոյ, Էջմ. աշխ., էջ 140:

Թ Ա Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Ն Ե Ր Ա Ծ Ա Ռ Ո Ւ Խ	5
Կոսմիկական պատկերացումները ուշ բրոնզեդարյան Հայաստանում	24
Արևի պաշտամունքի հետքերը	44
Երկնային լուսատումների պաշտամունքը	70
Տարերքի պաշտամունքը	89
Հայաստանի բրոնզե գոտիների որսորդական տեսարանները	115
Պաղարերության պաշտամունքը	142

ՀԱՅՄԻԿ ՌԱՖԱԵԼՈՎԻ ԽՈՐԱՅԵԼԱՆ
ԱՅՄԻԿ ՐԱՓԱԵԼՈՎԻ ԽԾՐԱԵԼՅԱՆ

ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆ ՈՒ ՀԱՎԱՏԱԿԻՔԸ ՈՒՇ ԹՐՈՂՁԵՒՄՐՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ. ճնազիտուրյան և ազգագրարյան
ինստիտուտի գիտական խորենի ուղարկմամբ



Պատ. խմբագիր Հ. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Հրատ. խմբագիր Ա. Հ. ԾԱՎՈՎԱՅՐԱՆ
Նկարիչ Հ. Ն. ԳՈՐՅԱՆԱՎՅԱՆ
Տպի. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԱՆՅԱՆ
Մրցարիչ Կ. Խ. ԱՄԻՒԹԻՈՅԱՆՅԱՆ

Վ. 00070 ԽՀԽ 1360 Հրատ. 3769 Պատվեր 841 Տպարանակ 2000
Համեմատ է արտադրության 25/VII 1972 թ., առողջապահ է տպագրության 24/VII 1973 թ., տպագր 10,75 մամուչ, հրատ. 8,27 մամուչ, բունք

№ 1, 60×90/₁₆, Գիրք 72 կոտ:
Հայկական ՍՍՀ ԳԱ Բրատարակցության տպարան,
Երևան, Բարեկամության 24

Գիւլ 72 կող.

ՀԱՅԿԱՆԱՆ ՍՈՅ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1973

ԳԱԱ Քիմիարաբ գիտ. գուայ



220051164

A-51164